

Bodleian Libraries
UNIVERSITY OF OXFORD

This book is part of the collection held by the Bodleian Libraries
and scanned by Google, Inc. for the Google Books Library Project.

For more information see:

http://www.bodleian.ox.ac.uk/dbooks

BY NC SA

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial-
ShareAlike 2.0 UK: England & Wales (CC BY-NC-SA 2.0) licence.

~~G. 1. D. 27~~

Indian Institute, Oxford.

THE MALAN LIBRARY
PRESENTED
BY THE REV. S. C. MALAN, D.D.,
VICAR OF BROADWINDSOR,
January, 1885.

62. C. 27

Arm. d. 547

NEW DICTION

ARMENIAN-ENGL H

BY

REV. MATTHIAS BEDROSSIAN M. M.

D. D.

> « *Tous les autres auteurs peuvent aspirer à la louange ; les Lexicographes ne peuvent aspirer qu'à échapper aux reproches* ».
>
> ANDRIEUX

VENICE
S. LAZARUS ARMENIAN ACADEMY
1875–79

... Դժուարին թուի ինձ հայ լեզուն որ յերկուս ազգս բաժանի, — ի գրոց և յաշխարհիկն —, այլ ոչ անյաղթելի, որպէս յուսամս. յառաջ դիմեցից...։ Ճոխ է բարբառս, և առատապէս փոխատրեսցէ զվաստակս յուսումն նորին տքնելոց ։

ԼՈՐՏ ՊԱՅՐՆ

Nor

ՆՈՐ ԲԱՌԳԻՐՔ

ՀԱՅ-ԱՆԳԼԻԱՐԷՆ

REV. S. C. MALAN BROADWINDSOR

NEW DICTIONARY

ARMENIAN-ENGLISH

Nor Parakirk

ՆՈՐ ԲԱՌԳԻՐՔ

Haï Ankliarên

ՀԱՅ-ԱՆԳԼԻԱՐԷՆ

Ի

Հ. ՄԱՏԱԹԵԱՅ Վ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

Մ. Մ.

> «Այլուամ ամենայն մատենագրէ մարթ է ակն ունել դրուատեաց. այլ որոյ Բառագրայօրինէն՝ շատ է և զերծ յեպերանացն ձաղու»։
>
> ԱՆՏՐԻԷՈՅ

ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
ՌՅԻԴ—ԻԸ

DEDICATED

TO

GWENDOLEN

WIFE OF JOHN

THIRD MARQUESS OF BUTE

BY WHOSE AID

THIS WORK FOR A TIME SUSPENDED

WAS CARRIED TO COMPLETION

ԱՌ ՀԱՆԴԻՊՈՂՍ

Ուսումն բազմութեան լեզուաց վնասել վնասէ արդարև յըստակութեան լեզուի ազգի միոյ, այլ բազում անգամ և ընդարձակէ զսահմանս մտաց ազգին, յաճախէ զնորանոր դարձուածս, զազդու և զգեղեցիկ ոճս մուծանէ նորոգ և ճոխացուցանէ զայն։ Անդստին ի վաղուց հայկական լեզուս մեր հանդիպեալ է միշտ ճոխ և ընտիր լեզուաց, յորոց բազում ինչ ամբարեալ է գանձս, որպիսի ոմանք են՝ Յոյն, Ասորի և Լատին բարբառքն. որք ճարտարութեամբ թարգմանչաց մերոց հնոց և նորոց՝ նոր իմն գրեթէ ասպարէզ բացեալ են հայ բարբառոյս և ընդարձակեալ զոլորտս գաղափարաց նորա՝ իւրեանց նրբին և գողտր փափկութեամբն։ Եթէ ոչ նոյնպիսի, թերեւս ոչ յոյժ նուազ օգտութիւնս բերցեն ի գաղափարս մեր և նոր արդի լեզուք, որ այժմ եւրոպականքն յորջորջին, առաւել ծանօթք մերայոց գոգցես ամենեցուն, մանաւանդ որք գաղթականութեամբ բնակեն ի կողմանս պետութեանց եւրոպացւոց, և ընդ նոսա ելանեն և մտանեն յիրս տուրեւառիկս վաճառաց։ Ո՛րչափ արդարև շահս չգործեաց մեզ գալլիականն բարբառ, որ այսչափ ամք են՝ զի փութով և ջանիւ ուսեալ է ի հայ ազգէն, մինչև սոսկականք իսկ և ռամիկ մարդիկն չթողուն ի ձեռանէ զքերականութիւնս գալլիարէն լեզուի, և փոքր ի շատէ հասկանան և բարբառին ի նոյն լեզու։ Նմին բաղդի հանդիպեալ է կամ հանդիպեսցի տակաւ և անգլիականն բարբառ. թէպէտ ոչ նոյնպէս՝ որպէս զգալլիացին՝ դիւրին և հեշտ իցէ յուսումն, — քանզի դժուարութիւն հնչմանց թերևս վհատեցուսցէ զոմանս —. սակայն պանծալի ճոխութիւն նորա, որ ոչ սակաւ յորդորէ զբաղումն յուսումն նորին, յընթեռնուլ զմատեանս նոցա զքերթողականս և զհմտականս, այլ և անհրաժեշտ կարևորութիւն այնր ակն յայտնի երևի այժմ որոց ի վաճառաշահութեան և ի գրագրութեան արուեստս թարթափիցեն, կամ յայլ զինչ և իցէ տեսակս ճարտարութեանց, եթէ ձեռագործականքն իցեն, եթէ փաստաբանիցն ուսումն և եթէ գեղեցիկ դպրութիւնքն ։

Վկայեսցէ և կարևորութեան այսր լեզուի և ընդարձակութիւն գաղթականութեանցն՝ զոր ընդ իւրեւ գրաւեալ ունի անգլիականն պետութիւն. Թող ի բաց զայնոսիկ՝ որ բուն իսկ ի քաղաքս Մեծին Բրիտանիոյ բնակեալն իցեն, յիշեսցուք նեթ զնոսա՝ որ արտաքոյ այնր սահմանաց, պանդխտեալ նժդեհին ի Հնդկային աշխարհէ՝ ուսումնասէր Հայք՝ և համբակք և արք կատարեալք, որ ցանկացողք միշտ լեալ են ի պանդխտութեան անդ իւրեանց հայրենական լեզուի, և յիշեն ըղձմամբ զանունս և զլեզուս ՀԱՅ ։ Աւաղ զի մնեալ թուին բազում անգամ յոճ լեզուի նոցա քան եթէ յիւրեանց բնիկ ազգային բարբառս ։ Այլ զի մի իսպառ անգլիականացեալ կորուսցեն զհայրենի իւրեանց շնորհս լեզուին, գործածութիւն հմուտ բառագրոց կարևոր է յոյժ այնպիսեաց ։ Նուիրական իմն պարտս համարիմք մեզ՝ մերովսանն ընուլ զիղձս և զփափաք նոցա, նոքօք և այլոցն ամենեցուն ուսումնատենչ հայասիրաց, մերովս այսու հրատարակմամբ. և յուսամք զի յօգուտ ի վար արկեալ՝ պիտանի լիցի նոցա և առիթ յառաջադէմ զարգացման ։ Եւ յայսպիսի աշխատութիւն, եթէ չիցեմք առաջինք, սակայն և ոչ կամիմք զվերջին ունել տեղիս. ի յորդորել զայլս յուսումն և ի գիտութիւն ընտիր և ճոխագոյն լեզուաց ։

Եղև մեզ և ա՛յլ կէտ նպատակի յաշխատութեանս յայսմիկ, զի և բանասէրք և հմուտք անգլիացիք, որ փափաքենն ուսանել զհայ բարբառ, ունիցին առձեռն իւրեանց դիւրամատոյց և օգտակար իմն գործի, որով և դիւրաւ իմանայցեն և ընթեռնուցուն զմեր մատենագիրս ։ Քանզի ոչ սակաւ և առ նոսա տարածեալ է ուսումն և փափաք ուսանելոյ զհայերէն բարբառս մեր ։ Եւ ահա այսու երկոքումբք ևս պիտանի կարիցեմք լինել, մերայոցս՝ ի զարգացումն անգլիական լեզուի, և անգլիացւոց՝ սիրելի և ցանկալի յորդորել զհայկականս բարբառ ։

Յետ ամաց ինչ հրատարակելոյ երկրորդ տպագրութեամբ զԱնգլիարէն-Հայ Բառգիրս Աւգերեան Հ. Յ. Վարդապետի մերոյ, — յոր ոչ սակաւ աշխատ եղաք յաւելմամբ, ջնջմամբ, և որչափ մարթն էր՝ ուղղելով զբառս —, ընծայեմք ահա ի լոյս և զայս ՆՈՐ ՀԱՅ-ԱՆԳԼԻԱՐԷՆ ։

Նախկինն Հայ-Անգլիարէն Բառգիրք, երկասիրեալ ի նմին վաստակասէր Ուխտիս վարդապետէ՝ աջակցութեամբ անգլիացի Ճոն Պրէնտ ասպետի (տպ. 1825), թէպէտև արժանաւոր եղև մեծի ընդունելութեան ի ժամանակին յանգլիացւոց և ի համազգեաց, այլ յետ կիսովն չափ դարու ըստ ծաղկել մատենագրութեան՝ և փոփոխմունս մեծամեծս տակաւ կարեւոր թուեցաւ յաւելուլ ի նոյն, եթէ ի բառս եւ եթէ յոճս բանից։ Զայս զգացեալ բազմաց ոչ միայն ի կրօնակից եղբարց, այլ և յԱզգայնոց՝ մեծաթախանձանօք խնդրէին զնոյն միւսանգամ ի լոյս ընծայել ճոխագոյն բառիւք և ոճովք. զորս հաճել կամեցեալ՝ ձեռն արկաք յայս գործ տարժանական՝ աշխատ լեալ զցայգ և զցերեկ։

Առ այս զառաջինն զհետ չոգաք փոքր ի շատէ հին Բառագրոց Աւգերեան Վ. այլ յընթացս անդ գործոյս տեսեալ զի ոչ էր բաւական այնու միայն լնուլ զփափաք խնդրողացն, — քանզի բազում ինչ ջնջել և յաւելուլ հարկ լինէր, — փոփոխեցաք ամենևին զոճ բառագրոցս, և ընտրեալ կալաք մեզ զայլս յարգի բառագրոց եւրոպականաց. որպէս յայտնի երևի այս յառաջին թերթս, յորս պակասէ ճոխութիւն վերջնոցն։

Եւ քանզի առաւել քան զչափ ստուարանայր մատեանս, զամենայն փոյթ ի մէջ առաք՝ զի մի անհեթեթ իմն լիցի գիրս և անտանելի և դժուարատար ի հասարակաց կիրառութիւն. վասն որոյ, փոխանակ երկրորդելոյ ընդ վայր՝ ա. զհայ բառս որ ի տողագլուխս, բ. զտողադիր զանգլիարէնսն, և գ. զառաջին մասնիկս բարդ անուանց երկաքանչիւր լեզուաց, ի գործ ածաք զգծիկդ (—) հորիզոնական։ Այսպէս իմա. ա. բ. կարագ butter; թարմ —, fresh —. փոխանակ երկրորդելոյ յանպէտս զկարագ և զbutter բառսն։ գ. Մեծաբան magniloquent; −հոգի magnanimous; −պանծ boastful; −րգեմ, −րեմ to respect; −ւոր, −փոր, −քիթ, և այլն, և այլն. փոխանակ գրելոյ մի առ մի ուրոյն ի տողագլուխս Մեծաբան, Մեծահոգի, Մեծապանծ, Մեծարգեմ, Մեծարեմ, և այլն, և այսպէս խորշեցաք ի հնդապատկելոյ, տասնապատկելոյ և հարիւրապատկելոյ ի զուր ամենևին զմի և զնոյն Մեծա մասնիկն։

Ըստ նմին օրինակի ի բաց թողաք և զսեռականս բառից յանգելոց՝

ա. ի թիւն, որպէս բնութիւն. որոյ սեռականն է միշտ թեան, այս է բնութեան. բ. ի գոյն, սեռ. գունի, գունից, բազմագոյն, −գունի, −գունից. գ. ի ան, սեռ. ի, աց, բնակարան, −ի, −աց. դ. ի անք, սեռ. անաց, բամբասանք, −անաց. ե. ի ումն, սեռ. ման, գլորումն, −ման, որպէս և յոգն. ուղղ. գլորմունք, սեռ. −մանց. զ. ի կից, սեռ. կցի, կցաց, դատակից, −կցի, −կցաց. է. ի ուհի, սեռ. ուհւոյ, ուհեաց, երանուհի, −ուհւոյ, −ուհեաց. ը. ի իչ, սեռ. չի, չաց, զարթուցիչ, −ցչի, ցչաց. թ. ի ող, սեռ. ղի, ղաց, երգող, −ղի, −ղաց. ժ. ի ղէն, սեռ. ղինի, ղինաց, ընչեղէն, −ղինի, −ղինաց. ժա. ի որ, սեռ. րի, րաց, թագաւոր, −րի, −րաց. ժբ. ի կան, սեռ. ի, աց, ժողովական, -ի, -աց, ԺԳ. ի այնի, սեռ. այնոյ, այնոց, իւրայնի, -այնոյ, -այնոց. ԺԴ. ի ելի և ալի, սեռ. լւոյ, լեաց, լսելի, -լւոյ, -լեաց և բանալի, -լւոյ, -լեաց. ԺԵ. ի ենի և անի, սեռ. նւոյ, նեաց, Նռնենի, -նւոյ, -նեաց և ականի, -նւոյ, -նեաց. ԺԶ. ի ոց, սեռ. ի, աց, խնկանոց, -ի, -աց:

Նշանակելով զսեռականս ամենայն արմատ բառից, դիւրին եղև մեզ յապաւել և զսեռականս ածականաց կազմելոց յարմատոց անտի. զոր օրինակ. ածականքն բարդեալք միով յարմատոցս միտ, ծին, գէտ, և այլն, որպէս ծանրամիտ, պտղածին, բանագէտ, ունին զսեռ. վերջնոյ արմատոյն. այս է միտ, մտի, մտաց, ծին, ծնի, ից, գէտ, գիտի, գիտաց: — Զնոյն իմանալ արժան է և զբարդ գոյականաց, ևս և զբայից. զայսոցիկ վերջնոցս ի բաց բարձաք յաճախ զկատարեալ ժամանակն, որպէս. փոխանակ գրելոյ Մեղմացուցանեմ, ցուցի, թողաք զցուցի կրկնութիւնն, որ է կատարեալ ցուցանեմ բային: — Զեդաք և ոչ զածականաբար վարեալ սեռականս անցեալ ժամանակաց բայից, անփոփոխ յանգելով միշտ ելոյ, ելոց, որպէս, օրհնեալ, -ելոյ, -ելոց: — Ի սեռականս յանգեալս յ'ի յեզական և յ' ից կամ աց ի յոգնական, վասն ոչ կրկնելոյ հանդէպ ամենայն բառից երկիցս ի, ից կամ աց, բարձաք զեզ. թողլով միայն զյոգն. զոր օրինակ, փոխանակ դնելոյ, բալ, ի, ից, մուրհակ, ի, աց, եդաք՝ բալ, ից, մուրհակ, աց: — Զնոյն իմա և զայլոց ամենայն սեռականաց յանգելոց ի ոյ, ոց. ու, ուց. եղան, եղանց. որպէս, աթոռ, ոյ, ոց. արջ, ու, ուց. բաղեղն, եղան, եղանց:

Զանգլիարէն բառս ըստ այլ և այլ նշանակութեանց հայոյն կարգեցաք. յորս զնոյնանիշսն որոշեցաք ստորակիտիւ (,), և ըզտարբերութիւնս նշանակութեանց՝ մերթ միջակիտիւ և ստորակիտիւ միանգամայն (;), և մերթ կրկին կիտիւ (:) ուրանօր կարի իմն տարբեր էին նշանակութիւնքն:

Ի հայ բառսն՝ զհետ գնացաք ըստ կարի մերոյս Առձեռն Բառարանի (Բ տպ. 1865), ծաղկաքաղ արարեալ գրեա թէ զհամօրէն ընտիր բառս մատենագրաց մերոց, ի բաց պարուրելով զումպէտսն և զանսովորս և զխորթս և զբազմութիւն բարդ բառից՝ զորոց զնշանակութիւնս դիւրին իցէ և օտարի ումեք իմաստասիրել յարմատոց անտի: Եւ փոխանակ այնոցիկ աստղանիշ (*) եդաք բազում բառս ռամկականս կամ գաւառականս, զոր լուեալ և ընթերցեալ էր մեր ուրեք ուրեք: Իսկ եթէ երբեք բառ ինչ անծանօթ և անստոյգ ել մեզ ընդ առաջ, եւրոպացի հարցական նշանակաւ (?) յայտ արարաք՝ իբր երկբայականս: Բաց ի սոցանէ կարևոր յոյժ թուեցաւ յաւելուլ և զայն բառս, որ ոչ գտանէին ի գիրս նախնեաց՝ վասն անծանօթ լինելոյ առ նոսա և ուսմանցն, որպիսի են՝ բառք ուսումնականք և արուեստականք. Եւս և

Նորոգ իմն բառս ճարտարապէս յօրինեալս յորդի քաջ հմտից հայկականս բարբառոյ։ Բայց զի մի մերովքս եւեթ վաստակովք թուիցիմք պանծալ, ի դէպ էր արդեօք յիշատակել զհմտագոյնն ի նոցանէ յայսմ ուսումնական ասպարիզին, որպիսի ոք եկաց Վ. Հ. Մանուէլ Վ. մեր Քաջունի, որում պարտիմք զբառս տարրաբանականս եւ զմեքենականս, կամ զչափագիտականն եւ զաստեղաբաշխականն. որ յոգնաբեղուն արդեամբք եւ ջանիւք զոյգես առաջին եկաց յազգիս՝ որ խնամով ճգնեցաւ ի զարգացումն այսպիսի ուսմանց, եւ եթող արձան յաւերժական երախտեաց ի սիրտ եւ ի միտս հայկազուն մանկանց։

Յանգլիական մասին առաջնորդ կալաք զընդարձակ Բառգիրս մեծանուն D. Johnsonի եւ A. Boyerի. որպէս եւ զԱռձեռնս Alfred Elwallի, John Millhouseի, J. P. Robertsի, E. Cliftonի եւ զեռալեզու Արուեստական Բառգիրս (տպ. 1873) A.-L. Tolhausenի. որոց ամենեցուն կիրառութիւն մեծ է յամենայն եւրոպացի ճեմարանս եւ ի վարժարանս։

Ի սկզբան հատորոյս եդաք զՏարերս Հայ Քերականութեան, որպէս եւ ի վախճանի Ցանկս երկուս համառօտս, մին՝ յատուկ անուանց մարդոց, եւ այլն, եւ միւս այլ՝ քաղաքաց, տեղեաց, եւ այլն։

Այսչափ ինչ դոյզնաբանեալ վասն փոքու աշխատութեանս, ոչ այլում իմիք փոխարինի ակն ունիմք, բայց զներողամտութիւն եւեթ գտանել ի բարեսէր կամաց Հանդիպողացս. զայս աղաչելով՝ զի մի անաչառ դատաւորք միայն եւ քննողք լինիցին այսմ, յուշ ածեալ զբան մեծին Յ. Սքալիկերեայ. Եթէ դատաւոր ի խիստ պատուհասս կամիցի զոք արկանել, մատնեսցէ զնա ի բառագիրս յօրինել։ Զի արգահատութեան թէ գոյր արժանի մերս այս ջան, սրտապնդեսցի արդեօք եւ աշխատող նորին ոչ ինչ վեհերել արկանել ձեռն եւ յայլ նմանօրինակ վաստակս՝ յօգուտ եւ ի պատիւ Թորգոմեան գրոհիս, որոյ անուն եւ սէր միշտ վառեաց զաջ եւ զսիրտս որդւոց Մխիթարայ՝ ճգնել ի զարգացումն նորին։

Ս. Ղազար, ի ձ Մեհեկանի ռՅԻԸ

Հ. Մ. Պ.

. . . . I find the Armenian language – which is twin, the literal and the vulgar – difficult, but not invincible; at least I hope not. I shall go on . . . It is a rich language, and would amply repay any one the trouble of learning it.

LORD BYRON
to Messrs Moore and Murray
4 and 5 dec. 1816.

PREFACE

The Armenian language, celebrated for its antiquity, is modelled in a great measure by the Greek and Syriac, the richest idioms in the world; but it has undergone since its origin numerous and considerable alterations both in syntax and by the adoption of words from foreign languages. This is especially observed in the translations of Greek and Syriac authors during the VI, VII, X and XII centuries of our æra.

The progress of philology permitting us at present to study accurately our language, if not to be absolutely it's masters, it behoves us to endeavour to prevent the influence of modern languages, such as French and English, from making too many encroachments. The first of these languages, written and spoken by so many foreigners, has become very familiar to many of our Armenian fellow-countrymen. The second, owing to the extension of British power in the East, visited to it's extremities by English ships, and to the foundation of that vast Indian empire, could not fail to attract the attention of the Armenians. It's study became a necessity for their commercial transactions; and they found also in its literature treasures of a varied, rich and original style. It is strange to say, and yet it is an undeniable fact, that many Armenians know the English language better than their mother-tongue! Far from opposing this partiality for it, we wish to promote it, regulating and directing the study of that language, by means of good grammars and dictionaries.

This is no new idea of our's. The Armenian Academy of St. Lazarus has worked for many years, and is still seriously occupied in spreading the knowledge of the English language in Armenia, by publications of this kind.

All living languages require to be modified according to the progress of time. New objects require new names; nothing more rational. But it is an imperious duty for learned men to control these innovations so as to prevent too great an abuse of neology, that gnawing worm, which alters, corrupts and distorts the most beautiful languages. To attain this object, all friends of science should unite together to oppose with all their might such abuses, and the help of the most humble assistant is not to be despised.

Scholars of the highest order and distinguished compatriots, whose commendation is precious to me, have imposed a heavy task on me, requesting me to publish a new dictionary. I have done my best to repay their confidence. The stock of the first dictionary being exhausted, and having found it incomplete, it was necessary to consult several Armenian and English works, and to have recourse to a new method, and change the rules adopted by the Rev. F. Paschal Awker, that learned divine who has rendered great services.

As regards the number of words, our New Dictionary is much richer than the former one and at the same time more purified. It contains besides the terms of the Armenian language used by ancient authors, a great number of popular words in daily use at present in our country, the synonymes of which exist only partially in works of our classic authors. It contains also a scientific nomenclature, composed by the first scholars of our nation, and by our best Academicians more particularly, of words relating to astronomy, physic, anatomy, natural history, chemistry and alchymy. We have included also some « current » words; that is to say, words generally made use of in good society, making a judicious use of them, and explaining as well as possible their meaning.

It is some years since we published the second edition of the English-Armenian Dictionary; which we have revised, making additions, corrections, suppressions etc.; and now we have the pleasure of presenting to the public this ARMENIAN-ENGLISH NEW DICTIONARY.

The old Armenian-English Dictionary (pub. 1825) – compiled by the above-mentioned Rev. Father, with the assistance of J. Brand Esq. the eminent Armenian scholar, – was undoubtedly a most excellent work and was very favourably received by the literary world of that period ; but the many researches and studies made in both languages during the half century which has elapsed since the publication of that book, have caused a very detailed revision of the original work indispensable. That is what we have tried to do in as accurate and extensive a manner as possible, and we have done it most willingly as it seemed to us as necessary for our own countrymen as for foreigners.

We have done our utmost to make this dictionary as compact as possible, preferring to offer it to the public in a convenient portable size, so that its small dimensions may render it accessible to all. For this reason we have omitted the genitives of words terminating :

1st in *թիւն*, such as *բնութիւն*, whose gen. is always *թեան*, that is to say, *բնութեան*.

2dly in *գոյն*, gen. *գունի*, *գունից*, *բազմագոյն*, *–գունի*, *–գունից*.

3dly in *ան*, gen. *ի*, *աց*, *բնակարան*, *–ի*, *–աց*.

4thly in *անք*, gen. *անաց*, *բամբասանք*, *–անաց*.

5thly in *ումն*, gen. *ման*, *գլորումն*, *–ման*, as well as the nominative plural *գլորմունք*, gen. *–մանց*.

6thly in *կից*, gen. *կցի*, *կցաց*, *դատակից*, *–կցի*, *–կցաց*.

7thly in *ուհի*, gen. *ուհւոյ*, *ուհեաց*, *երանուհի*, *–ուհւոյ*, *–ուհեաց*.

8thly in *իչ*, gen. *չի*, *չաց*, *զարթուցիչ*, *–ցչի*, *–ցչաց*.

9thly in *ող*, gen. *ղի*, *ղաց*, *երգող*, *–ղի*, *–ղաց*.

10thly in *ղէն*, gen. *ղինի*, *ղինաց*, *ընչեղէն*, *–ղինի*, *–ղինաց*.

11thly in *որ*, gen. *րի*, *րաց*, *թագաւոր*, *–րի*, *–րաց*.

12thly in *կան*, gen. *ի*, *աց*, *ժողովական*, *–ի*, *–աց*.

13thly in *ային*, gen. *այնոյ*, *այնոց*, *իւրային*, *–այնոյ*, *–այնոց*.

14thly in *ելի* and *ալի*, gen. *լւոյ*, *լեաց*, *լսելի* and *բանալի*, *–լւոյ*, *–լեաց*.

15thly in *ենի* and *անի*, gen. *նւոյ*, *նեաց*, *նռնենի* and *ականի*, *–նւոյ*, *–նեաց*.

16thly in *ոց*, gen. *ի*, *աց*, *խնկանոց*, *–ի*, *–աց*.

As we have indicated the gen. of all the roots, we have naturally suppressed also the genitive of compound adjectives with the roots *միտ*, *ծին*, *գէտ*, etc., such as *ծանրամիտ*, *պտղածին*, *բանագէտ*, etc. having the same genitive as their final radical; that is to say : *միտ*, *մտի*, *մտաց*; *ծին*, *ծնի*, *ծնից*; *գէտ*, *գիտի*, *գիտաց*. — This occurs also in all compound words and also in the verbs, of which we have often omitted the preterit tense: instead of putting մեղմացուցանեմ, ցուցի, we left the repetition ցուցի, which is at the same time the preterit of the verb ցուցանեմ. — We have also suppressed the genitives of participles employed as adjectives, as they are invariably ելոյ, ելոց: օրհնեալ, -ելոյ, -ելոց.

In those genitives which are declined in ի in the singular and ից or աց in the plural, not to repeat unnecessarily before every word ի, ից, or աց, we have suppressed the singular, and employed only the plural. For instance: instead of putting բալ, ի, ից, մուրհակ, ի, աց, we have made use of բալ, ից, մուրհակ, աց. — We have adopted this system for all other genitives declined in ոյ, ոց; ու, ուց; եղան, եղանց; as, աթոռ, ոյ, ոց; արջ, ու, ուց; բաղեղն, եղան, եղանց.

We have arranged the English words according to their different significations in Armenian; the synonymes are always divided by a comma only (,) and the different significations are separated sometimes by a semicolon (;) at other times by a colon (:) where there is a different signification. — Not to repeat the Armenian words which are at the head of the article, or the English words and phrases in the middle, we have employed the following small horizontal line (–), as also in compound words formed from it by the addition of a syllable or another word, when they follow in the same paragraph.

In the series of Armenian words, we have adopted as much as possible the method of our Armenian Academic Dictionary, making a summary of nearly all the words chosen from our classic authors; obsolete words being excluded, as also a number of compound words, the meaning of which would easily be understood even by those unacquainted with the Armenian language. All these words have been substituted by other recent terms referring to arts, sciences and trades, adopted by our best modern writers and grammarians. And if we met sometimes with doubtful or unknown words, we have expressed this uncertainty by making use of an interrogative point (?), thus denoting the word as an unknown one. As well as all popular terms or phrases are preceded by an asterisk (*).

For the English words we have followed the method adopted in the very extensive Dictionaries of the two most famous lexicographers D. Johnson and A. Boyer; as well as the Dictionaries of Alfred Elwall, John Millhouse, J. P. Roberts, E. Clifton and the Technological Dictionary in three languages of A.-L. Tolhausen, (pub. 1873); all which are much in use in many European Lyceums and schools.

This Preface is followed by a Table of the Armenian Alphabet. It contains a better and more correct explanation of the sounds of the Armenian letters in English characters, which has not been so fully explained hitherto. We have added also a Short Accidence of the Armenian language. At the end of the dictionary two lists will be found; one containing Proper Names, the other Geographical and Historical ones.

These details are given for the information of our Readers, but in no wise to lessen the merits of the works of our predecessors. Besides the compilation of a dictionary is a work of time, and if one can say so of industry and ingenuity – which brings neither glory nor profit to the Author, particularly so, if the critic discovers faults therein.

> . . . . Quas aut incuria fudit,
> Aut humana parum cavit natura. . . . .
>
> HORACE

The wisest thing is to attribute inevitable imperfections to inadvertency and to human weakness, and to appeal, without the patronage of the poet, to the indulgence of the Reader.

St. Lazarus, the 24th *February* 1879.

F. M. B.

are also used as
to the Alphabet
eight which are
are pronounced

IN	NUMBERS
	1
ear	2
p	3
	4
ter	5
	6
	7
	8
	9
	10
	20
	30
	40
	50
	60
	70
	80
	90
	100
	200
	300
	400
	500
	600
	700
	800
	900
	1000
	2000
	3000
	4000
	5000
	6000
	7000
	8000
	9000

master's

SHORT ARMENIAN GRAMMAR

WORD

Words in the Armenian language consist of eight parts of speech; Nouns, Pronouns, Verbs, Participles, Prepositions, Adverbs, Conjunctions, Interjections.

NOUN

In nouns six peculiarities are to be considered: Gender, Form, Species or Kind, Number, Case, Declension.

GENDER

In the Armenian language the genders are distinguished by their natural significations, as

MASCULINE

Ադամ *Adam.* Պետրոս *Peter.* Գրիգոր *Gregory.* Վարդան *Vardan*, &c.

Հայր *father.* ուստր *son.* Թագաւոր *king.* ցուլ *bull.* եղջերու *a stag.* աքաղաղ *cock*, &c.

Ատեան *tribunal.* զօր *soldiers.* հեծելազունդ *cavalry, horse-troops*, &c.

FEMININE

Եւայ *Eve.* Մարիամ *Mary.* Շուշան *Susanna.* Վարդուհի *Rose*, &c.

Մայր *mother.* քոյր *sister.* հարսն *bride.* Թագուհի *queen.* կով *cow.* երինջ *heifer.* մաքի *ewe.* մարի *hen.* եղն *hind*, &c.

COMMON

Մարդ *man.* զաւակ *child.* տղայ *infant.* ժառանգ *an heir.* Թռչուն *bird.* ձագ *chick, chicken.* հաւ *fowl.* ոչխար *sheep.* աղաւնի *dove.* ձի *horse.* շուն *dog*, &c.

NEUTER

Ջուր *water.* օդ *air.* հող *earth.* մարմին *body.* երկինք *heaven.* լոյս *light.* ծառ *tree.* ձեռք *hand.* ոտք *foot.* հոգի *soul, spirit.* միտք *mind.* տուն *house.* աթոռ *chair.* կեանք *life.* մահ *death.* համբերութիւն *patience.* անիրաւութիւն *injustice*, &c.

FORM

The forms of the nouns are three: simple, as, մարդ *man*: Preceded by a particle, as, անմարդ *inhuman*: Composed of entire words, as, մարդասէր *human, kind.*

The different modes of producing compound epithets and words, are the treasure and ornament of the Armenian language; a thousand varieties of compounded words may be made in this tongue.

SPECIES or KIND

There are two kinds of words: Primitive, as, մարդ *man*: and Derivative or Derived having at the termination a particle, as, մարդկային *human.*

The Derivatives are most abundant in the Armenian language.

NUMBER

Numbers are two: Singular, as, մարդ *man*: and Plural, as, մարդք or մարդիկ *men.*

The plural of some nouns is formed in a particular manner, as, *կին woman, կանայք women. վանք convent, վանորայք* or *վանորեայք convents. գիր* or *գիրք book, գրեան books. մանուկ child, boy, մանկտի children, boys.*

CASE

The cases in the Armenian language according to the modern authors are *ten* (10) in number.

1 Nominative *մարդ the man.*
2 Genitive *մարդոյ of the man.*
3 Dative *մարդոյ* or *ի մարդ to the man.*
4 Accusative *զմարդ the man.*
5 Ablative *ի մարդոյ from the man.*
6 Narrative *զմարդոյ concerning the man.*
7 Instrumental *մարդով by means of man.*
8 Circumdative *զմարդով about the man.*
9 Commorative *ի մարդ* or *ի մարդում in the man.*
10 Vocative *ով մարդ o man!*

According to the ancient authors the cases are properly only *six* (6).

1 Nominative.	4 Accusative.
2 Genitive.	5 Ablative.
3 Dative.	6 Instrumental.

And these will be followed in the present grammar.

DECLENSION

Concerning the number of declensions of the nouns, the opinions of authors are various: we will number *ten* (X), dividing them into two classes.

The first class contains six *simple* or *regular* declensions, and the second four *mixed* or *irregular* declensions: and they are distinguished from the second and sixth cases in this manner.

Regular declensions

	SINGULAR		PLURAL	
	Gen.	Instr.	Gen.	Instr.
1	*ի,*	*իւ.*	*ից,*	*իւք.*
2	*ի,*	*աւ.*	*աց,*	*օք.*
3	*ոյ,*	*ով.*	*ոց,*	*ովք.*
4	*ան,*	*ամբ.*	*անց,*	*ամբք.*
5	*ու,*	*ու.*	*ուց,*	*ուք.*
6	*եր,*	*երբ* or	*երց,*	*երբք* or
	եղ,	*եղբ.*	*եղց,*	*եղբք.*

Irregular declensions

	SINGULAR		PLURAL	
	Gen.	Instr.	Gen.	Instr.
1	*ու,*	*ով* or	*եաց,*	*ովք* or
		եաւ.	*եայց,*	*եօք.*
2	*ին,*	*ամբ.*	*անց,*	*ամբք.*
3	*ոջ,*	*աւ* or *ամբ.*	*անց,*	*ամբք.*
4	*այ* or *եայ,*	*աւ* or *եաւ.*		

I

SINGULAR

Արքայ the king.
Արքայի of the king.
Արքայի or *յարքայ, ցարքայ* to the king.
զԱրքայ the king.
յԱրքայէ from the king.
Արքայիւ with or by the king.

PLURAL

Արքայք the kings.
Արքայից of the kings.
Արքայից or *յարքայս, ցարքայս* to the kings.
զԱրքայս the kings.
յԱրքայից from the kings.
Արքայիւք with or by the kings.

II

SINGULAR

Կարգ the order.
Կարգի of the order.
Կարգի or *ի կարգ, առ կարգ* to the order.
զԿարգ the order.
ի Կարգէ from the order.
Կարգաւ with or by the order.

PLURAL

Կարգք the orders.
Կարգաց of the orders.
Կարգաց or *ի կարգս* to the orders.
զԿարգս the orders.
ի Կարգաց from the orders.
Կարգաւք or *կարգօք* with or by the orders.

III

SINGULAR

Մարդ the man.
Մարդոյ of the man.
Մարդոյ or *մարդում* or *ի մարդ* to the man.
զՄարդ the man.
ի Մարդոյ from the man.
Մարդով with or by the man.

PLURAL

Մարդք the men.
Մարդոց of the men.
Մարդոց or ի մարդս to the men.
զՄարդս the men.
ի Մարդոց from the men.
Մարդովք with or by the men.

IV

SINGULAR

Հիմն the foundation.
Հիման of the foundation.
Հիման or ի հիմն to the foundation.
զՀիմն the foundation.
ի Հիմանէ from the foundation.
Հիմամբ with or by the foundation.

PLURAL

Հիմունք the foundations.
Հիմանց of the foundations.
Հիմանց or ի հիմունս to the foundations.
զՀիմունս the foundations.
ի Հիմանց from the foundations.
Հիմամբք with or by the foundations.

V

SINGULAR

Գանձ the treasure.
Գանձու of the treasure.
Գանձու or ի գանձ to the treasure.
զԳանձ the treasure.
ի Գանձէ from the treasure.
Գանձու with or by the treasure.

PLURAL

Գանձք the treasures.
Գանձուց of the treasures.
Գանձուց or ի գանձս to the treasures.
զԳանձս the treasures.
ի Գանձուց from the treasures.
Գանձուք with or by the treasures.

VI

SINGULAR

Աղբիւր the fountain.
Աղբեր of the fountain.
Աղբեր or յաղբիւր to the fountain.
զԱղբիւր the fountain.
յԱղբերէ or յաղբիւրէ from the fountain. [fountain.
Աղբերբ or աղբերաւ with or by the

PLURAL

Աղբերք or աղբիւրք the fountains.
Աղբերց or աղբերաց of the fountains.
Աղբերց, աղբերաց or յաղբերս, յաղբիւրս to the fountains.
զԱղբերս or զաղբիւրս the fountains.
յԱղբերց or յաղբերաց from the fountains. [fountains.
Աղբերբք or աղբերաւք with or by the

VII

SINGULAR

Տեղի the place.
Տեղւոյ of the place.
Տեղւոյ or տեղւոջ or ի տեղի to the [place.
զՏեղի the place.
ի Տեղւոյ or ի տեղւոջէ from the place.
Տեղեաւ with or by the place.

PLURAL

Տեղիք the places.
Տեղեաց of the places.
Տեղեաց or ի տեղիս to the places.
զՏեղիս the places.
ի Տեղեաց from the places. [places.
Տեղեաւք or տեղեօք with or by the

VIII

SINGULAR

Բեռն the burden.
Բեռին of the burden.
Բեռին or ի բեռն to the burden.
զԲեռն the burden.
ի Բեռանէ from the burden.
Բեռամբ with or by the burden.

PLURAL

Բեռինք the burdens.
Բեռանց of the burdens.
Բեռանց or ի բեռինս to the burdens.
զԲեռինս the burdens.
ի Բեռանց from the burdens.
Բեռամբք with or by the burdens.

IX

SINGULAR

Կին the woman or the wife.
Կնոջ of the woman.
Կնոջ or ի կին to the woman.
զԿին the woman.
ի Կնոջէ from the woman.
Կնաւ or կանամբ with or by the woman.

PLURAL

Կանայք the women or the wives.
Կանանց of the women.
Կանանց or առ կանայս to the women.
զԿանայս the women.
ի Կանանց from the women.
Կանամբք with or by the women.

The following are declined in this manner.

SINGULAR

Գիւղ or գեօղ the village.
Գեղջ of the village.
Գեղջ or ի գիւղ to the village.
զԳիւղ the village.
ի Գեղջէ from the village.
Գիւղիւ with or by the village.

PLURAL

Գիւղք the villages.
Գիւղից of the villages.
Գիւղից or ի գիւղս to the villages.
զԳիւղս the villages.
ի Գիւղից from the villages. [villages.
Գիւղիւք or գիւղօք with or by the

SINGULAR

Տէր the Lord, the Master.
Տեառն of the lord.
Տեառն or ցտէր to the lord.
զՏէր the lord.
ի Տեառնէ or ի Տեռնէ from the lord.
Տերամբ with or by the lord.

PLURAL

Տեարք the Lords, the Masters.
Տեարց or տերանց of the lords. [lords.
Տեարց , տերանց or ցտեարս to the
զՏեարս the lords.
ի Տեարց or ի տերանց from the lords.
Տերամբք with or by the lords.

SINGULAR

Աւր or օր the day.
Աւուր of the day.
Աւուր or յաւր or յօր to the day.
զԱւր or զօր the day.
յԱւրէ or յօրէ from the day.
Աւուրբ with or by the day.

PLURAL

Աւուրք the days.
Աւուրց of the days.
Աւուրց or յաւուրս to the days.
զԱւուրս the days.
յԱւուրց from the days.
Աւուրբք with or by the days.

SINGULAR

Հայր the father.
Հաւր or հօր of the father.
Հաւր , հօր or ցհայր to the father.
զՀայր the father.
ի Հաւրէ or ի հօրէ from the father.
Հարբ with or by the father.

PLURAL

Հարք the fathers.
Հարց or հարանց of the fathers.
Հարց , հարանց or ցհարս to the fathers.
զՀարս the fathers.
ի Հարց or ի հարանց from the fathers.
Հարբք with or by the fathers.

X

SINGULAR

Տիգրան Tigranes.
Տիգրանայ of Tigranes.
Տիգրանայ or ի Տիգրան to Tigranes.
զՏիգրան Tigranes.
ի Տիգրանայ from Tigranes.
Տիգրանաւ with or by Tigranes.

SINGULAR

Հեղինէ Helena.
Հեղինեայ of Helena.
Հեղինեայ or առ Հեղինէ to Helena.
զՀեղինէ Helena.
ի Հեղինեայ from Helena.
Հեղինեաւ with or by Helena.

ADJECTIVES

Adjectives in the Armenian language admit besides the number or case the degrees of comparison.

The Comparatives are formed in

three modes : 1. with the particle գոյն, as բարի, *good*, բարեգոյն, *better*. 2. with the prepositions քան, ըստ, առաւել, as, մեծ, *great*, մեծ քան, մեծ ըստ, առաւել մեծ, *greater*. 3. with different cases of the substantive, as, մեծն ի մարգարէից, *greater than all prophets*; մեծն ի մարգարէս, *greater amongst the prophets*.

The Superlatives are also formed in three manners: 1. with the particles ամէն, գեր, մեծ, երեք or եռ put before them, as, ամենաբարի, *best*. ամենիմաստուն, *wisest*, գերամաքուր, *most clean*. մեծավայելուչ, *most convenient*. եռամեծ, *greatest*. 2. by adding to them some adverbs, as, ևս մեծագոյն or մեծագոյն ևս, *greatest*. յոյժ վատթարագոյն, անհնարին չար, *worst*. ամենևին գեղեցիկ, *most handsome*. երիցս եղկելի, *most miserable*. 3. by redoubling the positives, as, մեծամեծ, *greatest*. չարաչար or չար առաւել քան զչար, *worst*.

PRONOUNS

Pronouns supply the place of nouns and, like them, have case, number, and particularly the first, second and third persons, as, ես I, դու *thou*, նա *he*.

In Armenian they have no genders.

There are four kinds of pronouns : Substantive or Personal, as, ես I, դու *thou*, ինքն *he*, *himself*, իւր *own*, *himself*. Definitive, as, սա *this*, դա *that*, նա *that*, *he*, *she*, *it*. Possessive, as, իմ or իմոյին *my*, *mine*, մեր or մերոյին *our*, *our's*, քո or քոյին *thy*, *thine*, ձեր or ձերոյին *your*, *your's*, իւր or իւրային *his*, *hers*, *its*, իւրեանց, *their*, *their's*; & Relative, as, որ *who*, *which*, *that*, *what*.

The three letters ս, դ, ն, are called Articles-distinctive-of-the-persons; and joined to the terminations of words and verbs, shew their persons or order, and are used as personal, possessive, and definitive pronouns; as: մարդս, *I who am a man* or *my man*, or *this man*; մարդդ *thou who art a man*, or *thy man*, or *that man*; մարդն *he who is a man*, or *his man* or *that man*.

DECLENSIONS OF THE PERSONAL PRONOUNS

Ես I.
Իմ of me, mine or my.
Ինձ, ցիս, առ իս to me.
զԻս me.
յԻնէն from me.
Ինեւ with or by me.

Մեք we.
Մեր of us, our or our's.
Մեզ, ցմեզ, առ մեզ to us.
զՄեզ us.
ի Մէնջ from us.
Մեւք or մեօք with or by us.

Դու thou.
Քո of thee, thine or thy.
Քեզ, առ քեզ, ցքեզ to thee.
զՔեզ thee.
ի Քէն from thee.
Քեւ with or by thee.

Դուք ye or you.
Ձեր of you, your or your's.
Ձեզ, ցձեզ, առ ձեզ to you.
զՁեզ you.
ի Ձէնջ from you.
Ձեւք or ձեօք with or by you.

Ինքն he or himself.
Ինքեան of him or his.
Ինքեան or առ ինքն to him.
զԻնքն him.
յԻնքենէ from him.
Ինքեամբ with or by him.

Ինքեանք they or themselves.
Ինքեանց of them, their or their's.
Ինքեանց or առ ինքեանս to them.
զԻնքեանս them.
յԻնքեանց from them.
Ինքեամբք with or by them.

VERBS

The Conjugations of the verbs are four, and are distinguished by the last vowels of their indicatives, which are, է, ա, ու, ի.

The indicative of the First conjugation ends with the vowel է as, շարժեմ, *I move*; of the Second with ա as, լուանամ, *I wash*; of the Third with ու as, հեղում, *I pour out*; of the Fourth with ի as, ուսանիմ, *I learn*.

Specimen of the four conjugations of the regular verbs with their moods, tenses, numbers and persons.

INDICATIVE — *Present*

Sing. Pers.	Plur. Pers.
Շարժ-եմ-ես-է·	շարժ-եմք-էք-են·
Լուան-ամ-աս-այ·	լուան-ամք-այք-ան·
Հեղ-ում-ուս-ու·	հեղ-ումք-ոյք-ուն·
Ուսան-իմ-իս-ի·	ուսան-իմք-իք-ին·

Imperfect

Շարժ-էի-էիր-էր·	շարժ-էաք-էիք-էին·
Լուան-այի-այիր-այր·	լուան-այաք-այիք-ային·
Հեղ-ուի-ուիր-ոյր·	հեղ-ուաք-ուիք-ուին·
Ուսան-էի-էիր-էր·	ուսան-էաք-էիք-էին·

Perfect

Շարժ-եցի-եցեր-եաց·	շարժ-եցաք-եցիք-եցին·
Լուա-ցի-ցեր-լուաց·	լուա-ցաք-ցիք-ցին·
Հեղ-ի-եր-հեղ·	հեղ-աք-իք-ին·
Ուս-այ-ար-աւ·	ուս-աք-այք-ան·

Future

Շարժ-եցից-եսցես-եսցէ·	շարժ-եսցուք-եսջիք-եսցեն·
Լուա-ցից-սցես-սցէ·	լուա-սցուք-սջիք-սցեն·
Հեղ-ից-ցես-ցէ·	հեղ-ցուք-ջիք-ցեն·
Ուս-այց-ցիս-ցի·	ուս-ցուք-ջիք-ցին·

IMPERATIVE — *Present*

Շարժեա՛, մի՛ շարժեր·	Շարժեցէ՛ք, մի՛ շարժէք·
Շարժեսցէ՛, մի՛ շարժեսցէ·	Շարժեսցե՛ն, մի՛ շարժեսցեն·
Լուա՛, մի՛ լուանար·	Լուացէ՛ք, մի՛ լուանայք·
Լուասցէ՛, մի՛ լուասցէ·	Լուասցե՛ն, մի՛ լուասցեն·
Հե՛ղ, մի՛ հեղուր·	Հեղէ՛ք, մի՛ հեղուք·
Հեղցէ՛, մի՛ հեղցէ·	Հեղցե՛ն, մի՛ հեղցեն·
Ուսի՛ր, մի՛ ուսանիր·	Ուսարո՛ւք, մի՛ ուսանիք·
Ուսցի՛, մի՛ ուսցի·	Ուսցի՛ն, մի՛ ուսցին·

Future

Շարժեսջի՛ր or շարժեսցե՛ս, շարժեսցէ·	Շարժեսցո՛ւք, շարժեսջի՛ք, շարժեսցե՛ն·
Լուասջի՛ր or լուասցե՛ս, լուասցէ՛·	Լուասցո՛ւք, լուասջի՛ք, լուասցե՛ն·
Հեղջի՛ր or հեղցե՛ս, հեղցէ·	Հեղցո՛ւք, հեղջի՛ք, հեղցե՛ն·
Ուսջի՛ր or ուսանիջի՛ր, ուսցի՛·	Ուսցո՛ւք, ուսջի՛ք or ուսանիջի՛ք, ուսցի՛ն·

SUBJUNCTIVE

The Present is formed like that of Indicative.

Future

Շարժ-իցեմ-իցես-իցէ·	շարժ-իցեմք-իցէք-իցեն·
Լուան-այցեմ-այցես-այցէ·	լուան-այցեմք-այցէք-այցեն·
Հեղ-ուցում-ուցուս-ուցու·	հեղ-ուցումք-ուցուք-ուցուն·
Ուսան-իցիմ-իցիս-իցի·	ուսան-իցիմք-իցիք-իցին·

INFINITIVE

Շարժ-ել· Լուան-ալ· Հեղ-ուլ· Ուսան-իլ or ել·

PARTICIPLE — *Present*

Շարժող or Շարժեցող· Լուացող· Հեղող· Ուսանող·

Past

Շարժեալ· Լուացեալ· Հեղեալ· Ուսեալ·

Future

Շարժելոց or Շարժելի· Լուանալոց or Լուանալի·
Հեղլոց or Հեղլի· Ուսանելոց or Ուսանելի·

CONJUGATION OF SUBSTANTIVE VERBS

Defective verb ԵՄ, *I am.*

INDICATIVE — *Present*

Եմ I am ես thou art է he is.
Եմք we are էք you are են they are.

Imperfect

Էի I was էիր thou wast էր he was.
Էաք we were էիք you were էին they were.

IMPERATIVE

Ե՛ր be thou or do thou be.
Է՛ք or երո՛ւք be you or do you be.

SUBJUNCTIVE

Իցեմ I be իցես thou be իցէ he be.
Իցեմք we be իցէք you be իցեն they be.

INFINITIVE

Ել to be.

PARTICIPLE — *Past*

Եալ been or having been.

Future

Ելոց which is to be or about to be.

—

Defective verb ԳՈՄ *I am* or *I exist.*

INDICATIVE — *Present*

Գոմ I am գոս thou art գոյ he is.
Գոմք we are գոյք you are գոն they are.

Imperfect

Գոյիր thou wast գոյր he was.
Գոյին they were.

SUBJUNCTIVE — *Future*

Գուցէ he be, it may be, it would be.
Գուցեն they be, they may be.

INFINITIVE

Գոլ to be, to exist.

PARTICIPLE — *Present*

Գոյող being.

—

Substantive verb ԵՂԱՆԻՄ *I am made or done.*

INDICATIVE — *Present*

Եղանիմ I am made եղանիս thou art made եղանի he is made.
Եղանիմք we are made եղանիք you are made եղանին they are made.

Imperfect

Եղանէի I was made եղանէիր thou wast made եղանէր he was made.
Եղանէաք we were made եղանէիք you were made եղանէին they were made.

Perfect

Եղէ or եղայ I have been եղեր thou hast been եղև he has been.
Եղաք or եղեաք we have been եղէք or եղայք you have been եղեն they have been.

Future

Եղէց I shall be եղիցիս thou shalt be եղիցի he shall be.

IMPERATIVE — *Present*

Մի՛ եղանիր be thou not եղիցի let him be.
Եղերո՛ւք be you մի՛ եղանիք be you not եղիցին let them be.

SUBJUNCTIVE

The Present is formed like that of the Indicative.

Future

Եղիցիմ or եղանիցիմ I shall be made եղիցիս thou shalt be made եղիցի he shall be made.
Եղիցիմք or եղանիցիմք we shall be made եղիջիք or եղիցիք you shall be made եղիցին they shall be made.

INFINITIVE

Եղանիլ to be, to be made, to be done.

PARTICIPLE — *Past*

Եղեալ been, made, done, having been.

Future

Եղանելոց or եղանելի which is to be.

—

Substantive verb ԼԻՆԻՄ *I am, I am made or done.*

INDICATIVE — *Present*

Լինիմ I am լինիս thou art լինի he is.
Լինիմք we are լինիք you are լինին they are.

Imperfect

Լինէի I was լինէիր thou wast լինէր he was.
Լինէաք we were լինէիք you were լինէին they were.

Future

Լիցիմ I shall be լիցիս thou shalt be լիցի he shall be.
Լիցուք we shall be լիցիք or լիջիք you shall be լիցին they shall be.

IMPERATIVE — *Present*

Լեր be thou մի՛ լինիր be thou not լիցի let him be.
Լի՛ք or լերո՛ւք be you մի՛ լինիք be you not լիցին let them be.

Future

Լիջիր or լինիջիր or լիցիս be thou լիցի let him be.
Լիցո՛ւք let us be լիջիք or լինիջիք be you լիցին let them be.

SUBJUNCTIVE

Present is like that of the Indicative.

Future

Լինիցիմ I be or may be լինիցիս thou be լինիցի he be.
Լինիցիմք we be լինիջիք you be լինիցին they be.

INFINITIVE

Լինել to be.

PARTICIPLE — *Present*

Լինող being.

Past

Լեալ or լիեալ been, having been.

Future

Լինելոց or լինելի which is to be.

FIRST CONJUGATION

Active ՇԱՐԺԵՄ *To move.*

INDICATIVE — *Present*

Շարժեմ I move շարժես thou movest շարժէ he moves.
Շարժեմք we move շարժէք you move շարժեն they move.

Imperfect

Շարժէի I moved or was moving շարժէիր thou movedst or wast moving շարժէր he moved or was moving.
Շարժէաք we moved or were moving շարժէիք you moved or were moving շարժէին they moved or were moving.

Perfect

Շարժեցի I moved շարժեցեր thou movedst շարժեաց he moved.
Շարժեցաք we moved շարժեցիք you moved շարժեցին they moved.

Future

Շարժեցից I shall move շարժեսցես thou shalt move շարժեսցէ he shall move.

Շարժեսցուք we shall move շարժեսջիք you shall move շարժեսցեն they shall move.

IMPERATIVE — *Present*

Շարժեա՛ move thou մի՛ շարժեր move thou not շարժեսցէ՛ let him move.

Շարժեցէ՛ք move you մի՛ շարժէք move you not շարժեսցե՛ն let them move.

Future

Շարժեսջի՛ր or շարժեսցե՛ս move thou շարժեսցէ՛ let him move.

Շարժեսցո՛ւք let us move շարժեսջի՛ք move you շարժեսցե՛ն let them move.

SUBJUNCTIVE

The Present is like that of the Indicative.

Future

Շարժիցեմ I move, I may, might, could, should, would move շարժիցես thou move, &c. շարժիցէ he move, &c.

Շարժիցեմք we move, &c. շարժիցէք you move, &c. շարժիցեն they move, &c.

INFINITIVE

Շարժել to move.

PARTICIPLE — *Present*

Շարժող or շարժեցող moving, who moves.

Past

Շարժեալ or շարժեցեալ having moved.

Future

Շարժելոց which has to move.

—

Passive ՇԱՐԺԻՄ *To be moved*

INDICATIVE — *Present*

Շարժիմ I am moved շարժիս thou art moved շարժի he is moved.

Շարժիմք we are moved շարժիք you are moved շարժին they are moved.

Imperfect

Շարժէի I was moved շարժէիր thou wast moved շարժէր or շարժիւր he was moved.

Շարժէաք we were moved շարժէիք you were moved շարժէին they were moved.

Perfect

Շարժեցայ I have been moved շարժեցար thou hast been moved շարժեցաւ he has been moved.

Շարժեցաք we have been moved շարժեցայք you have been moved շարժեցան they have been moved.

Future

Շարժեցայց I shall be moved շարժեսցիս thou shalt be moved շարժեսցի he shall be moved.

Շարժեսցուք we shall be moved շարժիջիք you shall be moved շարժեսցին they shall be moved.

IMPERATIVE — *Present*

Շարժեա՛ց or շարժեցի՛ր be thou moved մի՛ շարժիր be thou not moved շարժեսցի let him be moved.

Շարժեցարո՛ւք be you moved մի՛ շարժիք be you not moved շարժեսցի՛ն let them be moved.

Future

Շարժեսջի՛ր or շարժիջի՛ր be thou moved շարժեսցի՛ let him be moved.

Շարժեսցո՛ւք let us be moved շարժիջի՛ք be you moved շարժեսցի՛ն let them be moved.

SUBJUNCTIVE

Present is like that of the Indicative.

Future

Շարժիցիմ I shall be moved շարժիցիս thou shalt be moved շարժիցի he shall be moved.

Շարժիցիմք we shall be moved շարժիցիք you shall be moved շարժիցին they shall be moved.

INFINITIVE

Շարժիլ or շարժել to be moved.

PARTICIPLE — *Past*

Շարժեալ or *շարժեցեալ* moved, being moved.

Future

Շարժելոց or *շարժելի* which is to be moved.

In this manner many neuter-passive and common verbs are conjugated.

—

SECOND CONJUGATION

Active ԼՈՒԱՆԱՄ *To wash*

INDICATIVE — *Present*

Լուանամ I wash *լուանաս* thou washest *լուանայ* he washes.
Լուանամք we wash *լուանայք* you wash *լուանան* they wash.

Imperfect

Լուանայի I washed or was washing *լուանայիր* thou washedst or wast washing *լուանայր* he washed or was washing.
Լուանայաք we washed or were washing *լուանայիք* you washed or were washing *լուանային* they washed or were washing.

Perfect

Լուացի I washed *լուացեր* thou washedst *լուաց* he washed.
Լուացաք we washed *լուացիք* you washed *լուացին* they washed.

Future

Լուացից I shall wash *լուասցես* thou shalt wash *լուասցէ* he shall wash.
Լուասցուք we shall wash *լուասջիք* you shall wash *լուասցեն* they shall wash.

IMPERATIVE

Present and *Future*

Լուա՛, *լուասջի՛ր* or *լուասցե՛ս* wash thou *մի՛ լուանար* wash thou not *լուասցէ՛* let him wash.
Լուասցո՛ւք let us wash *լուացէ՛ք* or *լուասջի՛ք* wash you *լուասցե՛ն* let them wash.

SUBJUNCTIVE — *Future*

Լուանայցեմ I wash, may wash, might wash, I could, should, would wash *լուանայցես* thou wash, &c. *լուանայցէ* he wash, &c.
Լուանայցեմք we wash *լուանայցէք* you wash *լուանայցեն* they wash.

INFINITIVE

Լուանալ to wash.

PARTICIPLE — *Present*

Լուացող washing, who washes.

Past

Լուացեալ having washed.

Future

Լուանալոց who has to wash.

—

Passive ԼՈՒԱՆԻՄ *To be washed*

INDICATIVE — *Present*

Լուանիմ I am washed *լուանիս* thou art washed *լուանի* he is washed.
Լուանիմք we are washed *լուանիք* you are washed *լուանին* they are washed.

Perfect

Լուացայ I have been washed *լուացար* thou hast been washed *լուացաւ* he has been washed.
Լուացաք we have been washed *լուացայք* you have been washed *լուացան* they have been washed.

Future

Լուացայց I shall be washed *լուասցիս* thou shalt be washed *լուասցի* he shall be washed.
Լուասցուք we shall be washed *լուասջիք* you shall be washed *լուասցին* they shall be washed.

IMPERATIVE

Present and *Future*

Լուա՛, *լուացի՛ր* or *լուասջի՛ր* be thou washed *լուասցի՛* let him be washed.
Լուասցո՛ւք let us be washed *լուասջի՛ք*

be you washed *լուասցի՛ն* let them be washed.

SUBJUNCTIVE

Լուանայցիմ I may be washed *լուանայցիս* thou mayest be washed *լուանայցի* he may be washed.
Լուանայցիմք we may be washed *լուանայցիք* you may be washed *լուանայցին* they may be washed.

INFINITIVE

Լուանիլ to be washed.

PARTICIPLE — *Past*

Լուացեալ washed.

Future

Լուանալի which is to be washed.

The passives of the second conjugation are not so harmonious to the ear, whence they are sometimes formed by means of the verbs substantive, or the actives are adopted with a passive sense.

THIRD CONJUGATION

Active ՀԵՂՈՒՄ *To pour out*

INDICATIVE — *Present*

Հեղում I pour out *հեղուս* thou pourest out *հեղու* he pours out.
Հեղումք we pour out *հեղուք* you pour out *հեղուն* they pour out.

Imperfect

Հեղուի I poured out or was pouring out *հեղուիր* thou pour'dst out or wast pouring out *հեղոյր* he poured out or was pouring out.
Հեղուաք we poured out or were pouring out *հեղուիք* you poured out or were pouring out *հեղուին* they poured out or were pouring out.

Perfect

Հեղի I poured out *հեղեր* thou pour'dst out; *եհեղ* or *հեղ* he poured out.
Հեղաք we poured out *հեղիք* you poured out *հեղին* they poured out.

Future

Հեղից I shall pour out *հեղցես* thou shalt pour out *հեղցէ* he shall pour out.
Հեղցուք we shall pour out *հեղջիք* you shall pour out *հեղցեն* they shall pour out.

IMPERATIVE

Present and *Future*

Հե՛ղ, հեղջի՛ր or *հեղցե՛ս* do thou pour out *մի՛ հեղուր* do thou not pour out *հեղցէ՛* let him pour out.
Հեղցո՛ւք let us pour out *հեղէ՛ք* or *հեղջի՛ք* do you pour out *մի՛ հեղուք* do you not pour out *հեղցե՛ն* let them pour out.

SUBJUNCTIVE — *Future*

Հեղուցում I pour out, I may, might, could, should, would pour out *հեղուցուս*, thou pour out, &c. *հեղուցու* he pour out, &c.
Հեղուցումք we pour out, &c. *հեղուցուք* you pour out *հեղուցուն* they pour out.

INFINITIVE

Հեղուլ to pour out.

PARTICIPLE — *Present*

Հեղող pouring out.

Past

Հեղեալ having poured out.

Future

Հեղլոց who has to pour out.

Passive ՀԵՂԱՆԻՄ *To be poured out*

INDICATIVE — *Present*

Հեղանիմ I am poured out *հեղանիս* thou art poured out *հեղանի* he is poured out.
Հեղանիմք we are poured out *հեղանիք* you are poured out *հեղանին* they are poured out.

Perfect

Հեղայ I have been poured out *հե-*

ղար thou hast been poured out հեղաւ he has been poured out.
Հեղաք we have been poured out հեղայք you have been poured out հեղան they have been poured out.

Future

Հեղայց I shall be poured out հեղցիս thou shalt be poured out հեղցի he shall be poured out.
Հեղցուք we shall be poured out հեղջիք you shall be poured out հեղցին they shall be poured out.

IMPERATIVE

Հեղիր or հեղցիս be thou poured out հեղցի let him be poured out.
Հեղարո՛ւք or հեղջի՛ք be you poured out հեղցին let them be poured out.

INFINITIVE

Հեղանիլ to be poured out.

PARTICIPLE — *Past*

Հեղեալ poured out.

Future

Հեղլի which is to be poured out.

The deficiencies of the third conjugation passive are supplied from it's active.

FOURTH CONJUGATION

Common verb ՈՒՍԱՆԻՄ *To learn*

INDICATIVE — *Present*

Ուսանիմ I learn ուսանիս thou learnest ուսանի he learns.
Ուսանիմք we learn ուսանիք you learn ուսանին they learn.

Imperfect

Ուսանէի I learned or was learning ուսանէիր thou learnedst or wast learning ուսանէր he learned or was learning.
Ուսանէաք we learned or were learning ուսանէիք you learned or were learning ուսանէին they learned or were learning.

Perfect

Ուսայ I have learned ուսար thou hast learned ուսաւ he has learned.
Ուսաք we have learned ուսայք you have learned ուսան they have learned.

Future

Ուսայց I shall learn ուսցիս thou shalt learn ուսցի he shall learn.
Ուսցուք we shall learn ուսջիք you shall learn ուսցին they shall learn.

IMPERATIVE — *Present*

Ուսի՛ր learn thou մի՛ ուսանիր learn thou not ուսցի let him learn.
Ուսարո՛ւք do you learn մի՛ ուսանիք do you not learn ուսցին let them learn.

Future

Ուսջի՛ր or ուսանիջի՛ր learn thou ուսցէ let him learn.
Ուսցո՛ւք let us learn ուսջի՛ք or ուսանիջիք do you learn ուսցին let them learn.

SUBJUNCTIVE

The Present is like that of the Indicative.

Future

Ուսանիցիմ I learn, may, might, could, should, would learn ուսանիցիս thou learn, &c. ուսանիցի he learn, &c.
Ուսանիցիմք we learn, &c. ուսանիցէք you learn ուսանիցին they learn.

INFINITIVE

Ուսանիլ or ուսանել to learn.

PARTICIPLE — *Present*

Ուսանող learning, who learns.

Past

Ուսեալ having learned.

Future

Ուսանելոց or ուսանելի who has to learn.

Thus are also conjugated the common verbs, which in the first person of the Perfect terminate in ցայ.

They are at the same time active and passive.

IRREGULAR VERBS

The Irregular Verbs are changed in their Perfect Tenses in the following manner.

Infinitive	Indicative-Present	Perfect
Առնել to do.	առնեմ I do.	արարի I did.
Դնել to put.	դնեմ I put.	եդի I have put, I put.
Լսել to hear.	լսեմ I hear.	լուայ I heard.
Ճանաչել to know.	ճանաչեմ I know.	ծանեայ I have known, I knew.
Մեղանչել to sin.	մեղանչեմ I sin.	մեղայ I have sin, or sinned.
Յառնել to rise.	յառնեմ I rise.	յարեայ I have been risen, I rose.
Տալ to give.	տամ I give.	ետու I have given, I gave.
Գալ to come.	գամ I come.	եկի I came, or I was come.
Ուտել to eat.	ուտեմ I eat.	կերայ I have eaten, I ate or eat.
Ըմպել to drink.	ըմպեմ I drink.	արբի I drank.
Ունել to take.	ունիմ I take.	կալայ I took, or I have taken.
Երթալ to go.	երթամ I go.	չոգայ I went, or I am gone.

VERBS IMPERSONAL

Ամպէ, it begins to cloud.
Անձրևէ it rains; it is raining.
Ցօղէ the dew falls.
Հեղեղատէ it comes pouring, it runs [over.
Ձիւնէ it snows.
Ճառագայթէ it shines.
Առաւօտէ it begins to be day-light.
Մրրկէ it blows very hard.
Փայլատակէ it lightens.
Պտղաբերէ it produces fruit.
Մռնչէ it bellows, it roars.
Կաղկանձէ it howls.
Բառաչէ it bellows, it roars.
Այգանայ it clears up.
Առաւօտանայ it dawns.
Երեկոյանայ it darkens; the night falls.
Գիշերանայ it is become night.
Լուսանայ it brightens.
Խաւարանայ it grows dusky.
Հրանայ it kindles.
Որոտայ it thunders.
Ասի it is reported, they say.
Երևի it appears, it seems.
Թուի it seems.
Կարծի 'tis believed, it is thought.

Լսի it is noised abroad.
Հասանէ or հասանի it happens, it falls [out.
Պատահէ it happens.
Հանդիպի it happens.
Պիտի one must.
Ցաւէ or ցաւի it pains.
Անկ է it becomes, it is fit, must.
Արժան է it is convenient, it becomes.
Անհնար է it is impossible.
Բարւոք է it is good, it is well.
Խիստ է it is hard.
Կամ է or կամք են it is wished, it wills.
Հարկ է it must, it is necessary.
Մարթ է it may be.
Յայտ է it is clear.
Շատ է it is enough, it sufficies.
Պարտ է it must.
Վայել է it is fit, it is proper.
Պէտք են it must, it is necessary.
Օրէն է or են 't is lawful, it allows.
Փոյթ է it is cared for.
Օգուտ է it is expedient.
Ի դէպ է it is suitable, or convenient, it becomes, it is fit.

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՔ — ABBREVIATIONS

a. af.	adjective, adjective feminine	ածական, ած. իգական
ad.	adverb	մակբայ
agr.	agriculture	երկրագործութիւն
alg.	algebra	գրահաշիւ
anat.	anatomy	անդամազննութիւն
Ar.	Arabic	արաբերէն
arith.	arithmetic	թուաբանութիւն
Անդլակի S. **Անդուլ**. [ble, firm.

Անդղորդելի, Անդղրդելի *a.* immova-

Անդնդաբնակ *a.* dwelling in the abyss; infernal: spread over the abyss.

Անդնդավէր *a.ad.* swallowed up in an abyss, sunk deeply; to a great depth.

Անդնդախոր a. deep as an abyss, unfathomable.

Անդնդական S. **Անդնդային**.

Անդնդահերձ *a.* dividing the abyss.

Անդնդայեղց *a.* sunk in an abyss; very deep. [hellish.

Անդնդային *a.* very deep; infernal,

Անդնդապետական *a.s.* belonging to the prince of hell; prince of hell.

Անդնդապտոյտ *a.* making a deep vortex; turning itself in the abyss.

Անդնդասոյզ, **Անդնդասուզեալ**, **Անդընդավիժակ** *a.* plunged, submerged, precipitated in an abyss; engulfed; – *ընկնել*, to plunge, to engulf, to sink to the bottom; – *առնել*, to submerge, to precipitate, to sink.

Անդնդափոս *a.* fortified by a deep trench; very deep.

Անդոհ, **Անդոհական** *a.* vexatious, grievous; melancholy.

Անդոհութիւն *s.* melancholy, grief.

Անդողդոջ *a.* unshaken, firm.

Անդոյր S. **Անդորր**. [tain, peak.

Անդորրդանք *s.pl.* summit of a moun-

Անդորր *a.* quiet, still, tranquil, calm, mild, peaceable; easy, convenient, comfortable; – or *յանդորրու*, peaceably, in tranquillity; comfortably, at ease; – *առնել*, *յ– հանել*, to calm, to quiet, to soften, to appease, to comfort.

Անդորրագիր *s.* receipt, discharge, quittance.

Անդորրամիտ *a.* possessing a tranquil mind, calm, of a peaceable disposition; magnanimous.

Անդորրանամ, *ացայ vn.* to compose one's self; to be easy, to be comfortable.

Անդորրացուցանեմ, *ուցի*, **Անդորրեմ**, *եցի*, **Անդորրեցուցանեմ**, *ուցի va.* to calm, to pacify; to comfort, to soften, to alleviate.

Անդորրիմ, *եցայ* S. **Անդորրանամ**.

Անդորրիչ *a.* quieting, calming, tranquillizing.

Անդորրութիւն *s.* tranquillity, calm, repose; ease, comfort.

Անդուլ *a.ad.* assiduous, continual; assiduously, continually, incessantly.

Անդունդք, *դնդոց s.pl.* abyss, gulf; precipice; the infernal regions, hell, tartar.

Անդուռն *a.* without gates, open; – *բերան՝ լեզու*, tattler, person of an unbridled tongue. [from above.

Անդուստ *ad.* thence; – *'ի վերուստ*,

Անդ ուրեմն, **Անդր ուրեմն** *ad.* there; S. **Անդ** *ad.*

Անդպրութիւն S. **Անուսումնութիւն**.

Անդստին *ad.* from, since, as soon as, when; radically, originally, naturally; anew, afresh: even then; – *'ի մանկութենէ իմմէ*, from my infancy; – *յարարչութենէ աշխարհի*, from the creation of the world.

Անդր *ad.* there; beyond, on the other side; yonder; *'ի քաղաք* –, to the city; – *քան*, *pr.* beyond, further than, on the other side of, over; – *քան զծով*, beyond the sea. [position.

Անդրաբերութիւն *s.* metaphor; trans-

Անդրագիր *s.* inscription.

Անդրագոյն *a.* further.

Անդրադարձ *a.s.* reciprocal, mutual; inverse; retrograde: requital, return, exchange.

Անդրադարձութիւն *s.* retrogression; reverberation, repercussion; reflection; rebound.

Անդրադարձուցանեմ, *ուցի va.* to drive back; to reverberate; to reflect; to repel, to cause to rebound.

Անդրանամ, *ացայ vn.* to go beyond, to go further, to pass, to go before.

Անդրանիկ, *նկի* or *նկան*, *կաց a.s.* eldest, first-born.

Անդրանկածախ *a.* that destroys the first-born.

Անդրանկածին *a.* first-born.

Անդրանկածնունդ S. **Անդրանիկ**.

Անդրանկանամ, *ացայ vn.* to be eldest; to claim primogeniture.

Անդրանկարար *a.* that gives the right of primogeniture.

Անդրանկացուցանեմ, *ուցի va.* to make eldest, to give the right of primogeniture.

Անդրանկութիւն *s.* seniority, primogeniture, right of primogeniture.

Անդրավարտիք *s.pl.* breeches, hose, trousers.

Անդրդուելի *a.* immoveable, firm, constant; inflexible.

Անդրդուութիւն *s.* firmness, constancy, resolution.

Անդրէն *ad.* again, anew, afresh; from or to the same place, in the same situation; – *դառնալ*, to return; – *սկսանել*, to recommence; – *ածել*, to repeat or say over again; S. **Անդէն**. [լի.

Անդրժելի *a.* inviolable: S. **Անդժրե-**

Անդրի, *րւոյ*, *րեաց* *s.* statue; bust; – *վիթխարի*, colossus. [tor.

Անդրիագործ, *աց* *a.* statuary, sculp-

Անդրիագործութիւն *s.* sculpture.

Անդրիանդ, *աց* S. **Անդրի**.

Անդրիանդագործ, **Անդրիաստեղծ** S. **Անդրիագործ**.

Անդրոյթք *s.* eructation.

Անդրոշմ, *աց* *a.* uninscribed; without mark; unsealed; not ratified; without confirmation. [nag, hackney.

Անդրուար, **Անդրուվար**, **Անդրվար** *s.*

Անդր քան S. **Անդր**.

Անեզր, **Անեզրական** *a.* interminable, boundless.

Անել, **Անելանելի** *a.* much embarrassed, much perplexed, inextricable, without escape; – *և անմուտ առնել*, to hem in on all sides, to cut off all means of escape from; – *փողոց*, blind alley; street or court with only one entrance. [uncreate.

Անեղ, *ից*, **Անեղական** *a.* uncreated,

Անեղածին *a.* born of increated God.

Անեղակերտ *a.* made by increated God.

Անեղանելի *a.* that cannot be created.

Անեղաշէն S. **Անեղակերտ**.

Անեղբայր *a.* without brother.

Անեղծ, *ից*, **Անեղծական**, **Անեղծանելի** *a.* incorruptible, indissoluble; indelible, not to be effaced; inviolable.

Անեղծութիւն *s.* incorruption, indissolubleness.

Անեղութիւն *s.* uncreated state.

Անեպեր *a.* unblamable.

Աներ, *ոյ* *s.* wife's father, father-in-law; – **Լիբանանու** or **Լիբանաներ**, Antilibanus.

Աներաժիշտ *a.* unmusical.

Աներաժշտութիւն *s.* ignorance of music.

Աներանամ, *ացայ* *vn.* to become father-in-law, brother-in-law.

Աներասան, **Աներասանակ** *a.* not broken in, unruly; unbridled, unreined, ungoverned, debauched. [nal.

Աներբ *a.* not bounded by time, eter-

Աներեկ, **Աներեկոյ** *a.* that has no night, that always enjoys the light; eternal, endless.

Աներեւակ, **Աներեւական**, **Աներեւակի**, *յ***Աներեւակի** *a.ad.* invisible, hidden, obscure; ignoble: invisibly.

Աներեւակայելի *a.* unimaginable.

Աներեւան S. **Աներեւակ**.

Աներեւոյթ, *ւութից* *a.ad.* invisible, vanished; imperceptible, insensible; *gr.* infinitive; *յ–ս*, *աներեւութաբար*, invisibly; –, *յ–ս լինել*, to vanish, to disappear; – *լինելն*, disappearance.

Աներեւութանամ, *ացայ* *vn.* to vanish, to disappear.

Աներեւութացուցանեմ, *ուցի* *va.* to cause to disappear, to hide. [hidden.

Աներեւութերակ *a.* whose veins are

Աներեւութիւն, **Աներեւութութիւն** *s.* disappearing, disappearance.

Աներկաթ *a.* without iron, – chains.

Աներկբայ, **Աներկբայաբար**, **Աներկբայապէս**, **Աներկբայելի** *a.* doubtless, indubitable, sure, certain, unquestionable, incontestable, indisputable; *ad.* doubtless, indubitably, certainly.

Աներկբայութիւն *s.* certainty, certitude.

Աներկեւան *a.* safe, free from danger; bold, fearless; certain, doubtless; infallible, faithful; *ad.* safely, in safety; certainly; boldly, fearlessly.

Աներկեւանութիւն *s.* safety; confidence, security; boldness.

Աներկիւղ, *յ***Աներկիւղս**, **Աներկիւղաբար** *a.ad.* fearless, bold, courageous, intrepid; fearlessly; courageously, intrepidly. [God, irreligious.

Աներկիւղած *a.* that has no fear of

Աներկիւղածութիւն *s.* irreligion.

Աներկիւղութիւն *s.* fearlessness.

Աներկմիտ, **Աներկմտելի** *a.* without hesitation, resolute, certain.

Աներկուանալի S. **Անյերկուանալի**.

Աներկրագործելի *a.* that cannot be cultivated.

Աներկրպագու *a.* that does not adore, indevout, irreligious. [in-law's son).

Աներորդի *sm.* brother-in-law, (father-

Անեփ *a.* not enough cooked, raw.

Անզանազան *a.* indifferent.

Անզանազանութիւն *s.* indifference.

Անզարդ *a.* unadorned, without embellishment; unpolished, uncivilized.

Անզարդանամ, *ացայ* *vn.* to be divested of ornament.

Անզարդացուցանեմ, *ուցի* *va.* to divest of ornament, to despoil, to disfigure.

Անզարդիմ, *եցայ* *vn.* S. **Անզարդանամ**.

Անզարդութիւն *s.* state of any thing without ornament, disfiguration, despoliation.

Անզաւակ, *աց a.* childless; barren.

Անզաւակեմ, *եցի*, **Անզաւակեցուցանեմ**, *ուցի va.* to deprive of childring, to kill children.

Անզաւակիմ, *եցայ vn.* to be bereaved of children.

Անզաւակութիւն *s.* state of a person bereft of children; barrenness.

Անզբաղ *a.* at leisure, disengaged, unemployed, undisturbed.

Անզբաղութ̃ի *s.* leisure, tranquillity.

Անզբօս S. **Անզբաղ**.

Անզբօսութիւն S. **Անզբաղութիւն**.

Անզգալի *a.* insensible, imperceptible.

Անզգամ, *աց a.* rascally, knavish, roguish, wicked; foolish, mad.

Անզգամաբար *ad.* foolishly, stupidly; imprudently, perversely.

Անզգամեցուցանեմ, *ցուցի va.* to enrage, to make wicked.

Անզգամիմ, *մեցայ vn.* to be rascally, to be knavish, to be wicked; to become mad, to grow mischievous.

Անզգամութիւն *s.* roguery, knavery; malignity, ill turn, wicked action.

Անզգայ, *ից a.* insensible, inanimate, dull, stupid; besotted, infatuated, stupified.

Անզգայ, **յԱնզգայ**, **յԱնզգայս**, **Անզգայաբար** *ad.* insensibly, imperceptibly; stupidly.

Անզգայական S. **Անզգայ** *a.*

Անզգայանամ, *ացայ vn.* to be insensible, to be stupid; to be infatuated.

Անզգայացուցանեմ, *ուցի va.* to infatuate, to stupify, to hebetate; to deprive of reason.

Անզգայիմ, *եցայ* S. **Անզգայանամ**.

Անզգայութիւն *s.* insensibility, stupidity, apathy, indolence, lethargy.

Անզգայուն, *յնոց a.* insensible.

Անզգաստ, *ից a.* not vigilant, careless, inattentive; *յ-ս*, *յ-ից ad.* insensibly.

Անզգաստութիւն *s.* want of a vigilance, carelessness, inattention.

Անզգոյշ, *գուշից a.* incautious, uncircumspect, inconsiderate, imprudent, unwary, heedless.

Անզգոյշ, **Անզգուշաբար** *ad.* without precaution, inadvertently, imprudently.

Անզգուշութիւն *s.* want of circumspection, unwariness, imprudence, inconsiderateness, negligence.

Անզգօն, *ից a.* stupid, foolish, senseless, indiscreet.

Անզեղջ, *ից a.* impenitent, irreclaimable; irrevocable.

Անզերծ *a.* inextricable.

Անզէն *a.* unarmed.

Անզիրկ *a.* undeprived.

Անզղջական S. **Անզեղջ**.

Անզղջանալի *a.* not to be repented of, not to be regretted.

Անզղջութ̃ի *s.* impenitence, obduracy.

Անզնին, **Անզննական**, **Անզննելի** *a.* inconsiderable, imperceptible.

Անզոհ *a.* without sacrifice; unworthy to be sacrificed.

Անզոյգ *a.* odd, not a pair; different, dissimilar; – *գործել*, to spoil the pair, to render dissimilar.

Անզովանալի *a.* that cannot be refreshed.

Անզուգական *a.* matchless, incomparable, unparalleled, unequalled.

Անզուգականութ̃ի *s.* matchlessness, incomparableness, excellence.

Անզուգակցութիւն *s.* disjunction, separation: virginity.

Անզուգութիւն *s.* disparity, inequality; disjunction, separation; discord, division, dissension, disunion: virginity.

Անզրաւ, **Անզրաւական** *a.* interminable, infinite, perpetual.

Անզօշաքաղ *a.* disinterested.

Անզօր, *աց a.* without power, weak, impotent, feeble; unmanly, fainthearted; inefficacious, insufficient; invalid.

Անզօրանամ, *ացայ vn.* to lose strength, to be feeble.

Անզօրացուցանեմ, *ուցի va.* to render feeble, without force, to render powerless.

Անզօրութիւն *s.* weakness, feebleness; invalidity.

Անէ, *էից*, **Անէակ** *a.s.* that does not exist, null, none: nothing, non-entity.

Անէծք, *նիծից s.pl.* imprecation, malediction; execration, horrour, detestation.

Անէութիւն *s.* nothingness.

Անըղձալի, **Անըղձանալի** *a.* not desirable, detestable.

Անըմբեր, **Անըմբերելի** *a.* impatient; intolerable, insupportable.

Անըմբռնելի *a.* that cannot be taken; incomprehensible, inconceivable.

Անընդդիմաբանելի, **Անընդդիմադրելի** *a.* incontestable, indisputable.

Անընդդիմակ, **Անընդդիմակայ**, **Անընդդիմակաց** *a.* unresisting; resistless, irresistible.

Անընդդիմահար *a.* not opaque, transparent.

Անընդել, etc. S. *Անընտել*, etc.

Անընդհատ *a.* uninterrupted, continual, successive; *ad.* uninterruptedly, successively.

Անընդմիջաբար *ad.* immediately.

Անընդմիջական *a.* immediate.

Անընդմիջելի *a.* inseparable, indivisible; continual.

Անընդոստ *a.* that cannot be jolted out of its place, fast; firm, steadfast.

Անընդունակ *a.* incapable, unqualified, insufficient.

Անընդունակութիւն *s.* incapacity, inability.

Անընդունելի *a.* inadmissible.

Անընթեռնլի *a.* illegible, unreadable.

Անընթրիք *a.* supperless.

Անընկալ S. *Անընդունելի*; – *լինել*, to be inadmissible.

Անընկեր *a.* without companion, alone.

Անընկերական *a.* unsociable; unsocial.

Անընկերականութիւն *s.* unsociableness.

Անընկերասէր *a.* that loves not his companions.

Անընկճելի *a.* indomitable, invincible, inflexible, unconquerable.

Անընչուճ *s.* want of fortune, poverty.

Անընտել *a.* not familiar, strange; unaccustomed; indocile, wild, savage.

Անընտելութիւն *s.* want of familiarity; disuse; indocility, ferocity.

Անընտրաբար, *Անընտրողաբար* *ad.* indiscreetly, imprudently.

Անընտրող *a.* indiscreet, imprudent.

Անընտրողութիւն *s.* indiscretion, imprudence.

Անըստգիւտ S. *Անստգիւտ*.

Անըստերիւր S. *Անստերիւր*.

Անթ S. *Անութ*.

Անթագաւոր *a.* kingless.

Անթախանձ *a.* without importunity, – intrusion.

Անթաղ *a.* unburied.

Անթանոցիկ *s.* armful, any thing carried under the arm-pit.

Անթառամ *a.* unfading; incorruptible: *s.* amaranth.

Անթատակ *s.* arm-pit.

Անթարգման, *Անթարգմանելի* *a.* without interpreter; that cannot be translated; inexplicable.

Անթարգմանաբար , *Անթարգմանապէս* *ad.* inexplicably.

Անթարթ, *Անթարթափ* *a.* earnest, steadfast; with fixed eyes.

Անթարշամ S. *Անթառամ*.

Անթաց *a.* dry.

Անթափ *a.* unspilt; raw, unprepared.

Անթափանց, *Անթափանցիկ* *a.* opaque, impenetrable.

Անթափանցկութիւն *s.* opacity, impenetrability.

Անթաքուն, *Անթաքուստ*, *Անթաքչելի* *a.* inconcealable, manifest, evident, public.

Անթեղ, *ի* *s.* wood embers; – *հարկանել*, to cover the fire with ashes.

Անթեղայ S. *Անդեղայ*.

Անթերի *a.* entire, complete, perfect; *ad.* entirely, completely.

Անթեւ, *ից* *a.* without wings.

Անթեփ *a.* peeled, scaled.

Անթեքելի *a.* inflexible, stiff.

Անթեքութիւն *s.* inflexibility, stiffness, hardness.

Անթիպատոս, *Անթիհիւպատոս* *s.* proconsul.

Անթիպատոսութիւն *s.* proconsulship.

Անթիւ *a.* innumerable, immense.

Անթլփատ *a.* uncircumcised.

Անթլփատութիւն *s.* uncircumcision; prepuce.

Անթող, *Անթողլի* *a.* unpardonable, inexpiable.

Անթոյն *a.* without poison.

Անթոշակ *a.* without pension, wages; without the last Sacrament.

Անթոռն *a.* without nephews or nieces.

Անթուական, *Անթուելի* *a.* innumerable.

Անթուրծ *a.* unbaked; – *սափոր*, urn not baked.

Անժամ *a.* too late; unseasonable; unforeseen, unexpected.

Անժաման *a.* that cannot arrive; not arrived, slow, tardy.

Անժամանակ *a.* not limited or subject to time, eternal; unseasonable.

Անժամանակաբար or *պէս* *ad.* unseasonably; eternally.

Անժամանակաւոր, *Անժամանակեալ*, *Անժամանակեայ*, *Անժամանակեան* S. *Անժամանակ*.

Անժամութիւն *s.* mischance, disappointment; unseasonableness.

Անժառանգ *a.* heirless.

Անժառանգեմ, *եցի* *va.* to deprive of heirs; to disinherit.

Անժառանգութիւն *s.* heirless state, want of succession; disinherison.

Անժխտելի *a.* incontestable, undeniable.

Անժոյժ *a.* intolerant, impatient; incontinent, intemperate, immoderate; violent.

Անժուժաբար *ad.* impatiently; intemperately.

Անժուժանամ, *ացայ* *vn.* to lose patience, to grow impatient.

Անժուժելի *a.* intolerable, insupportable. [nent, intemperate.

Անժուժկալ *a.* impatient; inconti-

Անժուժկալութիւն, **Անժուժութիւն** *s.* impatience; intolerance; incontinence, intemperance; immoderation, violence.

Անժպիտ *a.* sorrowful, grave, serious (in countenance).

Անիծ, *անծոյ* *s.* nit. [curse.

Անիծաբանութիւն *s.* malediction,

Անիծաբեր *a.* that bears a curse; that curses. [imprecation.

Անիծագրութե *s.* malediction, curse,

Անիծակուռ, **Անիծակուր** *a.* loaded with curses; – *առնել*, to load with maledictions.

Անիծանեմ, *իծի*, **Անիծեմ**, *եցի* *va.* to curse, to imprecate; to detaste, to loathe, to abhor, to forswear, to deny upon oath. [S. **Անիծակուռ**.

Անիծապարտ *a.* worthy to be cursed;

Անիծեալ *a.* cursed.

Անիմայ S. **Անիմաստ**.

Անիմանալի *a.* unintelligible, inconceivable, incomprehensible.

Անիմանալիութե *s.* unintelligibility; incomprehensibility.

Անիմաստ *a.* foolish, senseless, insipid; irrational, absurd.

Անիմաստասէր *a.* that does not love wisdom, ignorant; unphilosophical.

Անիմաստասիրութիւն, **Անիմաստութիւն** *s.* folly, senselessness, absurdity.

Անիմաց *a.* incomprehensible; insensible. [nothingness.

Անինչ, *ընչից* *a.* pennyless, poor; *s.*

Անիշխան *a.* without a prince, – chief, – governor, in anarchy; vulgar, plebeian.

Անիշխանութիւն *s.* anarchy.

Անիսկ, *ից* *a.* not real, false; accidental.

Անիսոն, *ի* *s.* anise.

Անիրան *a.* bodiless, difformed.

Անիրաւ, *աց* *a.* unjust, iniquitous, wicked; injurious, offensive; perfidious, disloyal; false, illegitimate; tyrannical; *ad.* –, *յ–ի*, *յ–ս*, unjustly, iniquitously.

Անիրաւատեաց *a.* that hates the unjust or the injustice.

Անիրաւացի *a.ad.* unjust; *ad.* unjustly.

Անիրաւեմ, *եցի* *va.* to offend, to sin against, to wrong, to injure, to abuse, to hurt.

Անիրաւիմ, *եցայ* *vn.* to be unjust, to be unrighteous; to sin, to fail in duty.

Անիրաւութիւն *s.* injustice, iniquity; injury, wrong, offence, affront; trespass; oppression.

Անիւ, *նուոյ*, *նուի*, *ուաց* *s.* wheel; – *մեքենայի*, – of a machine; –*յեսանի*, grindstone; – *խորակաց*, jack; – *տղայոց*, gig; – *առաջակողման նաւին*, capstern, capstan.

Անլեզու *a.* without a tongue, dumb.

Անլիութիւն *s.* imperfection, fault; – *հասակի՝ ամաց*, youth.

Անլիր *a.* incomplete, imperfect.

Անլուկ *a.* free from vexation, tranquil.

Անլծակից, **Անլծորդ** *a.* disjoined, separate; that cannot be united; virgin.

Անլոյծ, *լուծից* *a.* indissoluble; insoluble.

Անլոյս *a.* dark, obscure.

Անլու *a.* disobedient. [pure.

Անլուայ, **Անլուաց** *a.* unwashed, im-

Անլուծական, **Անլուծանելի** *a.* indissoluble, incorruptible; insoluble, not to be decomposed; that cannot be deciphered. [ble.

Անլուծիչ *a.* indissoluble, incorrupti-

Անլուութիւն S. **Անլսողութիւն**.

Անլուսին *a.* moonless, dark.

Անլուր *a.* unheard of, new, extraordinary; deaf; disobedient; without news, – tidings.

Անլռաբար, **Անլռական**, **Անլռելի** *a.* that never ceases to speak; incessant; *ad.* incessantly.

Անլսող *a.* deaf; disobedient.

Անլսողութիւն *s.* disobedience.

Անլսուրդ S. **Անլսող**.

Անխաբ *a.* infallible; sure.

Անխախուտ, **Անխախտ**, **Անխախտական**, **Անխախտելի** *a.* firm, unshakeable; indissoluble, incorruptible; inviolable.

Անխակ *a.* ripe. [peace, turbulent.

Անխաղաղասէր *a.* that loves not

Անխաղաց *a.* without movement, stationary; indeclinable.

Անխայեմ, *եցի* *vna.* to be economical; to spare, to except; to respect; to preserve.

Անխայութիւն *s.* economy; respect; exemption; preservation.

Անխառն *a.* unmixed, simple, pure.

Անխառնութիւն *s.* purity, unmixed state; intemperance.

Անխարդախ *a.* sincere, ingenuous; loyal, faithful; simple, unadulterated; well disposed; *ad.* sincerely; loyally, faithfully, with simplicity, innocently.

Անխարխար *a.* unruined, solid.

Անխարիսխ *a.* without base or foundation; anchorless.

Անխարշ *a.* not boiled, raw.

Անխաւար *a.* clear, luminous, bright.

Անխափան *a.* incessant, unintermitted, unceasing, continual; unobstructed; *ad.* without opposition or intermission, constantly, incessantly, continually.

Անխզելի *a.* indivisible, infrangible.

Անխէթ *a.* unsuspicious; sincere.

Անխիղճ *a.* not scrupulous; unexceptionable.

Անխիտ *a.* thin, uncompact, porous.

Անխղճական S. *Անխիղճ.*

Անխմոր, *ից* *a.* unleavened, azymous, unfermented. [stitute.

Անխնամ *a.* unprotected, forlorn, de-

Անխնամակալու *a.* that does not protect; unprotected, forlorn.

Անխնամեմ, *եցի* *va.* to be careless.

Անխնամութիւն *s.* carelessness, heedlessness.

Անխնայ, *յ–*, *a.ad.* without compassion; indiscreetly, prodigally, profusely.

Անխնայեմ, *եցի* *vn.* to be lavish, to be prodigal; to be void of compassion.

Անխնայութիւն *s.* cruelty; prodigality, profusion.

Անխնդիր *a.* unsought, unsearched.

Անխոհեմ *a.* imprudent, indiscreet; inconsiderate, unadvised, rash.

Անխոհեմաբար *ad.* imprudently.

Անխոհեմութիւն *s.* imprudence.

Անխոյզ *a.* that does not search or examine; unsought, unsearched; inscrutable, unsearchable.

Անխոնարհելի *a.* that cannot be humbled, stern, undaunted: firm.

Անխոնաւ *a.* unmoist, dry.

Անխոնջ *a.* indefatigable; fresh, unfatigued; stubborn, obstinate; *ad.* indefatigably. [diment.

Անխոչ *a.* without obstacle or impe-

Անխոռ *a.* not stolen, not purloined, not undermined, entire, perfect.

Անխոտոր, *Անխոտորնակ* *a.* that does not wander; straight. [artless.

Անխորամանկ *a.* ingenuous, naive,

Անխորհուրդ *a.* inconsiderate, rash, imprudent.

Անխորհուրդ, *Անխորհրդաբար* *ad.* imprudently, inconsiderately, without riflection. [ness.

Անխորհրդածութիւն *s.* thoughtless-

Անխորհրդապահ, *աց* *a.* that does not keep secret, indiscreet.

Անխորհրդապահութի̅ *s.* indiscretion.

Անխորհրդութիւն *s.* inconsiderateness, rashness, temerity.

Անխորշ *a.* without a bay.

Անխորշելի *a.* inevitable.

Անխոց, *Անխոցելի* *a.* invulnerable.

Անխոցութիւն *s.* invulnerability.

Անխուզ *a.* indestructible; inconsiderate, blind, unthinking.

Անխուճապ *a.* intrepid, calm.

Անխռով *a.* unruffled, calm, peaceable.

Անխռով, *Անխռովաբար* *ad.* without perturbation. [lity.

Անխռովութիւն *s.* calmness, tranquil-

Անխտիր, *յԱնխտիրս*, *Անխտրաբար* *a. ad.* indifferent; indiscreet; indifferently; indiscreetly.

Անխտրոց *a.* without interval or intermedium. [cretion.

Անխտրութիւն *s.* indifference; indis-

Անխրախոյս, *Անխրախուսելի* *a.* disheartened, dispirited, cowardly.

Անխրամ, *Անխրամատելի* *a.* breachless, solid.

Անխրատ, *ից*, *Անխրատական* *a.* undisciplined, irregular, licentious, incorrigible.

Անխրատութիւն *s.* indocility; irregularity, licentiousness; incorrigibleness.

Անխօս *a.* dumb; irrational.

Անխօսանամ, *ացայ* *vn.* to become dumb; to be dumb; to be silent.

Անխօսութիւն *s.* dumbness; irrationality.

Անխօսուն, *սնոց* S. *Անխօս.*

Անծագելի *a.* that cannot be enlightened, dark, gloomy.

Անծախ, *Անծախական* *a.* inconsumable; incombustible.

Անծախաբար, *Անծախապէս* *ad.* without being consumed.

Անծաղիկ *a.* that does not flower or blossom. [serious.

Անծաղր *a.* that never smiles, grave,

Անծաղրածու, *աց* *a.* that does not

ridicule, not scornful, not apt to deride. [tough.

Անծամ *a.* that cannot be chewed,

Անծանակ *a.* that is not mocked; free from shame.

Անծանօթ, *ից* *a.* ignorant; unknown; foreign; ignoble, obscure; *յ-ս*, *ad.* ignorantly, unwittingly; incognito, without being known; *յ-ս լինել*, to be in disguise; to feign or counterfeit.

Անծանօթանամ, *ացայ* *vn.* to be unknown; to be disguised.

Անծառ *a.* treeless.

Անծառայ *a.* free; without servants.

Անծառայական *a.* that is not servile, free.

Անծամքելի S. ***Անծամ.*** [tile.

Անծաւալելի *a.* irreducible; not duc-

Անծեղ, *ագ* *s.* magpie, pie.

Անծեր, ***Անծերական***, ***Անծերանալի*** *a.* not subject to the effects of age, perpetual, durable. [ren, steril.

Անծին *a.* unbegotten, unborn; bar-

Անծնելութիւն *s.* unborn state.

Անծնութիւն *s.* barrenness: S. ***Անծնելութիւն.*** [steril.

Անծննդական, ***Անծնունդ*** *a.* barren,

Անծննդութիւն *s.* sterility.

Անծուծ *a.* that does not give suck; that no longer suckles.

Անծուփ *a.* not agitated by the waves, calm, peaceable.

Անկ, *ից* *a.* proper, fit; *– է*, *v.imp.* it ought, it is right, it is proper; *յ– ելանել*, to be completed, accomplished, finished.

Անկազմ *a.* unbuilt, unfurnished, unprepared, not ready; unbound.

Անկազմութիւն *s.* want of construction, unfurnished state, imperfection.

Անկախ *a.* independent, free; free from all attachment, disengaged.

Անկախութիւն *s.* independence, freedom.

Անկած, *ից* *a.* fallen; abject, vile, despicable; booty, spoil.

Անկածութիւն *s.* fallen state, humiliation. [*ad.* involuntarily.

Անկամ *a.* involuntary, forced; *յ-ս*,

Անկամակութիւն, ***Անկամութիւն*** *s.* unwillingness, constraint, compulsion.

Անկայ, ***Անկայական***, ***Անկայան***, ***Անկայուն*** *a.* unestablished, unfounded, unsupported, uncertain, frail.

Անկան, *ից* *s.* mortar; *լեսուլ յ-ի*, to pound or beat in a mortar.

Անկանգնելի *a.* that cannot rise again; that cannot be reestablished.

Անկանեմ, *անկի* *va.* to lay the groundwork of lace; to weave; to twine.

Անկանիմ, *անկայ* *vn.* to fall; to chance, to happen; to descend, to flow; to steal away, to slip away, to escape; to fall to ruin, to decay, to be impaired, to decline, to fail; to place one's self, to fix one's self, to belong, to have relation to; to put down, to deposit; to pass away; *– ընդ*, to undergo; to sink under; *– երեսաց*, to be put out of countenance, to be abashed; *– զբանիւք*, to hold a long discourse; *– յոք*, to associate with (any one), to be intimate with, to confide in; *– ի միտս*, *զմտօք*, *ի սիրտ*, to remember, to recall; *– ի ճանապարհ*, *ի չու*, *յուղի*, to voyage, to travel; *– ի վերայ*, to come upon unawares, to attack, to surprise; *– ի մտաց*, to become made, to lose one's reason; *– ի կենաց*, to die, to lose one's life; *– ի յուսոյ*, to lose hope, to become desperate; *– ի վերայ երեսաց*, to fall upon one's face, to prostrate; *– յոտս ուրուք*, to throw one's self or fall at the feet of some one; *– ի ձեռս ուրուք*, to fall in the hands or power of some one; *– ընդ ումեք*, *ընդ միմեանս*, *այր ընդ այր*, to come to blows, to fight, to combat, to quarrel, to dispute; *– յիշխանութենէ*, to lose one's authority, to fall from one's power.

Անկանոն *a.* irregular, anomalous.

Անկանոնութիւն *s.* irregularity, anomaly. [the apocrypha.

Անկանոնական *a.* apocryphal; *– գիրք*,

Անկաշառ, ***Անկաշառառու*** *a.* that does not take bribes, incorruptible, honest.

Անկապ *a.* loose, untied, free.

Անկապուտ, ***Անկապտելի*** *a.* that cannot be plundered or robbed.

Անկասելի *a.* incessant, unceasing.

Անկասկած, *ից* *a.* sure, certain, indubitable.

Անկասկած, ***Անկասկածելի***, ***յԱնկասկածի***, ***յԱնկասկածս***, ***Անկասկածաբար*** *ad.* surely, certainly, doubtless.

Անկատակ *a.* not in jest, serious.

Անկատար *a.* imperfect, incomplete, defective, faulty; *ad.* imperfectly, incompletely, faultily; *s. gr.* imperfect tense.

Անկատարած *a.* infinite, endless.

Անկատարելութիւն, ***Անկատարութի***

s. imperfection, incomplete state; defectiveness, want, faultiness.

Անկար *a.* seamless; not sewed: incapable, unable, weak, feeble, impotent; impossible; – *է*, it is impossible.

Անկարանամ, *ացայ* *vn.* to be unable, to be incapable, to be insufficient.

Անկարգ *a.* without order, in disorder, disorderly, irregular, confused, indistinct, not methodical; intemperate, inordinate, immoderate, excessive, licentious.

Անկարգ, **յԱնկարգ**, **Անկարգաբար**, **Անկարգապէս** *ad.* disorderly, out of order, in confusion, irregularly; inordinately, excessively, intemperately.

Անկարգեմ, *եցի* *va.* to disorder.

Անկարգութիւն *s.* disorder, confusion, irregularity; inordinateness, intemperance, excess, immoderation.

Անկարելի S. **Անհնարին**.

Անկարեկան S. **Անախտ**.

Անկարեկիր, **Անկարեկից** *a.* incompassionate, cruel, inhuman; inflexible, inexorable.

Անկարեկցութիւն *s.* want of compassion, insensibility.

Անկարծ, **Անկարծելի** *a.* unexpected, unforeseen, extraordinary, unaccountable; *յ—ս*, *ad.* suddenly.

Անկարկատ, **Անկարկատելի** *a.* not mended, not repaired; irreconcilable.

Անկարող *a.* unable, feeble, incapable.

Անկարողանամ S. **Անկարանամ**.

Անկարութիւն *s.* impossibility; incapacity.

Անկարօտ *a.* not indigent, not in want.

Անկարօտաճեմ *a.* not compelled to move on the ground.

Անկարօտութիւն *s.* plenitude, fulness, abundance.

Անկաւոր S. **Ցանգաւոր**.

Անկելանոց, *աց* *s.* hospital.

Անկեղակարծ *a.* certain, sure.

Անկեղծ, *ից*, **Անկեղծական**, **Անկեղծաւոր**, **Անկեղծիկ** *a.* sincere, candid, frank, ingenuous; true, loyal, faithful; *ad.* sincerely, ingenuously, candidly.

Անկեղծութիւն *s.* sincerity, candour; loyalty, fidelity; honour, truth.

Անկեղտ *a.* unsullied, pure.

Անկենդան *a.* lifeless, dead; cold, without ardour, – animation; inanimate; *s. chem.* azote.

Անկեր, **Անկերակուր** *a.* that does not eat; not eaten: that has nothing to eat, famished.

Անկերակրութիւն *s.* want of food; hunger: phthisis.

Անկերպ, **Անկերպարան** *a.* shapeless; unformed, imperfect; ugly.

Անկերպագրելի *a.* that cannot be figured; not to be described; unimaginable. [*s.* deformity.
Անկերպարանութիւն, **Անկերպութի**

Անկերպաւոր S. **Անկերպ**.

Անկէզ, **Անկիզելի** *a.* unburnt; incombustible. [pause, eternal.
Անկէտ *a.* without a point; without

Անկիզանող *a.* not fit to burn; that will not burn.

Անկին *a.m.* unmarried.

Անկիր *a.* not subject to passions; impassive, incapable of suffering.

Անկիրթ *a.* uncultivated, uncivilized, unpolished; indocile, untractable.

Անկից *a.* not united, separate; not closed, not healed.

Անկիւն, *կեանց* *s.* angle; corner, nook; – *ճանապարհի*, turning of the road; *բութ* –, obtus-angled, obtusangular; *սուր* –, acute-angled; – *հաստանել*, S. **Ական հաստանել**.

Անկիւնական *a.* angular; – *վէմ*, *քար*, corner-stone.

Անկիւնաչափ *s.* goniometer.

Անկիւնաչափութիւն *s.* goniometry.

Անկիւնաւոր *a.* angulous, angular.

Անկղ S. **Անգղ** and **Անղեղ** *s.* [lute.
Անկղխտանամ, *ացայ* *vn.* to be disso-

Անկնդրուկ *a.* without incense, – oblation.

Անկնիք, **Անկնքելի** *a.* not marked, unsealed: not baptized.

Անկշիռ, **Անկշռելի** *a.* that cannot be weighed; inestimable, incomparable.

Անկոխ, **Անկոխելի** *a.* untrodden, desert.

Անկողին, *ղնոյ*, *նից*, *նաց* *s.* bed; mattress; nuptial couch; – *անպիտան*, *անարգ*, truckle-bed; *խորշ անկողնոյ*, alcove; *դնել յանկողնի*, *ննջեցուցանել*, to put to bed; *գնալ յ–*, *ննջել*, to go to bed: *փետրալից* –, feather-bed; *յարդալից* –, straw-bed; *–ս արկանել*, to make a bed; *մտանել յ–*, to go to bed; *յառնել յանկողնէ*, to get up; *յարդարել զ–*, to make the bed; *անկեալ դնել յանկողնի*, to take to one's bed.

Անկողնագործ *s.* mattress-maker.

Անկողնակից *s.* bed-fellow.

Անկողնակցութիւն *s.* bed-fellowship.

Անկողնարկ լինիմ *vn.* to make a bed.

Անկողոպուտ, **Անկողոպտելի** *a.* that cannot be plundered, not subject to devastation.

Անկոչ *a.* uncalled, not named; uninvited; – *բազմական*, parasite, smell-feast, trencher-friend.

Անկոտոր *a.* infrangible, hard.

Անկործան *a.* not fallen; that cannot fall or be thrown down.

Անկորուստ *a.* that cannot be lost, imperishable; *ad.* without loss.

Անկուած, *ոց* *s.* weaving, texture; weft.

Անկուածոյ, *ից* *a.* woven.

Անկումն *s.* fall, tumble; overthrow, ruin, subversion; degradation; cadence; *վերստին* –, second fall; relapse.

Անկուշեմ, *եցի* *va.* to kick, to strike with the hind feet; to resist, to reject.

Անկուռ *a.* rough, rude, uneven, rugged.

Անկոփ *a.* not carved, unpolished, rough.

Անկռինչ *a.* without cries; unable to cry out.

Անկռիւ *a.* without contention, – resistance, – quarrel.

Անկռուելի *a.* impregnable; invincible.

Անկտակ *a.* intestate.

Անկրական *a.* impassive, insensible.

Անկրելի *a.* unable to bear; insupportable.

Անկրթական S. **Անկիրթ**.

Անկրթութիւն *s.* want of discipline, indocility, rudeness.

Անկրօն, *ից* *a.* irreligious.

Անկրօնութիւն *s.* irreligion.

Անկցորդ *a.* disjoined, separate; that does not participate, that takes no share.

Անկքելի *a.* inflexible.

Անհագագ *a.* speechless; without aspiration; breathless.

Անհալ *a.* not fusible; indissoluble; indigest.

Անհակառակելի *a.* indisputable, irresistible.

Անհակառակութի *s.* pacific conduct.

Անհաղորդ, *ից* *a.* that does not participate; incommunicable: that does not receive the communion.

Անհաղորդական *a.* incommunicable.

Անհաճոյ *a.* unpleasant, disagreeable, offensive; disgustful; – *իմն օրինակաւ*, disagreeably; – *լինել*, to displease; to disgust.

Անհաճոյանամ, *ացայ* *vn.* to displease, to be disagreeable.

Անհամ, *ից* *a.* insipid, unsavoury; nauseous, disgustful.

Անհամաձայն *a.* discordant, dissonant, incongruous; S. **Անմիաբան**.

Անհամաձայնութիւն *s.* discord, dissension, misunderstanding; disconvenience, incongruity, unsuitableness; S. **Անմիաբանութիւն**.

Անհամանամ, *ացայ* *vn.* to grow insipid, to be nauseous, to be disgustful.

Անհամառօտ *a.* not brief, not concise, prolix.

Անհամար *a.* innumerable, infinite.

Անհամբաւ S. **Վատահամբաւ**.

Անհամբաւեալ *a.* not divulged or made public.

Անհամբեր *a.* impatient; intolerant.

Անհամբերութիւն *s.* impatience; intolerance.

Անհամբոյր *a.* haughty, unsociable, reserved, austere, churlish, uncivil, morose, sullen, surly, harsh, forbidding.

Անհամեմատ, **Անհամեմատական**, **Անհամեմատելի** *a.* disproportionate; incomparable, unparalleled, matchless.

Անհամեմատաբար *ad.* incomparably, disproportionally.

Անհամեմատութիւն *s.* disproportion; inequality.

Անհամեստ *a.* immodest, unchaste, obscene.

Անհամեստութիւն *s.* immodesty.

Անհամիմ S. **Անհամանամ**.

Անհամոզելի *a.* unpersuadable.

Անհամութիւն *s.* insipidity, ill flavour; nauseousness.

Անհայր *a.* fatherless.

Անհանգէտ *a.* not conformable, dissimilar, unequal; inconsequent, not inferible.

Անհանգիստ *a.* restless, fretful, agitated; turbulent, unquiet, tumultuous; *ad.* incessantly, always; – *կալ*, to fret, to be agitated, to fidget; – *առնել*, to fret, to agitate.

Անհանգիտութիւն *s.* disparity, inequality.

Անհանգստութիւն *s.* inquietude, uneasiness; agitation.

Անհանդարտ *a.* fidgety, inquiet, noisy.

Անհանդարտութիւն S. **Անհանգստութիւն**.

Անհանդերձ *a.* unclad, naked.

Անհանդուրժակ, **Անհանդուրժական**, **Անհանդուրժելի** *a.* intolerable, insupportable.

Անհանճար, ից, աց *a.* foolish, imprudent, ill-advised.

Անհանճարաբար *ad.* foolishly, imprudently.

Անհանճարագոյն *a.* more or very foolish.

Անհանճարական S. **Անհանճար.**

Անհանճարութիւն *s.* folly, imprudence; insipidity, dulness.

Անհաշիւ S. **Անհամար.**

Անհաշտ, Անհաշտական, Անհաշտելի *a.* implacable, irreconcilable.

Անհաս, ից *a.* imperceptible, incomprehensible, inconceivable; unripe.

Անհասակայ, Անհասական, Անհասանելի S. **Անհաս.**

Անհասութիւն *s.* incomprehensibility: unripeness.

Անհաստատ *a.* inconstant, changeable, variable, alterable: fragile.

Անհաստատութն *s.* inconstancy, instability, mutability, frailty: fragility.

Անհատ, ից *a.* undivided, indivisible, inseparable; incessant, continual; *s.* individual, one, atom.

Անհատաբար *ad.* indivisibly, inseparably; individually.

Անհատական *a.* individual, atomic.

Անհատահոս *a.* that flows incessantly.

Անհատուած, Անհատուածելի *a.* indivisible, inseparable.

Անհատութիւն *s.* inexhaustibleness; individuality.

Անհատուցումն *a.* that cannot be payed.

Անհարազատ *a.* illegitimate, bastard, base-born, natural; altered, corrupted, false.

Անհարազատութիւն *s.* bastardy; falseness, alteration.

Անհարթ *a.* crooked, uneven, rough, rugged; awkward, rude, unpolished, coarse.

Անհարթութիւն *s.* unevenness, inequality of surface; want of politeness, rudeness, awkwardness, harshness, roughness, coarseness; – *օդոց*, intemperance.

Անհարթչելի *a.* inevitable; fearless, assured.

Անհարկ *a.* exempt from tax or impost.

Անհարսն, Անհարսնական, Անհարսնացեալ *a.f.* unmarried; whose marriage has not been consummated, virgin.

Անհարց *a.ad.* without asking.

Անհաց *a.* without bread, – the means of subsistence.

Անհաւան, ից *a.* incredulous, who makes difficulties; obstinate, stubborn, headstrong.

Անհաւանական, Անհաւանելի *a.* improbable, unlikely.

Անհաւանիմ, եցայ *vn.* to differ in opinion, to disagree; to be obstinate; to disapprove, to disallow.

Անհաւանութիւն *s.* incredulity; disapprobation; obstinacy.

Անհաւասար *a.* unequal.

Անհաւասարապէս *ad.* unequally.

Անհաւասարութիւն *s.* inequality, disparity, disproportion.

Անհաւաստի *a.* uncertain, unassured, doubtful; contingent, casual.

Անհաւաստութիւն *s.* incertitude, doubt, uncertainty; contingency.

Անհաւատ, ից *a.* incredulous, unbelieving, infidel, irreligious; incredible; – *լինել*, to disbelieve.

Անհաւատալի *a.* incredible.

Անհաւատամ, ացի, Անհաւատանամ, ացայ *vn.* to disbelieve.

Անհաւատարիմ *a.* unfaithful, disloyal, perfidious.

Անհաւատարմութիւն *s.* infidelity, disloyalty, treason, perfidy.

Անհաւատեմ, Անհաւատիմ S. **Անհաւատամ.**

Անհաւատութիւն *s.* incredulity, infidelity, irreligion.

Անհեդեդ, Անհեթեթ *a.* unfit, inept, foolish, absurd, fantastical, whimsical, grotesque, ridiculous, extravagant, silly, ill-shaped, ill-contrived, awkward; *–ս*, *ad.* absurdly, fantastically, ridiculously, awkwardly.

Անհեդեդութիւն, Անհեթեթութիւն *s.* absurdity, whim, extravagance; awkwardness, unfitness.

Անհետ *a.* without vestige, untraced; – *առնել*, to annihilate; – *լինել*, to be annihilated.

Անհետազօտ, Անհետազօտելի *a.* that cannot be traced or investigated; impenetrable, inscrutable.

Անհետանամ, Անհետիմ S. **Անհետ լինել.**

Անհերքելի *a.* irrefutable; undeniable, incontestable.

Անհզօր S. **Անզօր.**

Անհիմն *a.* without foundation, – base.

Անհիւթ, Անհիւթական *a.* sapless, marrowless; incorporeal, immaterial, spiritual.

Անհմուտ *a.* unpractised, untried, new, inexperienced, ignorant.

Անհմտաբար *ad.* inexperienced, without ability, – knowledge of.

Անհմտութիւն *s.* inexperience, unskilfulness, ignorance.

Անհնազանդ *a.* disobedient, refractory, rebellious; – *լինել*, to disobey.

Անհնազանդիմ, *եցայ vn.* to disobey, to rebel. [transgression.

Անհնազանդութիւն *s.* disobedience,

Անհնար, *ից a.* impossible; *յ–ս մտանել*, to get embarrassed, to be entangled, to want resources, to be reduced to extremities, not to know what to do; *յ–իցն է*, it is impossible.

Անհնարագոյն *a.* quite impossible; very difficult.

Անհնարաւոր *a.* impossible; imaginary; excessive, violent.

Անհնարիմ, *եցայ vn.* to be impossible; to be irremediable, to be desperate.

Անհնարին *a.ad.* impossible; extremely difficult; insupportable, intolerable; extreme, violent, excessive, enormous, horrible, terrible.

Անհնարութի *s.* impossibility. [old.

Անհնութիւն *s.* act of never growing

Անհոգ, *աց a.* negligent, heedless, indifferent, inattentive; confident, sure; –, *յ–ս*, *ad.* negligently, carelessly; confidently; indifferently; *յ–ս կալ լինել*, to be negligent or indifferent.

Անհոգանամ, *ացայ vn.* to be neglectful, inattentive, indifferent.

Անհոգի *a.* without soul; spiritless; inanimate.

Անհոգութի *s.* negligence, heedlessness, carelessness, inattention, lethargy.

Անհոլով *a.* indeclinable.

Անհողմ *a.* not agitated by the wind, calm, serene. [serenity.

Անհողմութիւն *s.* want of wind, calm,

Անհովիւ *a.* without shepherd, unattended.

Անհոտ *a.* without smell.

Անհուն *a.* not fordable; unfathomable, immense.

Անհուպ *a.* that does not approach, come near, touch; inaccessible; distant, far. [need of fire.

Անհուր *a.* without fire; that has no

Անհպատակ *a.* insubordinate; not subject. [tion.

Անհպատակութիւն *s.* insubordina-

Անհպարտ *a.* not haughty, humble, unpretending.

Անհպարտութիւն *s.* freedom from pride, humility.

Անհպելի S. **Անհուպ**.

Անհրաժեշտ *a.* inevitable, indispensable, necessary; irrevocable; *ad.* indispensably, necessarily, inevitably, irrevocably.

Անհրահանգ S. **Անկիրթ**.

Անհրաման *a.* without permission or licence. [seduce.

Անհրապոյր *a.* that does not allure or

Անհրաւէր *a.* who invites nobody: S. **Անկոչ**.

Անձայն *a.* without voice; mute, without sound; consonant.

Անձայնութի *s.* loss of voice; aphony.

Անձանձիր, **Անձանձրոյթ** *a.* indefatigable, diligent; *ad.* indefatigably, diligently.

Անձաւ, *աց s.* cavern, den, cave.

Անձաւախիտ *a.* cavernous.

Անձեռագործ, **Անձեռակերտ** *a.* not made by hands, natural, spiritual.

Անձեռն *a.* handless; without succour.

Անձեռնարկելի *a.* that cannot be taken in hand, extremely difficult; untractable. [wild.

Անձեռնընտել *a.* untameable, savage,

Անձեռնկալ *a.* helpless, without succour.

Անձեռնհաս *a.* that cannot reach or accomplish, incapable, unskilful.

Անձեռոց, *աց s.* towel.

Անձեռոցիկ *s.* napkin.

Անձեւ, *ից a.* unformed.

Անձեւանամ, *ացայ vn.* to lose shape, to become deformed.

Անձիր *a.* unproductive, unfruitful; ungrateful, unthankful.

Անձխոտ *s. bot.* fumitory.

Անձկաբեկ *a.* panting with desire, very desirous. [sirable.

Անձկալի, **Անձկական** *a.* narrow; de-

Անձկակարօտ S. **Անձկայրեաց**.

Անձկամ, *ացայ vn.* to desire, to wish; to aspire to, to sigh for, to long for.

Անձկայրեաց *a.* burning with desire, sighing after. [**Անձկամ**.

Անձկանամ, *ացայ vn.* to be narrow; S.

Անձկանք *s.* lively desire, impatience; *անձկանօք*, *ad.* impatiently; *սպասել անձկանօք*, to wait impatiently.

Անձկացուցանեմ, *ուցի va.* to reduce to extremities, to force; to narrow, to contract, to restringe.

Անձկութիւն *s.* narrowness, contractedness; pressure; constraint; anxiety, inquietude, chagrin, trouble, vexation, care, affliction, tribulation, anguish.

Անձն, ձին, ձանց *s.* person; hypostasis, personality; creature, being; soul; mind; heart; myself, thyself, himself; *անձամբ*, personally; *անձամբ անձին*, by one's self, personally; *զանձամբ դառնալ*, to turn back; *զանձամբ արկանել*, to put on; *յանձին բերել*, to imitate; *յանձին ունել*, to accept, to approve; *չառնուլ յ–*, to refuse, to deny; *սիրէ նա զ– իւր*, he loves himself; *վասն անձին եւեթ տամ պատասխանի*, I only answer for myself; *երդնում յ– իմ, թէ այդ այդպէս է*, on my soul, it is so; *զգաստանալ յանձին*, to revive, to recover one's senses; *փոյթ ունի նա վասն անձին*, he takes care of himself; *անձին առնել*, to commit suicide; *ձեռն յանձին հարկանել*, to boast of, to flatter one's self, to prick one's self; *յ– առնել*, to recommend, to confide; *յ– լինել*, to commend one's self, to have confidence in, to confide in, to be committed.

Անձնագեղ, ղոյ *a.* well formed, elegant, handsome, beautiful.

Անձնագով *a.* boasting, blustering, swaggering.

Անձնագովութիւն *s.* self-praise, vainglory, arrogance; egotism.

Անձնադատ *a.* that condemns himself.

Անձնադիր *a.* that gives bail for another, responsible.

Անձնադիւր S. **Անձնդիւր.**

Անձնադսրով *a.* that blames himself.

Անձնախորոխ *a.* vain, presumptuous, haughty.

Անձնակամ *a.* voluntary, with good will; free; *– կամօք*, *ad.* willingly.

Անձնական *a.* personal; hypostatical; own.

Անձնակից *a.* unanimous, with one accord.

Անձնակործան, Անձնակորոյս *a.* that ruins himself.

Անձնահաճ, Անձնահաճոյ *a.* presumptuous, vain.

Անձնահաճութիւն *s.* presumption, pride, vanity.

Անձնահամբոյր *a.* unanimous, consentaneous.

Անձնամատն *a.* that betrays himself; *– լինել*, to betray one's self.

Անձնանախատ *a.* that reproaches himself.

Անձնանուէր *a.* self-devoted.

Անձնանուիրութիւն, Անձնանուիրումն *s.* self-devotion, self-sacrifice.

Անձնապահ *a.* on guard, cautious; *s.* royal guard, body-guard; *– լինել*, to be cautious, to be on guard.

Անձնապահապետ *s.* the commander or captain of the guard.

Անձնապանծ *a.* boastful, full of vanity; *– լինել*, to be extolled.

Անձնապաշտ *a.* that adores himself, interested, selfish, egoistical.

Անձնապարար *a.* that pampers himself, dainty, delicate.

Անձնապէս *ad.* personally; properly; hypostatically.

Անձնապուր, Անձնապուրծ *լինել՝ երթալ* *vn.* to escape, to fly, to have a narrow escape, to run away.

Անձնասէր *a.* selfish, self-interested; guilty of egotism; mild, courteous.

Անձնասիրութիւն *s.* selfishness, self-love; egotism.

Անձնասպան, այ *a.* that has committed suicide; *s.* self-murderer.

Անձնասպանութիւն *s.* suicide, self-murder.

Անձնավաճառ *a.* that sells himself.

Անձնատէր S. **Անձնիշխան.**

Անձնատոչոր *a.* that burns himself.

Անձնատուր *a.* that surrenders; addicted, subject; determined, desperate; *– լինել*, to abandon himself, to be addicted; to surrender, to capitulate; to refer.

Անձնացոյց *a.* ostentatious, pompous, full of affectation.

Անձնացուցանեմ, ուցի *va.* to be the vital or principal to an organized body, to animate; to vivify, to personify, to personate.

Անձնաւոր *a.* animated, alive, rational; personal; hypostatical.

Անձնաւորաբար *ad.* personally; hypostatically.

Անձնաւորական *a.* personal; hypostatical.

Անձնաւորեմ, եցի *va.* S. **Անձնացուցանեմ.**

Անձնաւորիմ, եցայ *vn.* to have a soul; to be animate; to live, to exist.

Անձնաւորութիւն *s.* personality; hypostasis; person.

Անձնդիւր *a.* given to pleasure, to one's own comforts, lazy, dissipated; selfish; comfortable.

Անձնդիւրութիւն *s.* dissipation; egotism, selfishness; comfortableness; անձըն-դիւրութեամբ շրջել, to live delicately.

Անձնեայ, Անձնեղ a. personable, of good appearance, tall, well made, fine limbed.

Անձնընտիր լինել, առնել va. to seek for quiet, tranquillity, ease, to look after one's interests; - առնել, to choose among men.

Անձնիշխան a. free, that has freewill, [independent.

Անձնիշխանութիւն s. freewill, choice, free agency, independence.

Անձնիւր S. **Անցնիւր**.

Անձնյարգութիւն s. self-esteem, presumption.

Անձնուրացութիւն s. self-denial, ab- [negation.

Անձուկ, ձկի, ձկոյ a.s. narrow, strait; narrow passage, defile, strait, pass; desire, wish; - ունել, to desire, to wish.

Անձրեւ, ի, ոյ, աց s. rain; - իջանել, to rain; - արտասուաց, a flood of tears; յորդ -, violent, pouring rain; անձրեւաչափ (գործի), rain-guage.

Անձրեւաբախ a. beaten by the rain.

Անձրեւաբեր a. that brings rain, rainy.

Անձրեւաթաց a. wet with rain.

Անձրեւաթիւք s. drop of rain.

Անձրեւածին a. that engenders rain; copious.

Անձրեւակ s. fine rain.

Անձրեւակաթք S. **Անձրեւաթիւք**.

Անձրեւաձիր a. that gives or engenders rain.

Անձրեւային a. rainy, that abounds in rain, formed from rain.

Անձրեւայորդ a. rainy.

Անձրեւայորդք s. shower, violent [rain.

Անձրեւանամ, ացայ vn. to fall like rain.

Անձրեւաշիթ, -ք S. **Անձրեւաթիւք**.

Անձրեւաչափ գործի s. rain-guage.

Անձրեւաջուր s. rain-water.

Անձրեւասնունդ a. produced by rain.

Անձրեւեմ, եցի vna. te rain, to shower, to pour down; անձրեւէ, it rains.

Անձրուկ s. anchovy.

Անճահ a. inconvenient, unbecoming; -ս, ad. unseemly.

Անճաճանչ a. not brilliant, gloomy.

Անճանաչելի a. unrecognizable.

Անճանապարհ S. **Անշաւիղ**.

Անճաշակ a.ad. that fasts, fasting; without eating.

Անճառ, ից a. ineffable, unspeakable.

Անճառագայթ a. without rays, - light.

Անճառահրաշ a. very wonderful, [prodigious.

Անճառաշնորհ a. of wonderful grace, very graceful, admirable; very abundant.

Անճառապատկեր a. that has an admirable figure or appearance.

Անճառելի S. **Անճառ**.

Անճառութիւն s. ineffability; unspeakableness.

Անճար, Անճարակ a. unskilful, incapable; irreparable, irremediable.

Անճարակութիւն s. inability, incapacity.

Անճարանամ, ացայ vn. to be incapable; to be without remedy, to despair.

Անճարութիւն S. **Անճարակութիւն**.

Անճետ a. without posterity; - առնել S. **Անճիտեմ**.

Անճիտեմ, եցի va. to destroy the race of, to extirpate the posterity of.

Անճնշական, Անճնշելի a. incompressible.

Անճշդութիւն s. inaccuracy.

Անճողոպրելի a. inextricable.

Անճոռնի a. gigantic, enormous, monstrous; grotesque, extravagant, absurd, ridiculous, unseemly.

Անճոռնութիւն s. monstrosity, absurdity.

Անմախասէր a. not envious, not ma- [licious.

Անմահ, ից a. immortal.

Անմահաբեր a. that immortalizes, immortal.

Անմահական a. immortal; - ճաշակ, [ambrosia.

Անմահաճաշակ a. that does not taste death, immortal; that has a foretaste of immortality.

Անմահանամ, ացայ vn. to be immor- [talized.

Անմահարար S. **Անմահաբեր**.

Անմահացուցանեմ, ուցի va. to immortalize, to eternize.

Անմահացուցիչ a. that immortalizes.

Անմահութիւն s. immortality.

Անմայր a. motherless.

Անմասն a. without share or portion, that does not participate; bereft, destitute; - լինել, to be destitute, to be bereft; - առնել, to deprive.

Անմատոյց, Անմատչելի a. inaccessible, unapproachable.

Անմարդ, Անմարդաբնակ a. uninhabited; uninhabitable, desert, unfrequented, lonely.

Անմարդագոյն *a.* more or very inhuman, - fierce, - unkind.

Անմարդանամ, *ացայ* *vn.* to be deserted, to be dispeopled.

Անմարդացուցանեմ, *ուցի* *va.* to depopulate, to dispeople, to desolate.

Անմարդի *a.* inhuman; unkind, uncivil, brutal; desert, uninhabited; – *կացուցանել՝ դնել*, to unman, to divest of humanity; to depopulate.

Անմարդութիւն *s.* depopulation; inhumanity, barbarity; incivility, brutality.

Անմարթ *a.* impossible; very difficult; indecent, unseemly; – *է*, it is not fit; it is impossible.

Անմարմին, **Անմարմնաւոր** *a.* incorporeal, immaterial.

Անմարմնական, **Անմարմնային** S. **Անմարմին.**

Անմարմնութիւն *s.* incorporality.

Անմարս *a.* undigested.

Անմարսութիւն *s.* indigestion.

Անմարտ, **Անմարտնչելի** *a.* impregnable, invincible.

Անմաքուր, **Անմաքրական** *a.* impure, filthy, indecent, obscene, vile.

Անմաքրապէս *ad.* impurely, indecently.

Անմաքրասէր *a.* that does not love purity, uncleanly, filthy, indecent.

Անմաքրութիւն *s.* impurity, uncleanness, filthiness, indecency.

Անմեծար *a.* vile, abject, degraded.

Անմեծարգի *a.* who desires not honour or preferment.

Անմեծարգութիւն *s.* want of ambition, indifference to honour.

Անմեծարութիւն *s.* want of respect; – *հիւրոց*, inhospitality.

Անմեկին *a.* not clear, indistinct, not evident, not explicit, not plain: indivisible.

Անմեկնելի *a.* inseparable, indivisible; inexplicable, inexpressible.

Անմեղ, *ի*, *աց* *a.* impeccable; innocent; harmless, silly; – *կացուցանել*, to acquit.

Անմեղաբար, **Անմեղս** *ad.* innocently.

Անմեղադիր *a.* that excuses, pardons; – *առնել*, to excuse, to pardon; – – *զանձն*, to excuse one's self, to justify himself.

Անմեղադրելի *a.* excusable, pardonable.

Անմեղադրութի *s.* excuse, apology.

Անմեղանամ, *ացայ* *vn.* to be innocent.

Անմեղանչական *a.* impeccable; innocent.

Անմեղացուցանեմ, *ուցի* *va.* to acquit, to declare innocent, to clear.

Անմեղկելի *a.* not to be softened, hardhearted, inflexible, inexorable.

Անմեղութիւն *s.* innocence; impeccability.

Անմեռ S. **Անմահ.**

Անմեռուկ *s. bot.* purslain.

Անմերձենալի *a.* not to be accosted, inaccessible; untouched.

Անմի առնեմ *va.* to leave not one, to exterminate.

Անմիաբան *a.* discordant, different, dissonant, diverse, divided, not agreed, at variance, contrary; irreconcilable; – *լինել*, to differ, to disagree.

Անմիաբանիմ S. **Անմիաբան լինիմ.**

Անմիաբանութիւն *s.* discord, dissension, disagreement, difference, misunderstanding; - *ձայնի*, discordance, dissonance.

Անմիասնական *a.* discordant, incompatible, inconsistent.

Անմիասնականութիւն *s.* incompatibility, inconsistency.

Անմիջաբար, **Անմիջապէս** *ad.* immediately, directly.

Անմիջական *a.* immediate, direct.

Անմիջնորդ *a.ad.* without mediator.

Անմիս *a.* fleshless; without meat.

Անմիտ *a.* mad, silly, brainless, senseless, stupid, foolish, irrational, crazy.

Անմխիթար *a.* disconsolate, inconsolable; *ad.* disconsolately.

Անմնայական *a.* inconstant, variable, uncertain, transitory.

Անմշակելի *a.* incapable of cultivation.

Անմոլար, **Անմոլոր** *a.* infallible, unerring; – *աստեղք*, fixed stars.

Անմոլորութիւն *s.* infallibility.

Անմոլորապէս *ad.* infallibly.

Երկակողմ, -կողմանի *a.* having two sides; two sided, reciprocal.

Երկակտուր *s.* diameter.

Երկահանք *s. chem.* amphibole, hornblende, tremolite.

Երկաձիւ *a.* two footed, biped.

Երկամ *s.* two years, duration of two years; S. **Երկեամ.**

Երկամանակ *a.* that has two times or measures.

Երկամեայ *a.* biennial; S. **Երկեմեան.**

Երկամասն *a.* bipartite.

Երկամուսին *s. a.* bigamist.

Երկամուսնութիւն *s.* bigamy.

Երկայն, ի *a.* long, extended; far; փոքր մի -, rather long.

Երկայնաբազուկ S. **Երկայնաձեռն.**

Երկայնաբան *a.* prolix, too diffusive, too long, long-tongued.

Երկայնաբանեմ, եցի *vn.* to be prolix in discourse, to make long tiresome speeches.

Երկայնաբանութիւն *s.* prolixity, tiresome length in a discourse.

Երկայնագոյն *ad.* too long.

Երկայնադէզ, դիզաց *a.* too long or extended, gigantic.

Երկայնածնօտ *a.* having a long jaw, long-jawed.

Երկայնակեաց *a.* that lives long; - լինել քան զոք, to outlive, to survive.

Երկայնակեցութիւն *s.* longevity.

Երկայնահասակ *a.* of too long or extraordinary a size, tall.

Երկայնահեր *a.* long-haired.

Երկայնահոգի S. **Երկայնամիտ.**

Երկայնաձգեմ, եցի *va.* to prolong, to extend.

Երկայնաձեռն *a.* long-handed.

Երկայնաձեւ *a.* long, extended; parallelogram, oblong.

Երկայնաձիգ *a.* very long, elongated; that lasts long; far.

Երկայնաճիւղ *a.* furnished with long branches.

Երկայնամիտ, մտաց *a.* patient, that suffers patiently, that perseveres; - լինել S. **Երկայնամտեմ.**

Երկայնամտեմ, եցի *vn.* to be patient, to suffer patiently, to persevere.

Երկայնամտութիւն *s.* longsuffering, patience.

Երկայնամօրուս *a.* longbearded.

Երկայնանամ S. **Երկայնիմ.**

Երկայնանիստ *a.* extended, great.

Երկայնաչափ *a.* very long.

Երկայնաչափութիւն *s.* length; longimetry.

Երկայնապատում *a.* prolix, too diffuse.

Երկայնասրունք *a.* long-legged, longshanks.

Երկայնատարած *a.* much extended.

Երկայնատուտն *a.* long-tailed.

Երկայնացուցանեմ S. **Երկայնեմ.**

Երկայնաւուրք *s.* long life, long days; -րս or -րց *a.* long lived; -րս լինել S. **Երկայնօրեայ.**

Երկայնաքիթ *a.* long-nosed.

Երկայնքանութիւն S. **Երկայնաքանութիւն.**

Երկայնեմ, *եցի va.* to lengthen, to extend, to stretch, to draw, to draw out; to prolong; – *զոտս* or *զսրունս*, to stride, to straddle.

Երկայնժամանակեայ, *-կեան a.* that lives or lasts long; of a long while or time.

Երկայնիմ, *եցայ vn.* to extend or stretch one's self; to be prolonged.

Երկայնմտութիւն *s.* longsuffering, patience.

Երկայնորդ *s. mech.* lengthening piece; adjutage, tube or pipe for waterworks.

Երկայնութիւն *s.* length; court; longitude; depth; *geog.* longitude; – *աւուրց, կենաց*, long days; length of days, long life, longevity; *խաղալ գնալ ընդ – գետոյն*, to skirt, to run along the river; *յ–*, of the length of; to the...

Երկայնօրեայ *լինիմ vn.* to live long.

Երկայր *sf.* bigamist: two men.

Երկան, *աց s.* mill; mill-stone; grindstone; – *իշոյ*, mill-stone turned by an ass; *վերին* –, upper mill-stone; *ներքին* –, lower mill-stone; S. **Երկանաքար.**

Երկանաղաց *s.* miller.

Երկանաքար (*վէմ, արձան*) *s.* millstone; mill-stone quarry; *a.* of millstone; – *հաստատուն*, bedstone, bed mill-stone, lower mill-stone; – *շարժական*, runner, upper mill-stone, top mill-stone.

Երկանաւոր *մեքենայ s.* winding-machine or engine, whim-engine.

Երկանիւ *a.* of two wheels; *s.* cabriolet, one-horse chaise; two-wheel-carriage, cab, hack-cab.

Երկանուն *a.* binominous, having two names.

Երկապաշտ, *-պաշտեայ a.* parasitic.

Երկասեր *a.* hermaphroditic.

Երկասէր, *սիրաց a.* that loves work, laborius, diligent.

Երկասիրեմ, etc. S. **Աշխատասիրեմ.**

Երկավանգ or *վանկ, ից a.* dissyllabic.

Երկավլտակ S. **Կրկնավլտակ.**

Երկատեսակ *a.* of two kinds; – *աղ s. chem.* amphid salts.

Երկատեմ, *եցի va.* to divide into two kinds, to divide.

Երկատութիւն *s.* division into two parts; – *լուսնոյ*, dichotomy.

Երկար, *աց a.* long, extended, ample; prolix: slow, tardy; *s.* length; –, *ընդ* – *ad.* long, a long while; at length.

Երկարաբան, etc. S. **Երկայնաբան**, etc.

Երկարակեաց S. **Երկայնակեաց.**

Երկարաձգեմ, *եցի va.* to lengthen, to prolong, to drag, to delay; to draw back; to continue.

Երկարաձգութիւն *s.* elongation, prolonging; duration, length, prolongation; act of going back.

Երկարաձիգ *a.* long, extended, that lasts a long time, durable. [diffuse.

Երկարապատում *a.* long, prolix,

Երկարատեւ *a.* long, that lasts long, durable.

Երկարատեւութն *s.* duration, length.

Երկարաւոր *a.* long, extended; removed, distant.

Երկարեմ, *եցի va.* to lengthen, to prolong, to stretch, to extend; to suspend; to delay, to temporize.

Երկարութիւն, **Երկարումն** *s.* length, elongation, extent, reach; prolixity.

Երկաւոր, **Երկաւորեակ**, **Երկաւորիք** S. **Երկուորեակ**, **Երկուորք.**

Երկաւուրբ, *ւուրս, ւուրց ad.* of, or for two days.

Երկաքանչիւր, *ոց a. s.* both, each, every.

Երկբայ *a.* doubtful, uncertain, undetermined, perplexed; *յ–ս լինել*, to doubt, to have doubts; to scruple, to demur; *յ–ս արկանել*, to call into question; *յ–ս ածել*, to bring into suspicion, to make suspicious.

Երկբայաբար *ad.* uncertainly, doubtfully.

Երկբայական *a.* suspicious, doubtful, problematic, uncertain.

Երկբայանամ S. **Երկբայիմ.**

Երկբայանք S. **Երկբայութիւն.**

Երկբայիմ, *եցայ vn.* to doubt, to suspect, to hesitate, to mistrust.

Երկբայութիւն *s.* doubt, hesitation, perplexity, irresolution; suspicion; incertitude, ambiguity.

Երկբան, *ից a.* amphibological, double, ambiguous; double-dealing, double-tongued.

Երկբանութիւն *s.* amphibology, ambiguous discourse, ambiguity.

Երկբաշխ *a. s.* binomial; – **Նեւտոնի**, Newton's binomial theorem.

Երկբաշխական *a.* binomial.

Երկբարբառ *a. s.* diphthong.

Երկբացիկ *a.* that opens on two sides or doubly, double; — դուռն, folding-door; — խեցեմորթ, bivalve.

Երկբերան, -նեան, -նի *a.* that has two apertures; two edged, double-biting, two-bladed.

Երկբոյս *a.* born or produced doubly, double; having two qualities.

Երկգլխի, խւոյ, **Երկգլուխ** *a.* bicipital; two-headed; double-headed.

Երկգնդիմ, եցայ *vn.* to assemble in two troops or regiments.

Երկգոգաւոր *s. phys.* bi-concave, double concave.

Երկգոյն *a.* of two colours.

Երկ գունակ *a.* of two sorts, diverse.

Երկդիմեան, -դիմի *a.* of two faces; of two sorts, diverse; deceitful, counterfeit; doubtful, equivocal, ambiguous, amphibological.

Երկդիմութիւն *s.* equivocation; dissimulation, duplicity, falsehood.

Երկդրամեան, մենից *s.* didrachm, two drachms or pence.

Երկեակ *a.* binary.

Երկեամ *a.* of two years; biennial; ղ-, lasting two years.

Երկեղ, etc. S. **Երկիւղ**, etc.

Երկեղուկ *s.* fear; -ս արկանել, to terrify, to frighten.

Երկեղուտ *a.* frightful.

Երկեմեան, մենից *a.* of two years, two years old; յերկեմենից եւ ի խոնարհ, from two years old and under.

Երկեռեակ, **Երկերեան** *a.* twice three, six.

Երկերիւր, ոց *a.* two hundred.

Երկեցուցանեմ, ուցի *va.* to intimidate, to frighten, to terrify, to cast down; to startle.

Երկեւան, **Երկեւանութիւն** *s.* doubt, suspicion, fear.

Երկթերթի *a.* of two leaves or [sheets.

Երկթեւեան *a.* of two wings.

Երկթթուուկ *s.* deutoxide.

Երկժանի *s.* fork, prong; table-fork; - զսպանակաւոր, trigger, brake with spring.

Երկին, կնի, **Երկինք**, կնից *s.* heaven; heavens, the sky, the firmament; paradise, dwelling of the blessed; air, ether; ելանել յերկինս, to ascend up into heaven; յերկինս ամբառնալ, to raise to the skies; կապուտակ —, the blue sky; կամար երկնից, the arch or vault of heaven; հուր, շանթ երկնից, the bolts of heaven; ցասումն երկնից, the wrath of heaven; —ք եւ երկիր, heaven and earth; —ք! արդա՛ր —ք, heavens! good heavens! ջինջ, պարզ, անամպ, ամպամած —, clear, serene, cloudless, cloudy sky; հրեղէն —, the Empyrean.

Երկիջեան *a.* of two columns (page).

Երկիր, կրի *s.* earth, globe; ground, land, territory, soil, district, department, jurisdiction; land, country, province, region, climate; the world; the earth; յ— անկանել, խոնարհիլ, to prostrate one's self; — ծննդեան, birth-place; յ— կործանել (դիաթաւալ), to strike dead on the spot; յ— օտար, in a foreign land; թնդայր — յընթացս մեր, the ground shook beneath our feet; —! —! land! land! — աւետեաց, the Holy Land.

Երկիր *a.* second; *ad.* secondly, in the second place.

Երկիր պագանեմ, պագի *vn.* to worship, to adore; to prostrate one's self; — կռոց, to idolize, to adore idols.

Երկիցս *ad.* twice; — անգամ, two times.

Երկիւղ, ի, իւ *s.* fear, timidity; terror, apprehension, fright, dread; doubt, distrust; առ —ի, for fear of; յ— անհնարին վարանել, զ—ի հարկանիլ, to fear, to apprehend, to be much afraid; — արկանել յոք, to frigthen, to startle, to strike with terror; խօլական —, a panic; — մահու անկաւ ի վերայ իմ, the terror of death is fallen upon me; երկեան երկիւղ մեծ, they were sore afraid.

Երկիւղաբեկ S. **Ահաբեկ**.

Երկիւղագին *a.* frightful, dreadful, terrible; timid.

Երկիւղալի է, it is to be feared.

Երկիւղալիր, -լից *a.* timorous, timid, astonished, fearful. [with fear.

Երկիւղախառն *ad.* mixed with fear,

Երկիւղած, այ *a.* timorous, conscientious, scrupulous, pious, religious.

Երկիւղածութիւն *s.* fear of God, piety, religion, conscience; -թեամբ, religiously, conscientiously.

Երկիւղամեծար *a.* pious, timorous.

Երկլեզու *a.* deceitful, ambiguous, equivocal; S. **Երկբան**.

Երկլուսնեայ *a.* of two moons; — աւուրք, duration of two moons, two months.

Երկխօս S. **Երկլեզու**.

Երկծծըմբատ *s.* bisulphate.

Երկծով *a.* enclosed or placed between two seas.

Երկկայմ, *ի s. mar.* brig.

Երկկանամբի S. **Երկկին**.

Երկկանգուն *a.* of two cubits.

Երկկերպեան, *–պի a.* of two kinds or shapes.

Երկկերպութիւն *s. chem.* dimorphism.

Երկկին *a.* bigamist.

Երկկնութիւն *s.* bigamy.

Երկկորնթարդ *s. phys.* bi-convex, double convex.

Երկհազարեակ *a.* two thousandth, that contains twice a thousand.

Երկհատոր *a.* in two volumes.

Երկձայն *s.* diphthong: discordant.

Երկձի *a.* two horsed; *s.* carriage, equipage.

Երկճիղ, *–ճիւղ*, *–ճղի a.* forked; cleft; separated in two, of two branches; S. **Երկժանի**.

Երկմատենի, *–մատնի a.* having two points or fingers, forked; S. **Երկժանի**; *երկմատնի երաժշտաց* S. **Զայնդիւտ**.

Երկմիլիոն, *ի s.* billion, one million millions.

Երկմիտ, *մտաց a.* irresolute, perplexed, wavering, distrustful, suspicious, doubtful; –, *յ–ս լինել* S. **Երկմտել**.

Երկմտել, *եցի*, **Երկմտիմ**, *եցայ vn.* to be irresolute, to suspect, to distrust, to waver, to demur; *– ի հաւատոց*, to be unbeliever.

Երկմտեցուցանել, *ուցի va.* to make doubt or waver.

Երկմտութն *s.* irresolution, vacillation, doubt, distrust.

Երկն, *կան*, **Երկունք**, *կանց s.* pang, work, labour in child-birth; pains, labour, trouble, fatigue; *երկունք ծննդականի*, throes; *յերկունս լինել*, *յերկն հարկանիլ*, *ունել երկանց*, *պատել երկանց*, to be in labour, in the pangs of child-birth, to labour.

Երկնաբանութիւն *s.* uranology.

Երկնաբերձ *a.* sky-high, much elevated.

Երկնաբնակ *a.* that dwells in heaven, inhabitant of heaven, celestial.

Երկնագէտ *s.* astronomer.

Երկնագնաց *a.* that hastens, presses on towards heaven. [blue.

Երկնագոյն *a.* blue, sky-blue, dark

Երկնագոչ *a.* that cries to heaven.

Երկնագումար *a.* composed of a celestial troop; divine assembly.

Երկնագունտ, *գնտոյ s.* celestial globe, sphere, orb.

Երկնագրական *a.* uranographic; *– գործի*, – machine.

Երկնագրութիւն *s.* uranography.

Երկնաթռիչ *a.* that flies, rushes to heaven.

Երկնաժառանգ *a.* possessing heaven, heir of heaven.

Երկնալոյս *a.* full of heavenly light, celestial, divine.

Երկնախոհ or *խորհ a.* contemplating, meditating on divine matters.

Երկնախումբ S. **Երկնագումար**.

Երկնածաղիկ *a.* blooming divinely, or by the power of God, celestial, divine.

Երկնակաճառ *a.* adorning the sky.

Երկնակամար *s.* arch of heaven, vault, roof.

Երկնակառոյց *a.* founded in heaven, celestial.

Երկնակեաց, *–կենցաղ a.* whose conduct is heavenly, that lives like an angel.

Երկնակերպ S. **Երկնահանգէտ**.

Երկնակրօն S. **Երկնակենցաղ**.

Երկնահայեաց *a.* looking to heaven.

Երկնահանգէտ, *–հանդոյն a.* resembling heaven, celestial, divine.

Երկնահանդէս S. **Երկնակեաց**.

Երկնահանճար *a.* full of heavenly or divine wisdom.

Երկնահաս *a.* reaching heaven, very high, very elevated.

Երկնահար *a.* struck by heaven.

Երկնահոյլ, *հուլից s.* celestial assembly; S. **Երկնագումար**.

Երկնահոս *a.* flowed or come from heaven, celestial.

Երկնաձեւ S. **Երկնահանդոյն**.

Երկնաձիր *a.* given by heaven, celestial, divine.

Երկնաճեմ *a.* that walks in heaven; celestial.

Երկնամիջոց *s.* sky, firmament.

Երկնային *a.* celestial; ethereal; *– մարմինք*, celestial bodies, planets, etc.; *– բարկութիւն*, the wrath of heaven.

Երկնաշնորհ S. **Երկնաձիր**.

Երկնաչափ *a.* reaching heaven.

Երկնաչափութիւն *s.* uranometry.

Երկնաչու *a.* that goes, that leads to heaven, celestial.

Երկնապատիկ *a.* that makes a circuit or a course in heaven.

Երկնապարգեւ S. **Երկնաձիր**.

Երկնապիշ S. **Երկնահայեաց**.

Երկնառատ *a.* that flows, that falls from heaven abundantly.

Երկնառաք *a.* sent from heaven.

Երկնասլաց *a.* that rushes to heaven, ejaculatory. [heaven.

Երկնաստեղծ *a.* that has created

Երկնավտակ S. **Երկնահոս**.

Երկնատեղաց *a.* that has flowed or fallen from heaven, celestial.

Երկնատուր S. **Երկնաձիր**.

Երկնացոյց *տախտակք* *s.* astronomical chart.

Երկնաւոր *a.* celestial, divine; *հայրն մեր* –, our heavenly father.

Երկնաքաղաքացի *a. s.* inhabitant of heaven. [stone.

Երկնաքար *s.* aerolite, bolid, falling

Երկնեմ, *եցի* *va.* to be in labour, to bring forth a child: to suffer; to be pained or grieved; to think, to contemplate, to ponder over; to elaborate.

Երկնընթաց S. **Երկնաչու**.

Երկնուղեշ *a.* having branches very high or reaching to heaven.

Երկնուստ, *յ–* *ad.* from heaven, from on high.

Երկնչիմ, *կեայ*, *կեր* *vn.* to fear, to be afraid of, to dread, to apprehend, to be frightened, to tremble; to distrust; *մի երկնչիք*, don't be afraid, never fear.

Երկնչոտ, etc. S. **Երկչոտ**, etc.

Երկնօրէն *ad.* like heaven.

Երկշաբաթ or *թի* *s.* monday.

Երկոտանի *a. s.* two-footed, biped.

Երկոտասան, *ից* *a.* twelve; – *յունիսի*, the 12th. of June, the twelfth instant. [12mo.

Երկոտասանածալ *a. s.* duodecimo,

Երկոտասանամեայ, *-մեան*, *մենից* *a.* of twelve years, twelve years old.

Երկոտասանանիստ *s. geom.* dodecahedral.

Երկոտասանանկիւն *s.* dodecagon.

Երկոտասանեակ, *նեկի* *s.* dozen.

Երկոտասաներորդ, *աց* *a.* twelfth.

Երկոտասանեքեան, *-նեքին*, *եցունց* *a.* all the twelve.

Երկոտասանիցս *ad.* twelve times.

Երկոտանաչափ *a.* bipedal.

Երկորեակ *s.* mark of abbreviation or elision (″); e. g. *ք″ ղ՛ ք*, *քաղաք*; **Կոմ.″ Կոմիտաս**.

Երկու, *երկուք*, *կուց*, *կուս* *a.* two; pair; *ad.* second; besides, moreover.

Երկուանամ, etc. S. **Յերկուանամ** etc.

Երկունք S. **Երկն**.

Երկուշաբաթ, *-թի* *s.* monday; *գեր* –, shrove- –; *աւագ*, *մեծ* –, – before Easter. [twins.

Երկուորածին *a.* that brings forth

Երկուորական *a.* dual; double.

Երկուորեակ, *եկաց*, **Երկուորի**, *րւոյ*, *րիք*, *րեաց* *a.* that brings forth, that has twins; couple, pair; *s.* twin; *-ք*, testicles.

Երկուցանեմ S. **Երկեցուցանեմ**.

Երկոքեան, *-քին*, *կոցուն* or *ցունց* *a. s.* both. [animous, cowardly.

Երկչոտ, *աց* *a.* timid, fearful, pusill-

Երկչոտիմ, *եցայ* *vn.* to feel intimidated, to get frightened.

Երկչոտութիւն *s.* timidity, pusillanimity, cowardice.

Երկպառակ *a.* divided, discordant.

Երկպառակեմ, *եցի* *va.* to divide, to disunite, to set at variance.

Երկպառակիմ, *եցայ* *vn.* to be divided, disunited, discordant.

Երկպառակութիւն *s.* disagreement, variance, discord, dissension, division, disunion, quarrel.

Երկպառականեմ S. **Երկպառակեմ**.

Երկպատիկ, *տկաց* *a. ad.* double; doubly.

Երկպատկեմ, *եցի* *va.* to double.

Երկպատկութիւն *s.* duplicity, state of that which is double or doubled.

Երկպետ, *տաց* *s.* duumvir.

Երկպետութիւն *s.* duumvirate.

Երկսայրաբանութիւն *s.* dilemma.

Երկսայր, *-րի* *a.* two edged.

Երկստուեր, *-րեան* *a.* amphiscian.

Երկվերարկու *a.* that has two cloaks.

Երկտիրեան *a.* having two masters.

Երկտող *a. s.* two lines; – *ոտանաւոր*, distich.

Երկրաբան, *ից* *s.* geologist.

Երկրաբանական *a.* geological.

Երկրաբանութիւն *s.* geology.

Երկրաբաշխական *a.* geodetical.

Երկրաբաշխութիւն *s.* geodesia, geodesy. [world, or of the earth.

Երկրաբնակ *a.* inhabitant of the

Երկրաբուղխ *a.* that is produced, that springs from the earth.

Երկրագիտութիւն *s.* geognosy.

Երկրագնաց *a.* that walks on the earth.

Երկրագործ, *աց a. s.* agriculturist; planter, husbandman, labourer.

Երկրագործեմ, *եցի va.* to till, to cultivate, to plough.

Երկրագործութիւն *s.* agriculture, tillage, culture. [globe.

Երկրագունտ, *գնտոյ s.* terrestrial

Երկրագիր, *-գրութիւն* S. **Աշխարհագիր**, *-գրութիւն*.

Երկրալիր *a.* that fills the world.

Երկրածին, *-ծնեալ*, *-ծնունդ a.* produced by the earth, terrestrial.

Երկրածուփ *a.* that torments, or agitates the world; tormented or agitated on the earth.

Երկրակալ, etc. S. **Աշխարհակալ**, etc.

Երկրական *a.* terrestrial.

Երկրակեաց, *-կենցաղ a.* that lives on earth, terrestrial, worldly.

Երկրակոխ *a.* that treads, walks on earth; terrestrial.

Երկրակործան S. **Աշխարհաւեր**.

Երկրահեռութիւն *s. ast.* apogee.

Երկրահմայ, etc. S. **Գետնակոչ**, etc.

Երկրամած S. **Գետնամած**.

Երկրամերձ, *-ութիւն s. ast.* perigeum, perigee.

Երկրային *s.* terrestrial; worldly.

Երկրանախանձ S. **Գետնանախանձ**.

Երկրաշարժ S. **Գետնաշարժ**.

Երկրաչափ, *ից* or *աց s.* geometrician.

Երկրաչափական *a.* geometrical; *-ն*, geometry.

Երկրաչափութիւն *s.* geometry.

Երկրաչափօրէն *ad.* geometrically.

Երկրապատեան վերարկու *s.* sepulchre, tomb. [ing.

Երկրապարար *a.* manuring, fertiliz-

Երկրապարփակ *a.* that surrounds the earth (sea).

Երկրապիշ *a.* worldly-minded.

Երկրասէր *a.* mundane, worldly; patriot. [terrestrial.

Երկրասնունդ *a.* maintained on earth,

Երկրասոյզ *a.* rooted in the earth.

Երկրաստեղծ *a.* that has created the world; created of earth, terrestrial.

Երկրատարած *a.* spread in the world or throughout the world; stretched on earth.

Երկրաւոր S. **Երկրային**.

Երկրաւորութիւն *s.* worldly vanities.

Երկրաքարշ, *ից a.* worldly; S. **Գետնաքարշ**; *այր -*, carnal-minded, lustful.

Երկրաքարշութիւն *s.* worldliness; sensuality.

Երկրմայր *s.* earth-worm.

Երկրորդ, *աց a.* second; secondary, accessory; *ad.* secondly, in the second place; *- օրէնք*, Deuteronomy; *-ք*, bigamists; *- անգամ*, once again, once more, a second time. [cessorily.

Երկրորդաբար *ad.* secondarily, ac-

Երկրորդական *a.* secondary, accessory, subaltern.

Երկրորդեմ, *եցի va.* to say again, to repeat, to reiterate; to repeat often, to resume; *- համառօտիւ*, to recapitulate; *- ի միտս*, to pass again.

Երկրորդութիւն, **Երկրորդումն** *s.* repetition, resumption, reiteration; *- օրինաց*, Deuteronomy.

Երկրորդուստ *s.* list, roll.

Երկրպագեմ S. **Երկիր պագանեմ**.

Երկրպագու, *աց a. s.* worshipper.

Երկրպագութիւն *s.* adoration, worship; prostration; *- կռոց*, idolatry; *- մատուցանել*, to worship.

Երկցեղ, **Երկփեղկ**, *յ-ս լինիմ* S. **Երկպառակ**, **Երկպառակիմ**.

Երկփեղկեմ, *եցի va.* to divide in two, to cleave.

Երկք S. **Երկ**. [days.

Երկօթի աւուրք *s.* space between two

Երկօթիմ S. **Երեկօթս անեմ**.

Երկօրեայ *a.* of two days; in two days.

Երմոս S. **Եռմոս**.

Երնեմ, *եցի va.* to fan; S. **Հոսեմ**.

Երնեակ S. **Երանի**.

Երնջակ, *-ջան*, *-ջնակ*, *ի s. bot.* thistle (eryngium); *երնջնակի տակ*, *bot.* gentian; S. **Բոգ**.

Երշիկ, *շկի s.* sausage.

Երուխ *s.* flock of cotton.

Երունք *s.* wild beasts.

Երջանիկ, *նկաց a.* happy, blessed, prosperous, fortunate, lucky; *- լինել*, to be happy.

Երջանկաբար *ad.* happily.

Երջանկազարմ *a.* of a happy family.

Երջանկակրօն *a.* happy, blessed, holy, pious, angelical. [to be fortunate.

Երջանկանամ, *ացայ vn.* to prosper,

Երջանկաւէտ *a.* very happy, blessed, full of felicity.

Երջանկափառ *a.* very happy, superb, magnificent.

Երջանկութիւն *s.* happiness, fortune, prosperity, beatitude, felicity.

Երր s. cariosity, cancer, rottenness, mouldiness.

Երրադարձ a. much agitated, stormy.

Երրակի a. ad. triple; trebly.

Երրեակ a. ternary, three; s. trey.

Երրորդ, *աց* a. s. ad. third; third part; thirdly.

Երրորդական a. ternary.

Երրորդեմ, *եցի* va. to treble, to triple, to repeat three times.

Երրորդութիւն s. Trinity; triplicity.

Երրօրեայ S. **Եռօրեայ**, **Երեքօրեայ**.

Երփն, *ի*, *փունք*, *փնից* s. colour, hue, dye; fashion, form.

Երփն երփն a. speckled, variegated, diversified with colours; s. diversity of colours; ad. in several colours or manners; – *հարկանիլ*, *հատանիլ*, to shine with many colours; – *երանգօք*, of a thousand colours, party-coloured.

Երփնագեղ a. having good colours.

Երփնագոյն a. of many colours, variegated.

Երփնաներկ a. dyed of many colours.

Երփնափայլ a. having a shining colour.

Երփներանգ S. **Երփնագոյն**.

Եւ or *և* conj. and; also, likewise; – ..., – ..., both..., and; – *ոչ*, neither, no, nor; *ոչ մին* – *ոչ միւսն*, neither; neither one nor the other; – *երիտասարդք* – *ծերք*, both young and old; – *այլն* ad. et cætera, and so on; – *այն զի*, – *այս զի*, the more so; –*արդ*, now, then; –*եթ* ad. only, solely; – *եւս* conj. ad. also, more, over, still, moreover, likewise; – *զի*, – *քանզի*, since, because.

Եւթն S. **Եօթն**.

Եւղ S. **Իւղ**.

Եւողադուռն s. phys. aelopile.

Եւս conj. also, still, more; – *առաւել* ad. the more so; – *քան զ*–, more and more, instantly.

Եւրոպական s. European.

Եւրոպացի, *ցւոյ* a. s. European.

Եփ, *ոյ* s. cooking, dressing; *յ–արկանել*, to cook.

Եփեմ, *եցի* va. to cook, to dress, to do; – *ի փուռն*, to bake; – *ի տապակի*, to fry; – *ի կասկարայի*, to broil.

Եփենէ or **Փենէ** s. ossifrage.

Եփիչ, **Եփող** s. cook.

Եփոյ, *ից*, **Եփոց**, *աց* s. cooked meat; cooling draught, decoction.

Եփուկ s. fusion of bronze.

Եփումն S. **Եփ**; – *մետաղաց*, *ապակւոյ*, annealing of metals or glass.

Եփուտ s. ephod.

Եքինէիս s. remora.

Եքինոս s. sea-hedgehog, sea-urchin.

Եօթանասնամեայ, *-մեան* a. seventy years old.

Եօթանասնեակ, *եկաց* s. seventy.

Եօթանասնեկի, *-եկին* a. seventy; ad. seventy times.

Եօթանասնեմի a. seventy years old.

Եօթանասներորդ, *աց* a. seventy; – *կիրակէ*, Septuagesima Sunday.

Եօթանասուն, *սնից* a. seventy; –*ք*, the Septuagint.

Եօթանեքեան, *–քին*, **Եօթնեքեան**, *–նեքին*, *նեցունց* s. a. all the seven.

Եօթն, *թան*, *թին*, *թանք*, *թանց* a. seven; – *անգամ*, – times, many times.

Եօթնագլուխ, *–գլխի* a. seven-headed.

Եօթնաթիւ a. septenary, that consists of seven numbers or letters.

Եօթնալոյս a. that has seven lights.

Եօթնածին a. that has engendered seven times.

Եօթնակի a. ad. septenary; seven [times.

Եօթնակողմեան a. s. heptagon.

Եօթնաղի a. s. heptachord.

Եօթնաճրագ a. of seven candles or lights (chandelier).

Եօթնամեայ, *–մեան* a. septennial, seven years old.

Եօթնամսեայ :. of seven months.

Եօթնանկիւն a. s. heptagon.

Եօթնաշող S. **Եօթնալոյս**.

Եօթնաջահեան a. of seven branchs (chandelier).

Եօթնաստեղեան a. having seven branchs or columns; of seven stars.

Եօթնաստեղն S. **Եօթնաջահեան**.

Եօթնարփեան, *–փենի*, *–փի* S. **Եօթնալոյս**.

Եօթնեակ, *եկաց* a. s. septenary, [seven; week.

Եօթնեկին ad. seven times.

Եօթնեմեան a. seven years old.

Եօթներեակ, *եկաց* a. s. septenary; week.

Եօթներորդ, *աց* a. s. ad. seventh; [week; seventhly.

Եօթներորդեմ, *եցի* va. to repeat seven times.

Եօթնեւտասն, *սանց* a. seventeen.

Եօթնեքեան, *–քին* S. **Եօթանեքեան**.

Եօթնհազարեակ, *–րեան* a. of seven thousand years.

Եօթնուտասնամեայ, *–ամի* a. of seventeen years.

Եօթնուտասներորդ, աց *a*. seventeenth. [times as many.

Եօթնպատիկ *a*. *ad*. sevenfold, seven

Եօթնպարսպեան *a*. having seven walls.

Եօթնօրեայ, րէից *a*. of seven days.

Զ

Զ (zā) զա *s*. the sixth letter of the alphabet and the fourth of the consonants; զ, զ̃, six; sixth.

It is sometimes changed for, or confounded with the letter ս: զդեստ, սդեստ; սքօղել, զքօղել; զգալ, սգալ.

- *art*. that marks the accusative: սիրել զԱստուած, to love God; տեսանել զարեգակն, to see the sun; ուտել զհաց, to eat bread. This article is sometimes understood, for example: Մնայր՝ զի բերցէ խաղող, եւ եբեր փուշ (instead of զխաղող, զփուշ). – It is often repeated: որք միշտ փրփրեն զիւրեանց զանձանց զամօթ (instead of զամօթ անձանց իւրեանց). – It often changes its place: Ետուն նմա գիրս զԵսայեայ (usually զգիրս Եսայեայ).

– It marks the narrative or sixth case, *on*, *of*, *for*: երթալ զոսկւոյ, to go and fetch gold, or in order to bring gold; առաքել զջրոյ, to send in order to bring water; խօսել զնմանէ, to speak of him.

– It marks the eighth case, *round*, *about*, *on*, *above*: արկանել զնովաւ, to put on him; ածել զբոցով, to pass above the flame, to singe; անցուցանել զամենեքումբք, to surpass, to surmount, to excel more than all.

– augmentative letter: դրդուել, զդրդուել; եղծանել, զեղծանել; անցանել, զանցանել.

Զազիր, զրաց or րից *a*. ugly, deformed, slovenly; dirty, filthy, indecent, impure, lewd, obscene.

Զազրաբան *a*. obscene in words or language.

Զազրաբանեմ, եցի *vn*. to discourse obscenity, to hold filthy language.

Զազրաբանութիւն *s*. coarse expressions or language, obscene words.

Զազրաբերան *a*. unchaste, lascivious, obscene in words.

Զազրագործ, աց *a*. unchaste, lascivious, obscene; luxurious, dissolute.

Զազրագործեմ, եցի *va*. to be lewd, dissolute.

Զազրագործութն *s*. lewdness, turpitude in actions.

Զազրադէմ *a*. nasty-looking, ugly.

Զազրաթորմի *a*. nasty, ugly, impure.

Զազրալի, -լից S. Զազիր.

Զազրալուր *a*. that wounds chaste ears, obscene.

Զազրախօս S. Զազրաբան.

Զազրահոտ, etc. S. Գարշահոտ, etc.

Զազրաձայն *a*. having a bad voice; of perverse doctrine.

Զազրանամ, ացայ *vn*. to loathe, to nauseate; S. Ազտեղանամ.

Զազրասէր S. Զազրագործ.

Զազրատես, -տեսակ, -տեսիլ *a*. nasty-looking, ugly, deformed, unpleasant to the sight.

Զազրացուցանեմ, ուցի *va*. to disfigure, to make ugly or dirty, to soil.

Զազրիմ S. Զազրանամ.

Զազրոտի, տւոյ, տեաց *a*. dirty, ugly, impure; *s*. idol.

Զազրութիւն *s*. ugliness, filth, act of growing ugly; deformity, uncleanness; impurity, dirtiness, nastiness, foulness, lewdness.

Զածած *a*. small, mean.

Զականեմ, եցի *va*. to look, to cast eyes on some thing.

Զակատիմ, եցայ *vn*. to be extremely fond, to become excessively affectionate, to love with too much passion, to bend one's whole soul to; to get furious; – ի խաղս, ի զբօսանս, to give one's self up to gambling, to pernicious amusement; – զհետ գեղարուեստից, to be devotedly fond of the fine arts.

Զահանդելի *a*. dreadful, ghastly, frightful.

Զահանդիմ S. Երկնչիմ.

Զահի հարկանիմ, հարայ *vn*. to dread, to fear much; S. Ահ.

Զահոմիմ, եցայ *vn*. to be suitable.

Զաղփ առնում *vn*. to grow weak.

Զաղփաղփուն *a.* inconstant, unstable, not solid, slippery.

Զաղփումն S. Գթումն.

Զամբիկ *sf.* mare.

Զամբիղ. -բիւղ. բղից, աց or ոց *s.* basket; - մի, *a* - full; - զգեստուց, գործոյ, պտղոյ, հացի, clothes- -, work- -, - of fruit, bread- -.

Զայգոյ *ad.* till to-morrow, to-morrow morning.

Զայրագին *a.* passionate, desperate, furious, turbulent; grievous; -, -գնաբար *ad.* abruptly, turbulently, angrily.

Զայրագնեցուցանեմ, ուցի *va.* to anger, to rouse the wrath or ire, to incense, to provoke, to exasperate, to drive to extremities.

Զայրագնիմ, նեցայ *vn.* to be angry, to fire up, to feel wroth, to become incensed.

Զայրագնութիւն S. Զայրոյթ.

Զայրանամ, ացայ *vn.* to grow angry, to be enraged, to put one's self in a passion, to fly into a passion, to bluster, to be angry, vexed, exasperated, to lose patience, to fret, to be mad, to inveigh.

Զայրանք *s.* increase, irritation.

Զայրացեալ *a.* irritated, vexed, angry, fretful; furious, outrageous, mad.

Զայրացկոտ, աց *a.* hasty, passionate, fiery, wrathful.

Զայրացութիւն, -ցուկք, -ցումն *s.* anger, indignation; passion.

Զայրացուցանեմ, ուցի *va.* to irritate, to put in a passion, to enrage, to anger, to make angry, to fret, to vex, to nettle, to affront, to provoke.

Զայրոյթ *s.* flight, gust of passion, anger, wrath, spite, vexation, indignation, fury, rage, revolt; առ -, in despite of.

Զայրուկք, -ումն, -ուցք S. Զայրոյթ.

Զանազան, ից *a.* diverse, different, various, distinct.

Զանազանակ S. Զանազան, -ութիւն.

Զանազանեալ *a.* variegated.

Զանազանեմ, եցի *va.* to distinguish, to diversify, to discern, to vary.

Զանազանիմ, եցայ *vn.* to signalize one's self (by), to excel, to surpass.

Զանազանութիւն, -նումն *s.* distinction; difference; diversity, variety.

Զանալութ S. Ընձուղտ.

Զանակ *s.* piece, bit.

Զանապ *s. ast.* dragon's tail.

Զանգակ, աց *s.* bell; clock bell; hand bell, small bell hung on the neck of cattle; - ելեքտրական, electric chimes; - բուսոց, bell-glass; - կանթեղի, lamp-glass, glass-globe, glass-shade; զանգիւն -ի, stroke of a bell; ձուլիչ -աց, bell-founder; չուան -ի, bell-rope, bell-pull; - հարկանել, to ring the bell; - - վասն ննջեցելոց, to toll for the dead; հնչէին -ք պատարագի, the bells were ringing for church.

Զանգակագանչ *a. ad.* at the ringing [of a bell.

Զանգակածաղիկ *s. bot.* bell-flower.

Զանգակահար *a. s.* bell ringer, ringer.

Զանգակաձեւ *a.* bell-fashioned, bell shaped.

Զանգականի *s. pl.* the bells.

Զանգակատուն *s.* steeple, bell-tower, belfry; ելանել ի -, to go up on the -.

Զանգակեմ, եցի *vn.* to adorn with little horse-bells.

Զանգակիկ *s.* little bell, hand-bell; *bot.* hare-bell, blue-bell.

Զանգանեմ, գի, Զանգեմ, եցի *va.* to knead, to bake; to adhere; to mix mortar; to mix; - իւղով. to butter.

Զանգիկ *s.* uvula, epiglottis; *chem.* receiver.

Զանգիտակ S. Զանգիտող.

Զանգիտանամ S. Զանգիտեմ.

Զանգիտանք *s.* fear, dread, apprehension, fright, dismay.

Զանգիտեմ, եցի *vn.* to fear, to be afraid of, to dread; to doubt.

Զանգիտեցուցանեմ, ուցի *va.* to make afraid, to frighten, to terrify, to dismay.

Զանգիտութն, -ումն S. Զանգիտանք.

Զանգիտող *a.* timid, fearful, afraid.

Զանգուած, ոյ *s.* dough, leaven; mole; mass, mixture; amalgam.

Զանգուածիկ *s.* particle.

Զանդիկ, դկաց *s. a.* follower of Zoroaster; manichean; - աղանդ, manicheism.

Զանխլաբար S. Զանխուլ *ad.*

Զանխլանամ, ացայ *vn.* to hide one's self, to steal away, to retire; to be ignorant of.

Զանխլանք S. Զանխլութիւն.

Զանխլացուցանեմ, ուցի *va.* to hide, to conceal.

Զանխլութիւն *s.* state of a thing hidden, secret, concealment, hiding.

Զանխուլ *a.* hidden, secret; *ad.* secretly, clandestinely, by stealth, incognito, without being known; *s.* hiding-place, lurking-place; – *ի ներքս սպրդել*, to creep, to slip, to steal stealthily.

Զանկ S. **Զանգակ**.

Զանկապան, *այ* s. stocking, hose.

Զանկիկ s. uvula.

Զանց s. passage, transition; – *առնել*, to pass, to omit, to skip, to leave, to neglect, to fail; – *լինել*, to be wanting, to fail; – *առնուլ*, to flee, to run away.

Զանցանել, *զանցի* vn. to pass; to surpass, to surmount, to excel; to go beyond, to exceed; to escape, to leap; to be wanting, to fail; S. **Անցանել**; – *զհասակաւ*, *ծերութեամբ*, to grow old; – *զարամբ*, *զամուսնութբ*, to be unfaithful to the husband's or marriage bed.

Զանցառու, *այ* a. negligent, careless; indolent, sluggish.

Զանցառութիւն s. omission, negligence, carelessness.

Զանցումն S. **Օրինազանցութիւն**.

Զանցուցանել, *ուցի* va. to pass, to surpass; to go beyond; to cause to fail or be wanting, to make to sin; *անցուցանել* –, to excel, to exceed.

Զաչացու, *այ* s. blind, sightless, eyeless.

Զառածանել or *ծիմ*, *ծի*, **Զառածանիմ**, or *ծիմ*, *ծայ* vna. to avert, to scatter, to distract; to render useless; to mislead, to deceive; to pervert; *ի տխուր խորհուրդս* –, to have the spleen or blue-devils; *յախտս իւր* –, to give a loose to one's passions; *զանձամբ* –, to come to one's self again, to recover one's self.

Զառածանք, **Զառածումն** s. wandering, error, bad conduct, perversion, perversity.

Զառածեալ a. averted, scattered.

Զառամ, *այ* a. decrepit, broken down, crazy. [or extremely old.

Զառամանամ, *ացայ* vn. to be decrepit

Զառամացեալ, **Զառամեալ** S. **Զառամ**.

Զառամութիւն s. decrepitude, decrepit age.

Զառանցանք s. delirium, raving, frenzy, dotage, madness, fanaticism, rage. [changed, past.

Զառանցեալ a. delirious, fanatic;

Զառանցել, *եցի* vn. to go astray; to dote, to rave, to muse.

Զառանցութիւն S. **Զառանցանք**.

Զառանցուցանել, *ուցի* va. to turn aside, to mislead, to deceive; to make to rave.

Զառաջաւոր a. precedent; first, chief; before, present.

Զառաջաւորութիւն s. proposal; *հաց –թեան*, show-bread. [sence of.

Զառաջեաւ, *ջեօք* ad. before, in pre-

Զառաջեմ S. **Յառաջեմ**.

Զառաջին a. first, chief, principal; *–ն* or *–ան* ad. first, at first, at first sight; originally.

Զառ ի թափ, *ի* a. inclining, that bends, that goes stooping; s. slope, declivity, brow, side of a hill.

Զառիկ s. arsenic; *tinsel; – *կարմրագոյն*, realgar, red arsenic, orpiment; – *ոսկեգոյն*, orpiment.

Զառիկակ s. arsenite. [senical.

Զառիկական, *–կային* a. arsenic, ar-

Զառիկատ s. arsenate. [*ի թափ*.

Զառ ի կող. **Զառ ի կողեալ** S. **Զառ**

Զառիկուկ s. arseniuret.

Զառ ի հետ a. flat, level.

Զառինա s. orpiment.

Զառ ի վայր, *ից* s. down-hill, slope, declivity, descent, brow, hill; a. sloping, inclining, down-hill.

Զառ ի վեր, *ի* s. steepness, acclivity, up-hill, ascent, steep mountain; hillock, rising ground; a. steep, hilly, uphill.

Զառ ի վերակ s. knoll, little hill, ascent or acclivity.

Զառնաւուխտ, *ի* s. satin; brocade.

Զառքաշ, **Առքաշ** s. trailing gown, tail coat.

Զատ a. isolated, separate; ad. apart, aside; pr. except; – *ի* –, different, various; ad. diversely. [disjoined.

Զատական a. disjunctive; separate,

Զատանամ, *ացայ* vn. to be separated, disjoined.

Զատանել, *զատի*, **Զատել**, *եցի* va. to separate, to divide, to distract, to scatter, to disjoin, to detach, to dry up, to disunite, to take to pieces, to disentangle, to pick.

Զատանիմ, *տայ*, **Զատիմ** vn. to separate; to retire.

Զատիկ, *տկի* s. Easter; – *Հրէից*, the Passover; *գառն զատկի*, paschal lamb; *խթումն զատկի*, – -eve.

Զատկածաղիկ s. bot. Easter-daisy.

Զատկական a. paschal; *ընդունել զհաղորդութիւն*, to receive the Sacrament at Easter.

Զատկաշաբաթ, *ու* s. holy-week, Passion-week.

Զատնում, զատայ *vn.* to part, to retire. [distinction.

Զատութիւն, Զատումն *s.* separation,

Զատուցանեմ, ուցի *va.* to separate; to divide; to distinguish, to discern: to consecrate, to offer.

Զատուցեալ *a.* insulated, separate: offered: excommunicated; *s.* offering: excommunication; *-ք*, suburb, farm.

Զատուցումն *s.* insulation.

Զատչիմ, տեայ S. **Զատնում.**

Զարամուր *a.* violent; dense, thick; *s.* impetuosity; density.

Զարգանամ, ացայ *vn.* to grow, to increase, to improve, to profit; *- իմաստութեամբ եւ հասակաւ*, to increase in wisdom and stature.

Զարգանք *s.* bombast, pompous nonsense.

Զարգացումն *s.* profit, progress.

Զարգացուցանեմ, ուցի *va.* to increase, to promote.

Զարգուն *a.* adult, of age.

Զարդ, ուց *s.* ornament, finery, embellishment, preparation, furniture, clothes, fringe, decoration; dress, toilette; attire; - or *-ք երկնից*, the stars; *առնուլ զ- զանձամբ, - առնուլ*, to adorn one's self; *ի զէն եւ ի - վառիլ*, to arm one's self, to fly to arms.

Զարդագեղ *a.* embellished, adorned, beautified.

Զարդագիր *s.* ornamentor, ornamentist: ornamental letter.

Զարդագրութիւն *s.* ornamenting, ornamentation.

Զարդախօս *a.* who speaks with politeness or embellishments; bragger.

Զարդակից *a.* uniform in ornaments.

Զարդանկար, Զարդանք *s.* ornament.

Զարդասէր *a.* that loves ornaments, that decks him or herself; dandy, coxcomb, coquettish.

Զարդասիրութիւն *s.* love of dress; affectation in dress; coquettishness, coquetry.

Զարդար, Զարդարանք S. **Զարդ, Պաճուճանք.**

Զարդարեմ, եցի *va.* to adorn, to deck, to embellish, to fashion, to enrich, to furnish, to decorate; to enliven, to enamel, to trim, to polish, to set off, to stuff; *- գլուխն*, to dress or tire the head; *-իմ vn.* to adorn or bedeck one's self; *յարեաւ զարդարեցաւ զարդու իւրով ըստ զարդու կանանց*, she arose and arrayed herself in all her woman's attire; *- փետրովք սիրամարգի*, to deck one's self in borrowed feathers.

Զարդարեցուցանեմ S. **Զարդարեմ.**

Զարդարիչ *s.* decorator; *a.* adorning.

Զարդարկոտ S. **Զարդասէր.**

Զարդարուած, ոյ *s.* ornament.

Զարդարուն *a.* ornamented, polished, spruce, smart. [rich.

Զարդափայլ *a.* splendid, magnificent,

Զարդափայլեմ, իմ *vna.* to adorn pompously; to be richly embellished, to be splendid.

Զարդեր, երք *s. pl.* ornaments.

Զարդի, Զարդիս *a.* recent, new; S. **Արդի**; *-ս ad.* at present, presently, now.

Զարդուն S. **Զարդարուն.**

Զարթիմ S. **Զարթնում.**

Զարթխում *a.* awakened after a debauch, drowsy, heavy; *turk.* *մահմուր.*

Զարթնական S. **Արթնական.**

Զարթնանամ S. **Արթնանամ.**

Զարթնում, թեայ *vn.* to awake, to rise; to be sensible of; *- յանկարծ ի քնոյ, - ընդոստ*, to wake up with a start; to start out of one's sleep.

Զարթումն *s.* awaking, waking; *ի զարթման հարկանիլ, լինել*, to wake up, to sit up; *ի զարթմնի ad.* wakefully.

Զարթուն S. **Արթուն.**

Զարթուցանեմ, ուցի *va.* to awake, to raise; to move, to incite, to reanimate, to sharpen, to revive; *- յանկարծ (ի քնոյ)*, to startle out of one's sleep; *- զաչս ուրուք*, to open one's eyes; to comprehend, to become aware of; *- զախորժակ*, to make one's mouth water; S. **Ախորժակ.**

***Զարթուցիկ** *s.* time of awaking, alarm-clock or watch, alarum.

Զարթուցիչ *s.* S. **Զարթուցիկ**; *a.* awakening, who awakens or arouses; who excites or animates.

Զարթուցումն *s.* the awaking.

Զարթչիմ S. **Զարթնում.**

Զարկ, այ *s.* impulse, motive: pulse, basilic vein; *mus.* time; *- բազկի*, pulsation, beating of the pulse; S. **Երակ, Զարկուած.**

Զարկած S. **Զարկուած.**

Զարկանեմ, կի *va.* to beat down, to beat, strike, to knock, to thump; *- զգետնի*, to beat down, to throw on the ground, to strike down; *- զգլուխն* *զորմով.* to strike one's head against the wall; – *որդամբք*, to breed worms (in the members).

Զարկանիմ, *կայ* *vn.* to hit, to strike; – *զգետնի* S. **Գետին**; – *նաւուն ի վէմ*, to collide, to strike against a rock.

Զարկուած, **Զարկումն** *s.* percussion, striking, friction, knock, shock, conflict, blow.

Զարկուցանեմ S. **Զարկանեմ**.

Զարհուրագին *a.* astonishing; frightful, horrible.

Զարհուրական *a.* dreadful; timid.

Զարհուրանք *s. pl.* horror, terror, fright, fear, agony, trouble; *ի զարհուրանաց գիշերոյ*, because of fear in the night.

Զարհուրելի *a.* hideous, dreadful, formidable; horrible, execrable.

Զարհուրեմ, *եցի*, **Զարհուրեցուցանեմ**, *ուցի* *va.* to astonish, to frighten, to intimidate, to afflict, to terrify, to shake, to scare, to fright away.

Զարհուրեցուցիչ S. **Զարհուրելի**.

Զարհուրիմ, *եցայ* *vn.* to be frightened, terrified, to dread, to be much afraid, to tremble, to be alarmed; to be confounded.

Զարհուրումն S. **Զարհուրանք**; *լինել ի զարհուրման* S. **Զարհուրիմ**; – *ածել*, S. **Զարհուրեցուցանել**.

Զարմ, *ից* *s.* family, house, blood, race, stock, line; nation.

Զարմանազեղ *a.* charming, very fine, genteel.

Զարմանագործ, *աց* *a.* charming, admirable; wonder-working; *-ք*, *s.* miracles, wonders, prodigies.

Զարմանագործեմ, *եցի* *va.* to do admirably; to perform miracles or wonders.

Զարմանագործութիւն *s.* wonderful action; miracle.

Զարմանագրեմ, *եցի* *va.* to write admirably, or wonders.

Զարմանազան, *-զանեալ* *a.* in several admirable ways, very admirable, wonderful, surprising, excellent.

Զարմանազանութիւն *s.* variety or admirable beauty, magnificence.

Զարմանալի *a.* admirable, astonishing, surprising, miraculous, wonderful, bewitching, incredible, extraordinary, excellent; *-ք* *s.* wonder; miracle; admiration; *-ք առնուլ զոք*, to be astonished.

Զարմանակերտ *a.* admirably made, magnificent, charming.

Զարմանահրաշ, *-սքանչ* *a.* wonderful, surprising.

Զարմանամ, *ացայ* *vn.* to admire, to wonder, to be astonished; to be enraptured.

Զարմանաւոր S. **Զարմանալի**.

Զարմանուհի *af.* charming, admirable, excellent.

Զարմանք S. **Զարմացումն**; wonder, miracle; S. **Զարմ**; *զարմանալ -ս*, *-ս առնել* or *համարիլ*, *ընդ -ս գալ*, to be astonished or amazed, to be struck with admiration, to wonder, to marvel; *ի -ս ածել*, *կրթել*, *կացուցանել*, to astonish, to amaze; *ի -ս ըմբռնել*, to strike with amazement; *որպիսի՛ – կալան զիս մինչ…*, what was my surprise when…; – *կալան զամենեսին*, they were all amazed; *զի՞նչ – իցեն*, what is there astonishing in that? – *են*, it is wonderful, strange, surprising; *չեն ինչ –*, *ոչինչ են –*, there is nothing wonderful in that; no wonder, no marvel.

Զարմացական *a.* of admiration; -*նշան* (´), a note of – (!).

Զարմացումն *s.* admiration, astonishment, surprise; enchantment, stupefaction, stupor; ecstasy; wonder; *ի զարմացման լինել*, to be wrapped in wonder; *ի – գալ*, to be in raptures; – *էառ զիս*, I was struck with wonder, I was surprised; *զարմացաւ Իսահակ – մեծ յոյժ*, Isaac wondered exceedingly; *զարմացայ տեսեալ զնա – մեծ*, I wondered with great admiration.

Զարմացուցանեմ, *ուցի* *va.* to astonish, to surprise, to be seized with admiration.

Զարմացուցիչ *a.* surprising, astonishing.

Զարտուղեցուցանեմ, *ուցի* *va.* to mislead, to lead astray, to turn, to take a person out of his way.

Զարտուղի *a.* misled, led astray: anomalous, heteroclitical; – *գնալ*, *ընթանալ*, *անկանիլ* S. **Զարտուղիմ**; *-հանել*, to seduce, to pervert.

Զարտուղիմ, *եցայ* *vn.* to be led astray, to lose one's way, to deviate, to turn aside; to lose one's self.

Զարտուղումն *s.* going astray, wandering, deviation, digression; *ast.* anomaly; – *աստեղաց*, aberration.

Զարօշ, *ի* *s.* *bot.* germander.

Զաւակ, աց s. child, son, blood, infant; descendants, descent, generation, posterity. [forth children.

Զաւակագործեմ, եցի va. to bring

Զաւակասերութիւն s. act of propagating, generation, production. [dren.

Զաւակասէր a. that loves his chil-

Զաւեշտ, ից s. joke, jest; farce.

Զաւեշտարար S. *Կատակերգու.*

Զաւշան S. *Ճօշ.*

Զաֆրան s. saffron; S. *Քրքում.*

Զբաղական a. occupied, busy.

Զբաղանք s. intrigue, affair, traffic; occupation; evagation, distraction; motion; care.

Զբաղասէր a. intriguing, that meddles with many intrigues; fond of play or trifles (child).

Զբաղեմ, եցի, Զբաղեցուցանեմ, ուցի va. to intrigue; to occupy, to amuse; to distract, to busy.

Զբաղիմ, եցայ, Զբաղնում, ղեցայ vn. to be occupied or busy, employed in doing something; to intrigue, to be embarrassed, to meddle; to be distracted or agitated.

Զբաղկոտ, Զբաղոտ a. very occupied, busy, engaged.

Զբաղութիւն, Զբաղումն s. occupation; distraction.

Զբօսանամ, ացայ, Զբօսանիմ, սայ S. *Զբօսնում*; to take some relaxation, to unbend one's mind.

Զբօսանք s. diversion, relaxation, refreshment, recreation, pastime, sport, amusement, toy; occupation, distraction, care; pleasure; trouble, agitation, flutter of spirit; water, torrent, the ebb and flow; – *ծովու*, waves, fluctuation, storm; – *ջրոց*, watering places, well watered pleasure-grounds or gardens, lake scenery; – *բարձանց*, irrigated uplands; – *հովտաց*, pleasant valleys; – *աչաց*, proud or haughty glance.

Զբօսասէր a. that loves amusement or pleasures. [or pleasure.

Զբօսասիրութիւն s. love of diversions

Զբօսացուցանեմ, Զբօսեցուցանեմ S. *Զբօսուցանեմ.*

Զբօսնում, զբօսայ vn. to divert one's self, to make merry, to relax one's self, to unbend one's mind, to take some diversion, to recreate one's self; to play, to amuse one's self; to refresh one's self; – (*մտաց յաղօթս*), to be dissipated, to get heedless.

Զբօսումն s. diversion, sport, pastime.

Զբօսուցանեմ, ուցի va. to divert, to recreate, to make joyful, to relax.

Զբօսեցուցիչ, Զբօսուցիկ, Զբօսուցիչ a. entertaining, amusing, diverting.

Զգալապէս ad. sensibly; sensually; materially; openly.

Զգալի a. sensible, perceptible, palpable; *-ք*, the senses; intellectual faculties; *ընդ -ս պշնուլ*, to abandon one's self to passions; – *ad.* really, truly.

Զգածիմ, ծայ, Զգածնում, ծայ vn. to be infected; to fly into a passion: to clothe, or to dress one's self.

Զգածումն s. infection; sensibility: act of dressing.

Զգամ, ացի vna. to feel, to be sensible of, to hear, to have a glimpse of, to learn, to know; to scent; *-յառաջագոյն*, to foresee; *անձին* –, – *խելաց, մտաց*, to come to one's senses, to recover one's wits. [ly.

Զգայաբար ad. sensibly; intellectual-

Զգայազերկ a. that has lost all sensation or sentiment, insensible.

Զգայական a. sensitive; sensible; sensual; discreet, vigilant; *-ք*, the sensible things; the beasts, brutes; the senses.

Զգայականութիւն s. sensuality; sensation; sensibility. [te.

Զգայակից լինիմ vn. to compassiona-

Զգայապէս ad. sensibly.

Զգայասէր a. sensual, carnal.

Զգայասիրութիւն s. sensuality.

Զգայարան, աց s. the five senses or wits, senses, sensorium, seat of sense; *a.* sensible; – *երկագիտակ* or *հայելեաց*, the eyes; – *հանճարոյ, մտաց, իմաստից*, intellect, mind, understanding; – *սրտի*, the heart. [intellective.

Զգայաւոր a. sensible; rational,

Զգային a. sensitive; sensible.

Զգայութիւն s. sensation; sense; reason, understanding; *ի – գալ*, to recover, to recover one's senses; *ընդ -թեամբ անկանել*, to come under the senses; to stand to reason; – *առնել, տալ. բերել ի* –, to inform, to advise; – *առնուլ. ի -թեան լինել*, to perceive, to be sensible of; *-ք*, the senses.

Զգայուն a. sensitive, that has the faculty of feeling; lively, brisk; witty, intelligent, judicious; *-ք*, the senses.

Զգայունական a. sensual, carnal.

Զգայռ, *ից* s. belch, eructation, rising (of the stomach).

Զգայռեմ, *եցի*, **Զգայռիմ**, *եցայ* vna. to eruct, to belch; to vomit, to throw up; to blow, to fetch one's breath; – or *զգառիմ աղտեղութեամբ պղծութեան*, to soil, to dirty, to daub one's self, to cast one's self in the mire.

Զգայռութիւն, **Զգայռումն** s. belch, eructation; vomiting; eruption; – *արձակել*, to eruct, to belch.

Զգաստ, *ից* a. vigilant, discreet; clever, alert; sober, moderate; wise, prudent; honest; – *առնել*, to warn, to admonish; to apprize of, to give notice; – *լինել*, to perceive.

Զգաստանամ, *ացայ* vn. to awake, to come to one's senses; to repent, to reflect; to restrain one's self; to correct, to disabuse, to undeceive one's self, to recover one's wits.

Զգաստասէր a. sober, honest, moderate; philosopher.

Զգաստասիրութիւն s. sobriety; philosophy.

Զգաստացուցանեմ, *ուցի* va. to awake, to lead back, to recall, to correct, to undeceive, to disabuse, to put out of conceit, to teach wisdom.

Զգաստութիւն s. recovery of senses, return to sense, amendment; wisdom, prudence; sobriety, chastity; watchfulness, watching; *-թեամբ* ad. soberly; – *ի կերակուրս*, abstemiousness; – *մըտաց*, readiness of wit, presence of mind; *դառնալ, գալ ի* –, to recover one's self, or one's wits, to come to one's self again; to be cured (of), weaned (from); *ածել ի* – S. **Զգաստացուցանեմ**.

Զգաստուն, *տնոց* S. **Զգաստ**.

Զգացումն s. sensation, feeling; advice.

Զգացուցանեմ, *ուցի* va. to warn, to advise, to notify, to instruct, to inform, to announce.

Զգենլի a. wearable.

Զգենլիք s. pl. clothes, garments.

Զգենում, *գեցայ* vna. to clothe, to dress one's self, to put on one's back, to put on, to wear, to put on clothes; – *հանդերձ սգոյ*, to put on mourning; – *հանդերձս ուրախութեան*, to put on garments of gladness; *մի՛ զգեցցի այր զգեստ կանացի*, man shall not put on the garments of woman; *բարւոք զգենու*, he dresses well, with taste; *մարմին* –, to incarnate, to take on himself human nature; – *զարդարութիւն*, to clothe one's self with justice; to do good works; *փառս եւ պատիւ* –, to clothe one's self with glory and honour; *զօրութիւն* –, to clothe one's self with strength, to gather strength; – *զպատկեր ուրուք*, to assume the appearance of another person, to resemble.

Զգեռ հանեմ, **Զգեռեմ** S. **Զգայռեմ**.

Զգեստ, *ուց*, *ից* s. dress, robe, garment, clothes; – *յօրինել ումեք*, to dress, to make a dress for one; – *ամէնօրեայ*, every day clothes; – *հարսանեաց*, wedding garb; – *այրութեան*, widow's weeds; *սեաւ –ք*, dress coat; *պաշտօնական* –, regimentals; *հասարակաց –ուք*, in plain or private clothes; – *աւազանին*, baptismal grace; *ծառայական* –, towel, napkin; – *ոտին*, boot, shoe; *մերկ ի –ուց*, undressed, disrobed, naked; *դարան –ուց*, clothes-press; S. **Հանդերձ**, **Զեւ**, **Պատմուճան**, **Աքեմ**, etc.

Զգեստակալ, *ի* s. clothes-peg; portmanteau.

Զգեստապարոյր a. clothed, dressed; as a dress, that serves to clothe one's self with; surrounded, covered with a dress.

Զգեստառութիւն S. **Աքեմառութի**.

Զգեստասէր, *սիրաց* a. loving to array one's self in finery.

Զեստասիրութիւն s. love of fine clothes, of dressing showily, dandyism.

Զգեստաւորեմ, *եցի*, **Զգեստաւորեցուցանեմ** S. **Զգեցուցանեմ**.

Զգեստաւորիմ, *րեցայ* S. **Զգենում**.

Զգեստիկ s. bad dress; little coat, small garment.

Զգետնեմ, *եցի* va. to fling down, to throw on the ground, to beat down, to overturn; *զգետնեաց զնա դեւն ի մէջ անդ*, the devil had thrown him in the midst.

Զգեցութիւն, **Զգեցումն** s. dressing or robing one's self; *մարմնոյ զգեցմամբ*, clothing himself in flesh.

Զգեցուցանեմ, *ուցի* va. to clothe, to dress, to put a dress on any one; to furnish with clothes, to adorn; *եթէ զխոտն ի վայրի Աստուած այնպէս զգեցուցանէ*, if God so clothe the grass of the field.

Զգեցուցիչ a. that robes or dresses.

Զգլխեմ գինւով vn. to inebriate, to

get tipsy; to fly to the head as wine does.

Զգնամ, ացի *vn.* to walk, to take a walk, a turn, to walk out; – *ի վերայ տանեաց, ի բուրաստանի*, to walk upon the roofs, in the garden; – *ընդ եզր ծովուն*, to wander along the sea shore.

Զգոյշ, զգուշից *a.* sly, circumspect, considerate, guarded, wary; sure, safe, secure; – *լինել, կալ* S. *Զգուշանամ*; *ի զգուշի առնել* S. *Զգուշացուցանեմ*; – *վայր*, place of safety.

Զգուշաբար *ad.* silly, cautiously, prudently.

Զգուշագոյն *a.* very or more circumspect, very strict, rigorous; more sure; – *առնիցէք զորդիսն Իսրայէլի ի պղծութեանց նոցա*, you shall cause the children of Israel to avoid their uncleanness.

Զգուշալի *a.* hurtful, to be abstained from or avoided; important, imposing, considerable; cautious, circumspect; certain, secure, sure.

Զգուշակ *a.* that renders cautious; that announces, warns.

Զգուշական *a.* hurtful; to be avoided; S. *Զգուշաւոր*; sober, moderate; – *կենցաղ, կեանք*, ascetic life.

Զգուշահայեաց *a.* cautious, circumspect; smart, open-eyed.

Յոյս, *յուսոյ, ով. –ք, յուսից s.* hope, hopes, expectation, longing; confidence, trust; *դեռածին, հաւաստի, կենդանի, եռանդուն, մխիթարիչ, մեծ, կոյր –,* renewed or reviving, well-grounded, lively, ardent, solacing, great, blind hope; *ընդունայն, տկար, անստոյգ, պատիր* or *խաբէական, սուտ, խուսափուկ, անմիտ –,* vain, weak, uncertain, delusive or deceitful, false, fleeting, foolish hope; *նշոյլք յուսոյ,* the rays of hope; *բառնալ զ–,* to take away or put out hope; *զհետ գնալ սնոտի յուսոյ,* to abandon oneself to chimerical hopes, to hunt a shadow; *սնոտի յուսով պարարել, ի սնոտի – կապել,* to nourish oneself with vain hopes; *քաղցր յուսով պարարել,* to hug oneself with the delightful hope; *գեղեցիկ յուսով պարարել, թարթափեցուցանել զոք,* to feed or entertain one with flattering hopes or chimeras, to keep one in suspense; to ridicule, to deride; *վհատիլ ի յուսոյ,* to lose hope; *հատանել զ– իւր,* to despair, to give up all hope, to be in despair; *յուսով կեալ,* to live in hopes; **դնել զ– իւր ի վերայ ուրուք,* to build on one's hopes; **– տալ,* to cause to conceive hopes, to give hope, to inspire with hopes; *ի դերեւ հանել զ– ուրուք,* to deceive one's hopes or expectations; **լնուլ, կատարել զ– ուրուք,* to fulfil a person's hopes; *ծփել ը̄ մէջ յուսոյ եւ երկիւղի,* to hover between hope & fear; *– է ինձ,* I have some hopes; *– մի այսպիսի է ինձ զի,* I hope that, I am in hopes that; *– իմ է,* that is my only hope; *փակեալ յա̃մ յուսոյ ակնկալութե̃,* hopeless; *– եւս շիջեալ էր յիս,* hope died within me; *բարձաւ ա̃մ – փրկութե̃,* all hope of safety was lost; *պակասեալ յա̃մ յուսոյ փրկութե̃,* despairing of life; *հատաւ – նր̃,* he despaired; *հատաւ – մեր,* our hope is vanished; *դու ես միակ – իմ,* all my hopes are in you; S. Հատանիմ; *արծարծել զ–,* to revive hope.

Յոյր, *իցa.* big, fat, plump, fat & lusty; *gr.* aspirate.

Յո՞յր *սակս* or *սակի ad.* why? on what account? for what reason?

Յոպնակ, *աց s.* rhæda, an ancient four-wheeled chariot. [plover.

Յոպոպ, *ոյ s.* hoopoo, pewet, lapwing,

Յոռածին *a.* low-born, ignoble, base.

Յոռանամ, *ացայ vn.* to become wicked or contemptible, to grow or get worse & worse, to be deteriorated; to debase, demean, degrade or disgrace oneself, to degenerate, to fall away.

Յոռացուցանեմ, Յոռե– *va.* to make worse, to spoil, to corrupt, to debase, to deteriorate; to underrate, to depreciate, to disparage. [or bad.

Յոռեակ, *եկի, կաց a.* rather wicked

Յոռեգոյն *a.* worse; *–ք զա̃մ,* worst.

Յոռի, *ւոյ, ւեաց a.* wicked, bad, defective, paltry, wretched, low, vile, sorry; unseemly, detestable.

Յոռութի̃ *s.* bad condition or quality, deterioration, degeneracy, decay.

Յո՞վ S. Յո՞.

Յովազ, *աց s.* panther.

Յովանակ S. Յաւանակ ; -ահեծ or -չու *a.* riding a young ass. [colt.

Յովատակ, աց *s.* stone-horse, stallion;

Յովտ, ի *s.* iota; *fig.* jot, tittle.

Յոտանաւոր or **Յոտնաւոր** *a.* upright, on foot, standing; - կալ. to stand up.

Յոտանաւորութիւն or **Յոտնկացուն** *s.* the standing upright.

Յորամ *vn.* to fret, to grieve, to worry or vex oneself, to be uneasy, agitated. [overflowing, superabundant.

Յորդ *a.* abundant, copious; plentiful,

Յորդաբորբ *a.* very hot, burning, stifling, suffocating; -բուղխ *a.* flowing abundantly, copious, abundant; -գնաց *a.* going or flowing rapidly; very impetuous, rapid, violent; -գութ S. Բազմա-; -դէմ S. Յորդաբուղխ; -լի *a.* brimful; -լոյս *a.* full of light, very luminous, shining; -խաղաց S. Յորդագնաց; -խօս *a.* fluent in speech, eloquent, wordy, glib; -հեղեղ *a.* falling in abundance; overflowing; -հոս or հոսան S. Յորդաբուղխ ; -հոսանք or հոսք *s.* flood or overflow of waters, torrent; -հոսիմ *vn.* to flow or fall copiously or in abundance ; -ձայն *a.* sonorous, loud; obstreperous; -նախանձ *a.* full of envy, very envious; -շունչ *a.* blowing strong, impetuous, violent; -ջուր *a.* abounding in water; -ռատ *a.* superabundant, very copious ; *ad.* abundantly, in large quantities, much, in torrents; -սահ S. Յորդաբուղխ; -սաց *a.* eloquent, fluent; -վտակ *a.* gushing, flowing copiously; -տարափ *a.* very showery.

Յորդելակ *a.* high, acute, shrill.

Յորդեմ, եցի *va.* to cause to abound or flow in abundance, to deluge with, to pour out abundantly; to augment, to increase; *vn.* to be full of, to abound, to superabound, to stream or flow copiously; to overflow, to run over; to flood; to be gorged with, to swim in abundance; - զափամբք, to overflow, to rise above the banks.

Յորդեռանդ, -ն *a.* very ardent, boiling, burning, fervent.

Յորդէգնաց S. Յորդագնաց.

Յորդիմ S. Յորդեմ *vn.*

Յորդոր *a.* exhorted, encouraged; prompt, ardent, diligent, eager, desirous; copious, abundant; *mus.* andante; *s.* exhortation ; - սրտիւ, կամաւորութբ̃, heartily, willingly, gladly; - փութով. diligently, eagerly, promptly, readily; - լինել, to exhort, to incite, to induce; - երգել, to sing andante; տալ ի - վաստակոյ, to inspire with the taste for labour, to incite to work.

Յորդորագոյնս *ad.* eagerly, cordially, with great pleasure, very willingly.

Յորդորախոյզ *a.* diligently investigating.

Յորդորակ, աց *s.* exhortation; parenesis; homily ; *a. mus.* andantino; -ան S. Յորդորիչ.

Յորդորամիտ *a.* full of ardour, eager, desirous, ardent, prompt, ready; - առնել, to exhort, to persuade; - լինել, to be eager, desirous.

Յորդորեմ, եցի *va.* to exhort, to persuade, to excite, to incite, to induce, to stimulate, to spur or urge on; to encourage, to animate, to inflame, to comfort; to multiply, to augment, to increase.

Յորդորեցուցիչ, **Յորդորիչ** *a.* exhorting, persuasive; engaging, winning; stimulating, animating.

Յորդորիմ, եցայ *vn.* to be exhorted, persuaded; animated, inflamed; - գթոյ աղեաց, to be touched, moved with compassion.

Յորդորութի̃ S. -ումն. Յորդութի̃.

Յորդորումն *s.* exhortation, persuasion, incitement, stimulus, spur, incentive, encouragement.

Յորդութիւն, -ումն *s.* abundance, affluence, superabundance, exuberance; outflow, overflowing, discharge, torrent, inundation; -թբ̃ *ad.* in torrents, abundantly, copiously; -թիւն արեան, rivers of blood; -թիւնք պատուհասից, plagues upon plagues.

Յորժամ *ad.* when; *conj.* since, as; - or յո՞ր ժամ, when? [profound.

Յորձ S. Որձ; -ախոր *a.* very deep,

Յորձան, աց *s.* current, stream, torrent; eddy, whirlpool, vortex; bubble, bubbling; foaming; *mar.* eddy-water; -ս առնուլ, to boil hard, violently or furiously.

Յորձանուտ *a.* flowing rapidly; impetuous, rapid; furious, noisy, clamorous; *s.* whirlpool; syrtis, quick-sand, moving sands.

Յորձնեռանդն *a.* boiling, foaming; agitated, furious, turbulent.

Յորձուտ *a.* sultry, suffocating.

Յորմէ հետէ *ad.* since, since that; -

մեկնեցար, since you set out; *քանի՞ ժամանակք են – այդ գործեցաւ*, how long is it since that was done? *Երկուամք են – մեռաւ*, it is two years since he died; *երեք աւուրք են – լուայ զայդ*, it is only three days since I was told so, or, since I heard it.

Յորոց հետէ *ad.* since.

Յորջորջ, *ից*, *-անք* *s.* appellation, name, denomination, title; *անուն -անաց*, surname; *-անօք* *ad.* by name only, nominally; *-եմ, եցի* *va.* to call, to name, to denominate, to qualify as, to give a name to, to entitle; to surname; *-իմ* *vn.* to be called, named, entitled, &c.; – *յանուն ուրուք*, to bear another's name, to be called after; *-ումն* *s.* S. Յորջորջանք; *փոփոխական*, *փոփոխեալ* or *այլաշրջիկ* –, metaphor.

Յո՞ր սակս *ad.* why?

Յորսայս *ad.* supinely, with one's face upward, lying on one's back; backwards; – *զարկուցանել*, to hurl or throw backwards, to overthrow, to upset, to throw down on the back, to stretch on the earth; – *կալ*, *խաղալ*, to lie down prone, flat on the face, to stretch at one's whole length; to fall backwards; – *կալ*, *լինել* *fig.* to be idle, negligent, neglectful, to stand with folded arms; *արկել ի* –, to throw down & bind strongly; – *անկանիլ*, to fall on one's back, backwards; – *կացի ի դալարւոջ*, I stretched myself on the grass; *յինքն -եալ անկանիլ*, to recede, to flow back; *մինչեւ յե՞րբ -եալ կաս ո՛վ վատ*, how long wilt thou sleep, o sluggard? *-եմ, եցի* *va.* to throw to the ground, backwards, to overturn, to knock down, to fell or strike to the earth; *-իմ* *vn.* to lie down on one's back, to sleep; *-ութիւն* *s.* overthrow.

Յո՛ւ S. Յա՛յ.

Յուդա, *-յ*, *այի* *s.* Judas, traitor; S. Համբոյր; *-ական* *a.* jewish, judaical; *-ապէս* *ad.* as Judas, like a traitor, treacherously, traitorously; *-եան* *a.* Jewish; *-ք*. the tribes of Israel; *-ութիւն* *s.* Judaism.

Յուզախնդիր *a.* searching, prying, investigating, scrutinizing; – *լինել*. to seek, to search, to make researches, to investigate, to scrutinize, to set out in quest of, ta make inquiries, to inquire after.

Յուզակ, *աց* *s.* S. Խուզարկու; inventor, author; inciter, agitator, instigator; *a.* seditious; – *ալիք*, agitated sea, heavy billows; *-ան* *a.* agitating, grievous, vexatious; – *շուն*, brach, questing- or setting-dog; *-ոյտ* *a.* boisterous, stormy, tempestuous.

Յուզարկ *a.* agitated, violently moved; *-եմ, եցի* *va.* to search, to investigate; *-ու*, *աց* *s.* inquirer; S. Խուզարկու; plunderer, marauder, spoiler, robber.

Յուզաքննին S. Յուզախնդիր.

Յուզեմ, *եցի* *va.* to seek, search or inquire after, to make search for, to ferret out, to hunt after; to examine, to discuss; to agitate, to move, to trouble; to excite, to incite, to provoke, to stir up, to move sedition; – *զծով եւ զցամաք*, to seek everywhere for, to ransack; – *խնդիրս*, to breed disputes, to excite quarrels; *-իմ* *vn.* to be moved, touched; to be agitated, troubled, upset, excited, provoked; to rise in rebellion, to rebel, to mutiny; *յուզին գութք իմ ի նա*, I yearn for him, I pity him; *յուզեցան գութք նր̅*, he was touched, moved with compassion; *յուզեաց զգութ իմ ի վերայ նր̅*, he moved my compassion for him.

Յուզումն *s.* search, research, perquisition; trouble, agitation; incitement, instigation; turbulence, confusion, tumult; – *խորհրդոց*, anguish, anxiety, affliction, pain; – *կրից*, hastiness, outburst; – *սրտի*, emotion, transport.

Յուլաբար *ad.* idly, lazily, slowly, carelessly.

Յուլանամ, *ացայ* *vn.* to be idle, to grow lazy, indolent; to neglect, not to care for.

Յուլացուցանեմ *va.* to cause to become idle, slothful, indifferent, to enervate, to demoralize.

Յուլիանիկք *s.* Julianist sectarians.

Յուլիս, *ի* or *լեայ* *s.* July; *յամսեանն -ի*, in the month of –.

Յուլութիւն *s.* idleness, laziness, slowth, negligence; cowardice.

Յո՛ւկամ *ad.* where one wishes; where you will, wherever you like.

Յուղարկ *s.* transport, expedition; *-երթալ*, *լինել*, to accompany, to attend, to escort, to convoy; *-աւոր* *a.* accompanying, escorting; *-ք* *s.* attendants, train, retinue, suit; – *ճառ*, funeral oration; *-աւորութիւն* *s.* funeral,

funeral train or procession; obsequies, burial; -եմ, եցի *va.* to accompany, to attend on, to escort; to lead, to conduct, to guide; to send, to expedite, to despatch, to forward; to perform the funeral obsequies; -իմ *vn.* to be accompanied; - յորովայն մահու, to be buried.

Յուղարկիչ *s.* sender; forwarding agent, transmitter.

Յուղարկութիւն, -ութե *s.* S. -կաւորութիւն; sending, expedition.

Յուղայացուցանեմ S. Յուլայացուցանեմ.

Յունաբանութիւն *s.* hellenism, grecism; -գէտ *s.* hellenist, grecian, grecist; -լեզու *a.* speaking Greek; Ionic; - հրեայ, Hebrew born in Greece, i. e. in captivity; -կան *a.* Greek; - հուր, greek fire; - ոճ, grecism; վարել ոճ -, to grecize, to grecianise, to render greek.

Յունապ, ից *s.* jujube; -ագոյն *a.* isabella, yellow-dun; -ի, պւոյ *s.* jujube-tree.

Յունասէր *s.* philhellene, -nist; -սիրութիւն *s.* philhellenism; -ստան, ի *s.* Greece.

Յունարէն *ad.* in Greek; *a.* Greek; ուսանել, գիտել, խօսել -, to learn or study, to know, to speak Greek.

Յունացուցանեմ *va.* to grecize, to grecianise.

Յունաքար *s.* antimony.

Յունիս, ի or նեայ *s.* June; յ'13 -ի, the thirteenth of -.

Յունուար or **Յունվար**, ի *s.* January.

Յուշ S. Ուշ; *ad.* S. Յուշիկ; -! *int.* take care! mind! - ածել, առնել, to recall to one's memory, to cause to remember, to remind; - լիցի քեզ, ձեզ, recollect, remember; - եղեւ նմա, he has remembered.

Յուշարար, աց *a.* causing to remember, recalling to a person's recollection, mind or remembrance, commemorative; suggesting, warning; *s.* prompter; -ութի *s.* act of reminding; warning, admonition, notice, advice.

Յուշիկ *ad.* slowly, softly, easily, leisurely; softly, gently, mildly; - գնալ, to go fair & softly; to walk gravely along.

Յուշկապարիկ, րկաց *s.* onocentaur; centaur, hippocentaur; siren, mermaid.

Յու պէտ S. Յուկամ.

Յուռթ S. Յուռութ; -անամ, ացայ *vn.* to be fertile, fruitful, fecund; -եմ, եցի *va.* to make amulets or charms, to enchant, to cast a spell over, to bewitch, to charm, to fascinate; -ի *a.* abundant; watered, irriguous; fecund, fertile, fruitful, productive; -իչ *s.* diviner, sorcerer, enchanter, magician, wizard; -ութիւն *s.* enchantment.

Յուռմարիմ *vn.* to murmur against, to bear rancour, to owe a grudge; -րութիւն *s.* ill-will, malice, rancour.

Յուռութ, ռթի. -ք, ռթից, -ուլունք *s.* enchantment, witchcraft, sorcery, magic; charm, fascination; amulet, talisman, charm, preservative, phylactery; -ս յուռթել S. Յուռթեմ.

Յուսաբար *ad.* hopingly; -բեկ S. Յուսահատ; -բեր *a.* hopeful; -դիր *a.* inspiring hope, inspiriting, reviving hope or courage, encouraging, animating; consoling; -դրական *a.* consolatory, comforting; exhortatory; -դրեմ, եցի *va.* to revive hope; to comfort, to encourage; -դրութի *s.* giving hope; comforting; hoping; -լի, -կան *a.* that may be hoped; -լիր, -լից *a.* full of hope or confidence, hopeful; -կիր *a.* bringing or bearing hope; -կնեալ or գնեալ *a.* waiting with hope; -կորոյս *a.* desperate, hopeless; -կտուր, -հատ *a.* in despair, without hope, comfortless, broken-hearted, disconsolate, discouraged, despondent; - առնել, to despair, to take away all hope, to drive to despair, to throw into despair; - լինել, to be in despair, to lose all hope, to be desperate, hopeless, to give oneself up despair, to despond, to be disheartened, to get discouraged; - զումեքէ, to despair of a person's life, to give over, to deem past recovery; -կցիմ *vn.* to hope together, to mutually encourage with hope; -հատաբար *ad.* desperately, despairingly; rashly; -հատական *a.* desperate, hopeless; - գործ, a desperate business, a hopeless affair; - հիւանդութի, a desperate disease; -հատեմ, -տիմ S. Յուսահատ առնեմ & լինիմ; -հատութիւն *s.* despair, hopelessness; despondency, faint-heartedness; առ -թէ, through despair; -թբ *ad.* desperately, past recovery, without hope; ի - մատնել, to deprive of all hope, to deliver or abandon to despair.

Յուսամ, ացայ *vn.* to hope, to expect; to trust, to confide; to promise or flatter oneself; – ի Տէր, առ ԱԾ̃, to trust in God.

Յուսապատար S. Յուսալիր. [hope.

Յուսացող, Յուսող a. hoping, full of

Յուսացուցանեմ va. to cause to hope, to inspire with hope, to promise, to flatter. [hope.

Յուսափափաք a. full of desire &

Յուրան, աց s. pyramid: rick, stack: decanter; -աձեւ a. pyramidal.

Յուրաստ լինիմ vn. to deny, to disown.

Յուրիսեան կրաքարինք. Jurassic lime-stone. [its derivatives.

Յոքն, քունք, Յոքնա... S. Յոգն with

Յստակ, աց a. clear, clean, pure, limpid; *fig.* pure, sincere, candid; manifest, evident, distinct; *ad.* clearly, cleanly, purely; distinctly, evidently, manifestly.

Յստակաբան s. purist; -ութի s. purism; -գոյն ad. very clearly, very distinctly; precisely; -խօս, ից a. speaking clearly, distinctly; -միտ a. single-minded, simple-hearted, sincere, ingenuous, candid; -մտաբար ad. simply, sincerely, innocently; -մտութիւն s. single-mindedness, simple-heartedness, sincerity, ingenuousness, candour; -նամ, ացայ vn. to clear up; to be clarified; -չափ s. eudiometer; -չափական a. -trical; -չափութի s. -try; -պատում առնեմ va. to narrate clearly, distinctly; -պէս S. Յստակ ad.; -ջուր a. of clear or limpid water; - աղբիւր, clear, limpid, crystal, pellucid fountain or spring; -սպաս a. very bright, without obscurity; -տես a. seeing clearly, clearsighted, perspicacious; -տեսութի s. clearsightedness, perspicacity.

Յստակեմ, եցի, -եցուցանեմ va. to clean, to clear, to clarify, to render clear or limpid; to refine, to purify; to collect the refuse.

Յստակութի s. clearness, pureness, cleanness; limpidity; *fig.* purity, candour, sincerity, ingenuousness.

Յօդ, ից s. articulation, joint, juncture; bond, tie, link, connexion; *gr.* article; լուծեալ յամ -ից, paralytic; – – S. Յօշ յօշ.

Յօդաբան a. feigning, simulating; inventing lies; -թափ, ի s. equuleus, wooden horse used in torture; *a.* dislocated, put out of joint; -թափումն s. dislocation; -լոյծ a. with dislocated articulations; paralytic; -խաղաց առնեմ va. to dislocate, to put out of joint, to lux, to luxate; -կան a. compound; articular; *gr.* conjunctive; -կանութի s. compound; -կապ s. tie, bond, union, knot; *a.* articulated, composed of articulations; - մտերմութե, ընկերութե, bonds of friendship, ties of society; -կապիմ vn. to be united together; -կապութիւն s. junction, conjunction, bond, union, connexion; -կոտոր առնեմ, քակեմ va. to dislocate, to disjoin; to tear or rend in pieces, to dilaniate; -նամ, ացայ vn. to be articulate, jointed, attached; organized, formed; to associate, to take part in, to admit as member; -չափութիւն s. excellent organization, symmetry of parts; -պատ a. articulate, surrounded with articulations, corporeal; *fig.* well, tersely, elegantly composed or written; -ցաւ a. gouty; -ցաւական a. rheumatic, arthritic; -ցաւութիւն s. rheumatism, gout, arthritic disease, arthritis; -ցուցանեմ va. to articulate, to utter, to pronounce, to form; to fit, to suit, to organize; to associate, to elect or to return as member; -ւոր a. articulated, articular; articulated, uttered; well expressed, well turned, harmonious; -ւորեմ S. Յօդեմ; -ւորութիւն s. connexion, conformity, accordance, harmony.

Յօդեմ, եցի va. to join, to unite, to tie, to bind, to annex; to articulate, to pronounce, to utter; to feign, to contrive, to invent; to compose, to form.

Յօդուած, ից or ոց s. articulation, joint, knot; composition, construction; article, paragraph; -աւոր a. articulated; -ոյ, ից a. contrived, fictitious, artificial, imaginary; *gr.* compound.

Յօդումն s. connexion, harmony.

Յօժար a. well disposed, inclined, willing, well affected; prompt, ready, eager, desirous, anxious; - լինել, to be disposed or inclined to, in the mood for, to have an inclination for; - or

Յօժարաբար, -գոյն ad. eagerly, willingly, with pleasure, with good will, voluntarily, spontaneously, heartily; -կամ S. Յօժար a.; -կան a. spontaneous, willing; -միտ a. voluntary, well disposed, ready to, eager, ardent; - , - կամօք or -մտաբար ad. voluntarily, spontaneously, willingly, with good will, heartily; *-մտութի* *s.* goodwill, entire disposition, inclination, devotion, eagerness; *-նամ* S. **Յօժարիմ**; *-սէր* *a.* eager, desirous; *-տրական* *a.* liberal, generous, open-handed; *-ցուցանեմ* S. **Յօժարե-**; *-փոյթ* *a.* eager, ready to, disposed to; *ad.* eagerly; *-ք հակառակութեամբ*, contentious, litigious, quarrelsome.

Յօժարեմ, *եցի*, *-եցուցանեմ* *va.* to dispose, to incline, to excite, to inspire with inclination, to raise a desire or a passion for, to interest, to induce, to invite, to persuade.

Յօժարեմ, *եցի*, *-րիմ*, *եցայ* *vn.* to be disposed towards, inclined to, to have a liking for, to lean to, to have a mind or inclination for, to be in the mood for; to will, to wish, to desire, to be eager for.

Յօժարութի *s.* natural bent, disposition, inclination, propension, proneness, tendency, taste; *-թք* *ad.* willingly, voluntarily.

Յօդեմ, *եցի* *va.* to form, to fashion, to arrange, to set in order.

Յօն, *ի.* *-ք*, *նից* or *նաց* *s.* eyebrow; *fig.* lofty countenance, stately look, superciliousness, haughtiness; *-սեաւ*, *կամարաձեւ*, *թաւ*, *անօսր*, *նրբին*, *ի վայր անկեալ*. *ամբարհաւաճ*, *սպառնալից*, dark, finely arched, bushy, thin, small, hanging, haughty, threatening eyebrow; *ամբառնալ զ-ս*, *զ-ս վեր ի վայր տանել*, to raise the brows through superciliousness, to put on an arch look, to look arch; *վանել զ-ն*, to put off pomp or pride; *պռստել*, *ի վեր պրկել զ-ս*, to frown, to knit the brow, to look sour or angry; *զ-սն հանել*, to paint the eyebrows; *-օք ակնարկել*, to wink, to wink at.

Յօնակից *a.* having joined eyebrows; *-ընկել*, to knit the brow; *-ճօճ* *a.* knitting the brows nervously.

Յօնեղ *a.* heavy-browed, beetle-browed.

Յօշ յօշ *ad.* bit by bit, piecemeal, in pieces.

Յօշատեմ, **Յօշեմ**, *եցի* *va.* to cut to pieces, to cut up, to tear in pieces; *անդամ անդամ -*, to dismember, to tear limb from limb, to pull to pieces, to dilaniate; *- ընդ մէջ*, to divide in halves; to cut or break asunder; *- ըստ յօդից* (*զհաւս*, &c.), to carve meat.

Յօշուած, *ոյ* *s.* a joint of meat; dismembered part, segment; *-ումն* *s.* dismembering, dismemberment.

Յօսեմ, *եցի* or *սի* *va.* **Յօսնում** or **Յօսում**, *սայ* *vna.* to weave, to intertwine; to fornicate, to commit fornication; to violate, to force, to deflower; *- ի բոզս*, to whore, to be a whoremonger.

Յօսնական *a.* obscene, filthy.

Յօտ, *ոյ* or *ի* *s.* vine slips or cuttings, vine-branch.

Յօտեմ, **Յօտոց**, **Յօտումն** S. **Յատա-***նեմ*, &c.

Յօրայ, *ից* *s.* step-father; S. **Հօրու**.

Յօրան, *ոյ* *s.* sheaf of corn; rick, stack.

Յօրանամ, *ացայ* *vn.* to fatten, to grow fat; to stuff or gorge oneself; to live in effeminacy, idleness or debauchery, to wallow in voluptuousness, to pamper oneself; to become haughty, to enact the stately personage, to play the swell; *- սիգաքայլ*, to stalk, to walk proudly, to look big; *- ի խաղս*, *ի զբօսանս*, to pass the whole day in pleasure or amusement.

Յօրանչ or *-ջ* *s.* yawn; *-եմ*, *եցի* *va.* to yawn, to gape; *-ումն* *s.* yawning, gaping.

Յօրացումն *s.* luxury, voluptuousness.

Յօրինական *a.* dressed, adorned.

Յօրինեմ, *եցի* *va.* to fashion, to adapt, to fit to, to adjust; to arrange, to dispose, to organize; to get ready, to prepare, to provide with, to furnish, to order; to form, to trim, to adorn, to embellish; to compose, to write; to make, to construct, to build; *- պարս*, to dance; *- երգս*, *նուագս*, to sing, to modulate, to tune; *թատրոնական քերթուածս -*, to write a dramatic composition.

Յօրինիչ, *-նող* *s.* fitter; composer.

Յօրինուած, *ոյ* *s.* fitting up, adjustment; formation, fashion; composition, organization, structure; construction; furniture; embellishment, ornament, decoration; disposition; harmony.

Յօրինուածութիւն *s.* good order; discipline; care.

Յօրինումն S. **Յօրինուած**.

Ն

Ն (*noo*) նու *s.* the twenty second letter of the alphabet, & the seventeenth of the consonants; ն, ն̄, four hundred; four hundredth.

— It is sometimes changed into մ, for example: անբիծ, անբաւ, անբարիշտ; ամբիծ, &c.

— It is sometimes redundant; as բարբանջել, բառանջել, մարմանջել, instead of բարբաչել, &c.

— It sometimes takes the place of յ & ի articles, but rarely & improperly.

— Placed at the end of words it serves as a definite article, as: այրն, կինն, մանկունքն, the man, the woman, the boys; մինն ի նցէ մեռաւ, եւ միւսն կենդանի է, one of them is dead, the other is alive; մեծն Աղեքսանդր, Alexander the great; միանգամ յամին, երկիցս յաւուրն, &c. once a year, twice a day, &c.

— And sometimes it serves for ornament, as in the following: երկիւղն յորմէ խիթային – մինչ ոչն մեղանչէին – ոչ բարւոքն վկայեաց – ոչ միանգամն եւ միւսանգամն, &c.

— It is also sometimes joined to the first & second persons for the sake of euphony, as: ուր եսն եմ – զոր պաշտեմն, զոր ասեմն: — որում դուն վկայեցեր – զոր խորտակեցերն — վէս խօսէիրն, &c.

Նա, նորա. նոքա, նոցա *pron.* he, she; that, it; ուտէ նա, he or she eats; ուտեն նոքա, they are eating; խնդրեմ զնա, I am looking for him, her or it; ասեն նոքա, they say; նա է, it is he or she; անուն նորա, his, her or its name; ետու նոցա, I have given them.

Նա *conj.* but, however, nevertheless, yet; indeed, really, in fact; նա՛ է, that is, that is to say, i. e.; նա աւանիկ, նա աւասիկ, look there, look here; but, yet; նա եւ, also, even, likewise, again; moreover, besides; նա զի, նա մանաւանդ թէ, above all, the more; rather; նա եւ ոչ, neither, nor; not even; նա եւ արդ իսկ ոչ, not even now; նա ուրեմն, certainly: perhaps, it may be that: well; now, then.

Նաբաղեմ, եցի *va.* to contemn, to despise.

Նադրոն *s.* natron, nitre; – աղ, saltpetre; –ային *a.* nitric.

Նազաբան *a.* fulsomely praising, highly laudatory; -եմ, եցի *va.* to exalt, to extol, to eulogize, to load with praises; –ութի̄ *s.* eulogy, praise.

Նազանք *s.* show, train; magnificence, glory; mincing airs or manners, smirking, simpering.

Նազարարութի̄ *s.* reverence, respect, homage.

Նազարացի, ցւոյ *a.* Nazarean; *s.* Nazarene; – գոլ ի գինւոյ, to abstain from wine.

Նազելի *a.* excellent, praiseworthy, egregious, honourable, respectable; honest, brave, galant, reserved, grave, serious; delicate, nice, pretty, genteel, charming, gracious; գնացք –ք, majestic port or bearing; ձեւք –ք, languishing or languid air.

Նազեցուցանեմ *va.* to honour, to respect.

Նազիմ, եցայ *vn.* to pout, to be dainty, to give oneself airs, to stand upon ceremony, to make some difficulty, to be fussy, very particular, disdainful, overnice, to turn up one's nose, to simper, to smirk, to want asking, to hesitate; to play the bully, to set up for a beau, to boast or brag of, to pique or plume oneself; to put on the airs of a lord.

Նազող *s.* affected creature.

*__Նազուգ__ *s.* winder.

Նազովրեցի S. Նազարացի.

Նազովրի *s. Hebrew w.* sceptre.

Նաժիշտ. ժշտաց *sf.* maid-servant, female domestic, waiting-maid, or -woman.

Նախ *a.* first; *ad.* firstly, in the first place, at first; – ք̄, before, ere; –ք̄ զա̄մ, first of all.

Նախաբանեմ S. Յառաջաբանեմ; –նութի̄ S. Կանխաձայնութի̄; –բարբառ *a.* first to say; –բժիշկ *s.* chief-physician; –բնակ *a.* dwelling antecedently; –բնաւորիմ *vn.* to be from the beginning; to be pre-established; predes-

tined; -բոյս, -բուղխ a. spring up or produced before.

Նախագահ a. s. S. Յառաջագահ; -արքեպս, primate; - նստել, բազմել, լինել, to preside, to be the president, to hold the first place; -ք S. Նախաթոռք; -ական a. primatial; -եմ va. to preside over; -ութ̃ն s. presidency; precedency, primacy, primateship; -գաղափար s. prototype, architype, primitive model, original, idea, pattern; *gr.* primitive; - շինուածոյ, sketch, plan, model; -գաւիթ s. front-court; -գէտ S. Կանխագէտ; -գիծ a. traced, delineated before; s. delineation, sketch, outline, rough- or first-draught, minute: acrostic; -գիտուն S. Կանխա-; -գիր a. written before; prescribed; s. title; exordium, preamble; -գիւտ s. author, inventor; -գլուխ a. s. chief, principal; -գծեմ va. to sketch, to delineate, to outline; -գնաց a. gone before, preceded; s. precursor, forerunner; -գոլ, ոյ s. pre-existence; -գոյ, -գոյակ a. pre-existent; - էն, the First Being; -գոյն a. more ancient; *ad.* S. Յառաջագոյն; -գործ a. first acting or operating; made before; -գուշակ S. Կանխա-; -գտակ S. Նախագիւտ; -գրաւեմ va. to pre-occupy, to prepossess; -գրաւութիւն or ումն s. pre-occupation; -գրեմ va. to write beforehand; to prescribe; to say or mention before; -գրութիւն s. writing beforehand; prescription, usucaption.

Նախադաս a. set over, put above, promoted, preferred, superior; - առնել, համարել, to prefer; -ելի a. preferable; -եմ va. to set over, to put above, to promote; to prefer, to give the preference to, to esteem more; -ութիւն s. first order or rank, preference, precedence, pre-eminence; proposition, premises; -դատ a. discerning; -դատեմ va. to prefer, to put before; -դատութ̃ն s. prejudice, prepossession, prevention; -դիպիմ vn. to meet first; to happen before; -դիր, դրաց s. founder or institutor; *gr.* preposition; -դուռն s. entrance-door, portal; vestibule; *fig.* commencement; -դրունք s. propylæum; -դրութիւն s. preface, preliminary dissertation; design, project; *gr.* preposition.

Նախազգաց լինիմ vn. to have a presentiment of, to foresee, to forebode; -զգացումն s. presentiment, foreboding; -զգուշութ̃ն s. precaution; -զեկոյց S. Կանխա-.

Նախաթթուուկ s. *chem.* protoxide; -թիւ s. antedate; -թոռ S. Նախագահ; -թոռք s. first seat, highest place; -թուեմ va. to antedate.

Նախաժաման a. arriving before; -եմ vn. to come, arrive or get before, to get the start of; to outstrip, to outwalk; -ումն s. prevention.

Նախախնամ, -ական a. provident, careful; -եմ va. to provide, to be the providence of, to take care, to supply, to look, to preserve, to watch; -իչ a. providing, preserving, taking care; -ութ̃ն s. Providence; foresight, prevision, care.

Նախածանօթ a. known before; prescient, knowing beforehand; -ութ̃ն s. prenotion; prescience; -ծին a. created, born or produced first; bearing young for the first time; s. first-born; -ծնող s. first father or mother; -ք, forefathers, ancestors.

Նախակազմեմ va. to prepare; -կատար a. perfect in itself; finished or accomplished beforehand; -ք s. premices; -կարգ a. predestined, pre-established, predisposed; - բան, preliminary, preamble; -կարգեմ va. to preordain, to pre-establish, to predispose; to predestine; -կարգութիւն s. pre-establishment; -կարծ a. prejudiced; -կարծիք s. prejudice, prepossession; -կերտ a. built before or formerly; - արարչութիւն, creation of the world; -կրթական a. elementary, primary; -կրթանք s. preparatory exercises; elements, rudiments; -կրթեմ va. to instruct beforehand; to exercise, to prepare or form by exercise; -կրթութ̃ն s. primary instruction.

Նախահայեաց a. provident, foreseeing; -հայեցումն s. foresight; -հայր s. the primitive or first father, progenitor of the human race, Adam; patriarch; *fig.* author, inventor; -հարք s. the ancients; the Holy Fathers; -հաւ s. great-grandfather; -հոգ, -հոգակ a. provident; - խնամք, foresight; - զգուշութ̃ն, precaution; -հոգամ, &c. S. Նախախնամեմ, &c.; -հրաման a. commanded, ordered beforehand; -հրաւէր a. invited beforehand.

Նախաձայն, &c. S. Կանխաձայն, &c.; *-ձեռն a.* spontaneous, ready, willing; prompt; the first to volunteer; *– լինել ի կռիւ*, to commence the attack, to begin the fight; *-ձեռնեմ, եցի vna.* to undertake; to presume; to pre-elect; to promote, to raise, to exalt; to consecrate or ordain; *-ձեռնութիւն s.* enterprise.

Նախաղի *s.* colon, the great gut; rectum.

Նախաճաշ *s.* early breakfast; *ճաշակերպ –*, meat breakfast; a late substantial breakfast; *– առնել* S. Նախաճաշեմ; *-ակ s.* foretaste; *-ակիչ s.* taster, assayer; *-եմ vn.* to breakfast; *-իկ* S. Նախաճաշ; *-ճառ a.* predicted, foretold, prophesied; *– քարոզութիւն*, prediction, foretelling, prophecy; *-ճառեմ va.* to predict, to foretell, to prophesy; *-ճառութիւն s.* prediction, prophecy.

Նախամամ *sf.* great-grandmother; *-մայր s.* our first mother, the mother of mankind, Eve; the wives of the patriarchs; *-մասնութիւն s.* prerogative, privilege; *-մատոյց առնեմ va.* to promote, to prefer to any post or dignity; *-մարգարէ s.* the first prophet, Moses; *-մարդ s.* the first man, Adam; *-մարտիկ s.* fighting in the first rank; coryphæus, champion; *s.* skirmisher, sharpshooter; *-մարտկութիւն s.* skirmish; *-մեծար a.* preferable, better, preferred, most esteemed; *– առնել, ընտրել, համարել*, to prefer, to like better; *-մեծարութիւն s.* preference; *-է քան ad.* preferably; *-մեղ a.* first sinning (Eve); *-միջօրեայ a.* antemeridian; *-մուտ a.* presumptuous, arrogant; *-ք s.* portal.

Նախայայտ, *-նի a.* foreknown; *-յայտեմ va.* to manifest previously; *-յաջորդ s.* predecessor; *-յարաշեշտ a. gr.* accented on the penultimate; *-յարապարոյկ a. gr.* circumflected on the antepenult; *-յարձակ s.* the first to attack, skirmisher, sharpshooter; *– լինել*, to attack the first, to begin or engage the battle, to open the skirmish; *-յաւիտեան* or *տենական a.* existing before all ages, eternal, self-existent, increate; *– Որդի*, the Son of God before all eternity; *-յիշատակեալ a.* aforesaid, above-mentioned; *-յօժար a.* predisposed, willing; *-յօժարութիւն s.* predisposition.

Նախանկար *a.* delineated or designed beforehand; *s.* prototype, original; *-եմ va.* to sketch or describe beforehand; *fig.* to trace, to shadow, to delineate, to symbolize, to represent; *-ութիւն s.* figure, shading.

Նախանձ, *ու s.* envy, jealousy; rancour, hatred; emulation, rivalry; zeal, fervour, warmth; *տիրասէր –*, attachment, affection; zeal; *առ -ու ad.* enviously, invidiously; *– կրել յումեքէ*, to be envied; *-ու մաշիլ*, to pine away with envy, to be eaten up with envy; *ի – բարկութեան բրդիլ*, to burst with envy; *– առնուլ, բերել, ի – բերիլ, մտանել*, to envy, to be envious of, to grow jealous, to bear envy; to rival, to vie with; *– արկանել յոք, ի – ածել զոք*, to fill with jealousy or envy; to move, excite or provoke to emulation; *ի – գրգռել զոք*, to arouse the jealousy of, to create envy; *խնդրել զ–*, to revenge, to take vengeance; *վառիլ -ու ը̄*, to become jealous; *ի – վառիլ ը̄ ումեք*, to be jealous of; *– դնել*, to emulate, to rival; *ի – նմանութեան ուրուք կրթիլ*, to emulate a person, to desire to imitate him; *– առաքինութեան դնել ը̄ ումեք*, to desire to emulate a person's virtues; *– առնել*, to fascinate, to charm, to bewitch, to cast a spell on; *ո՜ անմիտ Գաղատացիք, ո՞ արար զձեզ*, o foolish Galatians, who hath bewitched you?

Նախանձաբեկ *a.* dying with envy, full of envy, envious, jealous; *– առնել*, to move to envy, to provoke to jealousy; *– լինել* or *-իմ vn.* to bear envy, to be tormented with envy; *-լից a.* full of envy, very invidious; *-խնդիր, -յոյզ a.* zealous, fervent, ardent; *s.* zealot, a zealous partisan; avenger; *-յուզութիւն s.* zeal, fervour, warmth; envy, jealousy; *-րկու a.* inspiring, raising or provoking envy; *-ւոր a.* zealous, full of zeal, desirous, ardent, fervent; emulous; *s.* zealot, emulator, rival, competitor; envious, jealous; *– լինել*, to be zealous; to bear envy, to be envious of; to vie with; *-ւորութիւն s.* zeal, emulation, rivalry; enviousness, jealousy; *վատ –*, paltry jealousy.

Նախանձելի *a.* enviable, worthy of envy; to be wished for, desirable.

Նախանձեցուցանեմ *va.* to raise envy, to cause envy, to excite or awake jealousy; *– ի բարի նախանձս*, to incite to emulation; – զԱծ, to excite the jealousy or anger of the Almighty.

Նախանձընդդէմ *a.* emulating, vying; jealous, rival, emulous, full of emulation; *ad.* with emulation, wying with each other; – ջանք, emulation, rivalry; – կիրք, jealousy; – լինել, գալ, to emulate, to vie with.

Նախանձիմ, եցայ *vn.* to bear envy, to envy, to be jealous of, to grow invidious; to rival, to vie with, to emulate; – զնախանձ Տ̄ռն, to burn with zeal for the Lord.

Նախանձկոտ, –ձոտ, –ձորդ, աց *a.* envious, jealous, invidious; emulous, rival.

Նախանձուկս արկանել *va.* to raise, inspire, cause or rouse envy or jealousy; – միմեանց, to grow mutually jealous; to emulate one another.

Նախանուն *s.* prenomen.

Նախաշաւիղ *s.* fore-runner, precursor; preliminary, introduction.

Նախաչար *s.* author or cause of all evil, the Devil.

Նախապահեստ *a. s.* preservative, prophylactic, preserver; *–պաշարումն s.* prejudice, prepossession, prevention; *–պապ s.* great-grandfather; *–պատիւ a.* worthy of the greatest honours, of greater consequence, first in dignity, most esteemed, honoured, preferred; – լինել ումեք, to be preferred to another, to obtain the preference; *–պատճառ s.* first cause, author (God); *–պատմելի a.* foretelling, predicting; *–պատմեմ va.* to tell, narrate or announce beforehand; *–պատմութիւն s.* ancient history; *–պատուար s.* counter-guard, rampart, parapet, bulwark; *–պատուեմ va.* to respect, to honour most, to pay the highest honour to; *–պատում a.*predicted, anounced beforehand; *–պատուութիւն s.* pre-eminence, preference, advantage; *–պատրաստեմ va.* to prepare beforehand, to predispose; *–պատրաստութիւն s.* preparation, predisposition; *–պարգեւ a.* given or granted beforehand; *–պարիսպ* S. Նախապատուար; *–պետ*, &c. S. Նահապետ, &c.; *–պտուղ s.* first fruit, premice.

Նախասահմանեմ *va.* to predestine; *–սահմանութիւն s.* predestination; *–սարկաւագ s.* archdeacon; *–սաց* or *ցիկ a.* predicted, foretold; *–սացութիւն s.* prediction; *–սենեակ s.* anteroom, antechamber, waiting-room; *–սերմանեմ va.* to sow previously; *–սկիզբն s.*first author, first principle, beginning, origin, source; chief, escort, guide; *–սպան s.*first-shooting; *–ստացող s.*first master; *–ստեղծ, ից, –ծիկ a.* created first; *–ստիճան a.* supreme, sublime; *–սրբեալ a.* presanctified.

Նախավախճան *a.* first dead (Abel); premature; *–եալք s.* the departed ancients; *–վաղ ad.* already long since; *–վաստակ a.* very laborious, most industrious; *–վերջընթեր a.* antepenult; *–վկայ s.* protomartyr, the first martyr, St. Stephen; *–վկայութիւն s.* first martyrdom; *–վկայուհի sf.*the first martyr; *–վճռեմ va.* to decree, to decide beforehand.

Նախատ *s.* insult, outrage, injury, opprobrium, shame, infamy; *a.* infamous, ignominious, opprobrious, base, villanous; despised, scorned, vile; – լինել. to become an object of scorn or ignominy, to be infamous.

Նախատական *a.* offensive, outrageous, abusive, insulting, injurious, defamatory; *–կոծ a.* loaded with insult, shame or abuse, insulted, affronted; – տանել, to load with abuse, to insult, to affront; – լինել, to be covered with opprobrium, loaded with abuse.

Նախատանք S. Նախատինք.

Նախատելի *a.* S. Նախատական; blameable, reprehensible, censurable.

Նախատեղեակ *a.* warned, acquainted with beforehand; *–տեղեկութիւն s.* foreknowledge, prescience.

Նախատեմ, եցի *va.* to insult, to injure, to offend, to outrage, to abuse, to load with injuries; to reproach, to blame, to censure.

Նախատես *a.* foreseeing, prescient; – լինել, to be provident; *–եմ, եցի vn.* to foresee; to prophesy; *–ութիւն s.* foresight, prevision; prophecy.

Նախատինք, տանաց *s.* wrong, affront, injury, offence, outrage; blame, reproach, censure; shame, dishonour, opprobrium, infamy, ignominy; *–նս դնել, գործել ումեք*, to affront, to wrong, to insult, to disgrace, to dishonour; լինել – ազգաց, to become the scorn of nations; բառնալ զ–նս, to wipe off the ignominy; ի –նս քո, for thy shame.

Նախատիչ *s.* insulter, offender, abuser, reviler, affronter, scoffer.

Նախատիպ S. Նախագաղափար; -տորդ S. Նախատիչ; -տուն *s.* first dwelling; -տուր *a.* given, granted or conceded before; -տօն or նակ *s.* eve of a feast.

Նախարար, աց *s.* satrap, proconsul, lord, governor of a province, prefect, mayor; -ք, magnates, grandees, noblemen; -ագունդ *a.* eomposed of satraps or nobles, princely; *s.* the nobility; -ազն *a.* of a noble or princely family; -ական *a.* lordly, seignorial, princely; -ակոյտ *a.* formed of nobles; -ապետ *s.* premier noble; -եան *s. pl.* satraps, seignors, grandees; -ութի *s.* satrapy, proconsulship, lordship, prefecture, mayoralty.

Նախաւոր *a.* former, anterior, original; -ութիւն *s.* priority.

Նախաքառորդ *s.* fore-quart, warning; -քարոզ *a.* first Gospel-preaching; *s.* preceding words, admonitions or discourses. [խագիտութիւն.

Նախագիտականն, -տութիւն S. Նա-

Նախդոյն *a.* first; *ad.* before, at first, formerly.

Նախդիր, դրաց *s. gr.* preposition.

Նախելուզակ *s.* archbrigand.

Նախեկեղեցի *s.* the first church.

Նախեղակ *a.* pre-existent, uncreated; -ղութիւն *s.* pre-existence.

Նախերախայրիք *s. pl.* primices; *fig.* the first-born.

Նախերգաբար *ad.* previously; as a prelude; -գան, ի. անք *s.* prelude, exordium, preamble, prologue, prologomena; -գել *vn.* to prelude; to make a preamble; -գութի S. Նախերգան.

Նախերէց *s.* dean; -րիցուի *s.* deanery; deanship.

Նախէ, ի *s.* the First Being, the Eternal; *a.* first, former; -ք *s.* antecedents, precedents. [forehand, to savour.

Նախըմպել *va.* to taste or try be-

Նախընթանամ *vn.* to precede, to forego.

Նախընթաց, ից, -իկ *s.* fore-runner, precursor, herald; *a.* antecedent, precedent, previous, anterior; -աբար *ad.* precedently; -ութիւն *s.* the fore-running; *fig.* progress, advancement.

Նախընթրակ, աց *s.* luncheon, lunch, collation; after-dinner meal, tea.

Նախընծայ *a.* given, offered previously; preliminary; *s.* premices; *ad.* primitively, at first; - օրինակ. first example; -եցեալ *a.* offered the first.

Նախընկալ *a.* received beforehand, forwarded antecedently; - լինել, to be received first.

Նախընտել *a.* very familiar, intimate; -տիր S. Ընտրելագոյն.

Նախիղձիկք *a.* pagan oracle; -կս բարբառել, to forebode, to presage.

Նախիմաց, ից *a.* knowing, acquainted with beforehand; prescient, provident; -ուի *s.* prescience, foreknowledge; presentiment.

Նախիր, խրաց *s.* herd of black-cattle.

Նախծին S. Նախածին.

Նախկի, -ն S. Առաջին. [terlings.

Նախճամէջ պար *s.* tripe, gut, chit-

Նախճիրք *s.* slaughter, carnage, blood; great loss, prejudice, waste; -րս արեան գործել, to slaughter; -րս գործեցին դժնդակս ըղէմ թշնամեաց, they made a dreadful slaughter of the enemy.

Նախնական *a.* primitive, ancient; primordial, primitive (soil); - թիւ, primary number.

Նախնի, նւոյ, նեաւ *a.* first, primitive, ancient, old; *s.* ancient, chief; -ք *s.* the ancients, ancestors, antecessors, forefathers; ի -նումն *ad.* anciently, formerly, in times past, in former ages.

Նախնուի *s.* priority; antiquity, age.

Նախողջոյն լինիմ *vn.* to salute first; to be the first saluted; -ք *s.* first salutation or greeting.

Նախորդ, աց *s.* predecessor; -ք, forefathers, ancestors.

Նախորմ *s.* outer wall, rampart.

Նախուստ, ի - *ad.* anciently, formerly, ab antiquo; *a.* first, ancient.

Նախջրհեղեղեան *a.* antediluvian.

Նահանգ, աց *s.* province, region, country; climate; Միացեալ -ք Ամերիկոյ, the United States of America, U.S.A.

Նահանջ, ից *s.* retreat, rout, defeat; *a.* bissextile; - ամ, leap-year; -ական *a.* intercalary; -ել, եցի *va.* to recant, to retract, to withdraw, to drive back, to revoke; to stop, to suspend, to hinder; -իմ *vn.* to retire, to recede, to withdraw, to fall back, to retreat; յետս -, to recoil, to recede, to go backwards; -ումն *s.* intercalation; solstice.

Նահապետ, աց *s.* patriarch, chief of a family; prince; -ական *a.* patriarchal; -ութ̃ի *s.* patriarchate; principality; family house.

Նահատակ, աց *s.* the first to begin a combat, champion, hero; martyr.

Նահատակաբար *ad.* valiantly, bravely; -դիր. դրաց *s.* agonotheta, athlotheta; -կից *s.* companion in arms or in martyrdom.

Նահատակեմ, եցի *va.* to cause to fight, * to set by the ears; to inflict martyrdom; -եցուցանեմ *va.* to exercise, to train, to discipline.

Նահատակիմ, եցայ *vn.* to take one's chance, to expose oneself, to attack, to be foremost in the battle, to charge the enemy; to fight, to struggle, to wrestle, to wage war; to make great efforts, to take much trouble, to persist; to exercise oneself, to practise; to devote oneself, to become a martyr; ի ճգնութե̃ վարս -, to lead an ascetic life.

Նահատակութ̃ի *s.* bravery, valour; great achievement, exploit, heroism; struggle, fight, wrestling, match; suffering, labour, tribulation, mortification; martyrdom.

Նահատակուհի *sf.* martyr.

Նաճա or -յ *s.* mat, rush-mat.

Նաճակ, **Նաչախ** *s.* hatchet; two-edged axe, bipennis; tomahawk.

Նամակ, աց *s.* letter, writing, missive, despatch, epistle; ցանկալի, երկայն, սիրալիր -, a pleasant, long or chatty, charming letter; երկտող -, a few lines, a note; քառէջեան -, a letter of four pages; թուղթ -ի, letter-paper; կշիռ -աց, letter-balance; տուն -աց, post-office; - կանխավճար, post-paid; - գրել. ը̄նունել, to write, to receive a letter; տալ զ-, to send a letter; փրկանաւորել զ-, to frank, to prepay, to pay the postage of a letter; թելադրել, ստորագրել, կնքել զ-, to dictate, to sign or subscribe, to seal a letter.

Նամակաբեր *a.* carrying a letter; *s.* S. Թղթաբեր; օր -ի, post-day; -գին *s.* postage, prepayment; postage stamp; -գիր. գրի *s.* letter-writer; - լինել. to write a letter; -գրական *a.* epistolary; -կալ *s.* letter-case; -կիր *s.* letter-carrier, postman, messenger, courier, post; -մատոյց *a.* letter-presenting; -նի, նւոյ *s. pl.* letters, epistles; - առնել, to write letters; -տուն *s.* post, post-office; գլխաւոր -տան, post-master; պաշտօնեայք -տան, post-office clerk; կնիք -տան, post-mark; մնալ ի -տան, poste restante, to be left at the post-office; -տուփ *s.* letter-box.

Նամէտ *a.* damp, moist, humid.

Նամիմ *vn.* to get humid, moist.

Նամփորտ *s.* S. **Նափորտ**; cloak, veil, women's long mantle.

Նայ,ից *a.* humid; *s.gr.* semi-vowel, liquid letters, լ, ղ, մ, ն, ր.

Նայադ, ի *s.* Naiad.

Նայապէս *ad.* as he or she, like him [or she.

Նայացուցանեմ *va.* to moisten, to wet; to water.

Նայեաց *s.* aspect, view, prospect, sight; situation, position.

Նայելիք *s.* eyes.

Նայեցած, ի, -ցողութիւն, -ցուած, ոյ *s.* look, sight, aspect; -ցուցանեմ *vn.* to cause to look at.

Նայիմ, եցայ *vn.* to look at, to cast the eyes on; to gaze at, to stare at; *fig.* to view, to gaze on, to behold; to mind, to take care.

Նանիր, նրոյ or րաց *a.* vain, useless, futile, frivolous; ի - *ad.* in vain, vainly, to no purpose, uselessly; ի - աշխատ լինել, to labour in vain.

Նանրագիր *a.* written in vain; -լեզու *a.* talking uselessly; speaking unjustly, slanderous, biting, satirical; -խոհութիւն *s.* vain thoughts; -խոհ. -խորհուրդ *a.* thinking of useless or chimerical things, building castles in the air; -կան S. **Նանիր**; -հաւատ *a.* incredulous, unbelieving; superstitious.

Նանրանամ, ացայ, **Նանրիմ**, եցայ *vn.* to become useless, to cease to be, to faint, dwindle or vanish away, to come to nothing; - ի խորհուրդս, to become wise in one's own eyes, conceited, infatuated.

Նանրասէր *a.* vain, vain-glorious; -սիրութ̃ի *s.* vanity, vain-glory.

Նանրացուցանեմ *va.* to render vain, [useless.

Նանրութիւն *s.* vanity, futility, frivolity; nothingness, inanity; injustice, iniquity, wrong.

Նաշ, ի *s.* bier, coffin; S. **Դագաղ**.

Նաշիհ, շհոյ *s.* finest quality of wheat flour.

Նապաստակ, աց *s.* hare, puss; *ast.* Lepus, the hare; արու -, buck-hare;

մատակ –, doe-hare; *ձագ –ի*, levret; *հետք –ի*, form, prick; *դեռնափոր* –, rabbit, cony; S. Ճագար; *–ի ականջ* s. *bot.* hare's ear; *–ի ոտն* s. *bot.* hare-foot, —wort.

Նաստիկ or **Նաստիփ** *s.* small cake, crumpet, bun.

Նատիր *s.* nadir; S. Ուղակէտ.

Նատր *s. chem.* sodium; *–ոն s.* soda, kali.

Նարգէս, *գիսի s. bot.* narcissus, daffodil.

***Նարգիլակ**, *ի s.* nutmeg.

Նարդեան *a.* of nard or spikenard; *– իւղ*, nard-oil, ointment of spikenard; *–դէս*, *դիսի s. bot.* giant-fennel, ferula; *–դոս*, *ի s. bot.* nard, spikenard, nardus Indica, (oil & perfume).

Նարինջ, *րնջի s.* orange; *քանդակ ի նարնջոյ*, conserve of oranges, marmalade; *շաքարապատ կեղեւ նարնջոյ*, candied orange-peel.

Նարկա, *յ s. zool.* torpedo, cramp-fish.

Նարկէս or *կիս* S. **Նարգէս**.

Նարմ *s.* quiet, stillness; *–աշարժ a.* gently undulating.

Նարնջագոյն *a.* orange-coloured; *–ծաղիկ s.* orange-blossom; *ջուր –ծաղկի*, orange-flower water; *–նոց s.* orange-walk; *–ջուր s.* orangeade; *–վաճառ*, *աց s.* orange-man; *– կին*, orange-woman; *–րան s.* orange-grove.

Նարնջենի *s.* orange-tree; *ջերմանոց –ջենեաց*, orange-conservatory.

Նարտ, *ից s.* backgammon; S. Տապլի; *խաղալ ի –*, to play at dice; *–ախտ* S. Տապեղ.

Նարօտ, *ուց s.* dye, tincture, hue; thread, ribbon or tissue of various colours; broidery or needle-work of divers colours; * cockade, rosette; *– կենաց*, thread of life.

Նարօտաներկ, *աց s.* dyer; *–ութիւն s.* dyeing.

Նաւ, *ուց* or *աց s.* ship, vessel, boat; S. **Նաւակ** & **Լաստ**; water-vessel, pitcher, urn, jar, earthen-vessel; *– քարեղէն*, basin or vase of stone; S. **Քարենաւ**; *– պատերազմիկ*, three benched galley, trireme; *– – մեծ*, line of battle-ship, man of war; *– հրձիգ*, fire-ship; *– հինից*, privateer, corsair; *– զօրագլխական*, admiral's ship, flag-ship; *– զրահեալ*, armoured ship, armour-plated ship; *– վաճառական*, merchant-man, —-ship, trading-vessel; *– շոգեմուղ*, steam-ship, steamer; *– առագաստաւոր*, sailing-boat; *– թեւճակաւոր*, row-boat; *գումարտակ –ուց*, fleet; *վարձ –ու*, freight; *վարձել զ–*, to freight or charter a vessel; *կպրով օծանել* or *կպրաձիւթել զ–*, to tar, to careen, to caulk a ship; *կպրաձիւթող –ուց*, caulker; *մտանել* or *ելանել*, *երթալ ի –*, to embark, to go on shipboard, to go on board a ship, to take a shipping; *ելանել ի –է*, to land, to go a-shore, to disembark; *դնել ի –*, to embark, to ship, to export; *հանել ի –է*, to disembark, to put a-shore, to unload goods; S. **Ջարկանիմ**, **Թիւրեմ**, **Թումբ**, **Խրիմ**, **Հանդրուան**, &c.

Նաւաբազմութիւն *s.* fleet; *–բաշխ s.* lake; *–բեկ a.* shipwrecked; *– նաւաստի*, *ծովագնացք*, the shipwrecked mariners or people, the survivors from a wreck; *– լինել*, to be shipwrecked, cast away; *–բեկիմ vn.* to run aground, to strand, to founder, to be lost; *–բեկութի s.* shipwreck, wreck; stranding; *–գնաց* or *–ցիկ a.* sea-faring, navigating, travelling by sea; *s.* navigator; voyager; *– լինել*, to navigate; to go by sea, to voyage; *–ք s.* navigable waters; *–գնացութի s.* navigation; voyaging; sea-faring; *–գործ*, *աց s.* ship-builder, naval constructor; *–գործուի s.* ship-building, naval construction; *կայարան*, *աւազան –թի*, navy-yard; dock, wet-dock, dock-yard.

Նաւազ, *աց* S. **Նաւաստ**.

Նաւալիւղ *լինիմ vn.* to navigate; *–խիճ s.* ballast; *–խումբ s.* squadron, navy; *հրամանատար –խմբի*, commodore.

Նաւակ, *աց s.* boat, bark, barge; *– գետոյ*, wherry, sculler; *– վենետկեան*, gondola; *տաճիկ –*, caic; *անգղիական –*, outrigger; *– նաւու*, yawl, skiff, shaloop; *– տափարակ*, ferry-boat, lighter; *վարձ*, *սակ –ի*, tariff, rate.

Նաւակալ, *աց s.* remora, echineis, suck-fish, achandes.

Շնորհակալ *a.* grateful, obliged, beholden; *- լինել, -եմ, եցի* or *-իմ, եցայ vn.* to thank, to give or return thanks, to acknowledge; *-իք, եաց* S. Շնորհակալութիւն; *-ու* S. Շնորհակալ; *s.* pleasure; *- մտօք,* thankfully, gratefully; *-ութիւն s.* thanks, thanksgiving, gratitude, thankfulness; *-կան a.* donative, gratuitous; *-կարգութիւն s.* constitution by divine grace; *-կորոյս, բուսի a.* graceless, unthankful, ungrateful; *-հատոյց լինիմ vn.* to thank; to recompense; *-ձիր a.* granting gratuitously; given gratis; *-նորոգ a.* renewed through grace; *-շուք a.* graceful, handsome, charming, genteel, pretty, nice; *-պատար a.* full of grace; *-պատում a.* narrated gracefully; *-պարգեւ* S. Շնորհատու; *-պարտ, ից a.* much obliged, very grateful, mindful of benefits received; *- գոհութիւն,* gratefulness, gratitude, thankfulness; *- գտանիլ ումեք, - զանձն դաւանել առ ոք,* to be indebted for, to owe, to be under obligations, to be beholden to; *- կացուցանել զոք,* to oblige a person, to obtain a right to his gratitude; *- եմ բիւրուց խնամոցդ, ով եղբայր,* I am grateful to you for all your care, my brother; *-վաճառ a. s.* simoniac; *-վաճառութիւն s.* simony; *-տու a.* gracious, bestowing favours; *-տուութիւն* or *տրութիւն s.* gift of grace; donation, favour, liberality; *-տուր a.* granting or granted gratis; *-ւոր a.* graceful; *-ւորեմ, եցի va.* to grant favours, to endue or adorn with favours; to congratulate, to felicitate, to wish joy, to pay compliments; *-ւորութիւն s.* congratulation, felicitation.

Շնորհեմ, եցի *va.* to give as a present or favour, to make a present of, to grant, to accord, to concede, to gratify; to grant pardon, to pardon, to forgive, to remit; S. Շնորհուկս առնել; *չ-,* to refuse, not to grant, to withhold, to deny; *դու ինձ շնորհեցեր կեանս,* I owe you my life; *-իմ vn.* to be granted, accorded; *ի բարութէ իմմէ շնորհին կեանք ձեր,* you owe your life to my forbearance.

Շնորհութիւն *s.* thanks.

Շնորհուկք *s.* flattery, compliance, adulation; *-կս* or *առ -կս ad.* flatteringly, by flattery or adulation; *-կս առնել, խօսել, ասել,* to do or speak according to a person's known proclivities, to seek to please, to shew a particular regard for, to favour, to flatter, to adulate, to wheedle.

Շնորոր *s.* shoveller; ganza.

Շնութիւն *s.* canine nature: adultery, fornication; *fig.* idolatry; S. Ըմբռնիմ.

Շնչաբեր *a.* respiratory; *- երակ,* artery; *-իմ, եցայ vn.* to begin to breathe, to fetch breath, to respire; to become animated; *-ութիւն s.* respiration; animation; *-բոյս a.* vegetable; *s.* S. Կենդանաբոյս; *-խառն a.* between the teeth; muttering; *ad.* murmuringly; *-ծնութիւն s.* creation of the soul, animation; *-կալ անօթ s.* lung; *-կան a.* respiratory; S. Շնչաւոր; *-կապ a.* out of breath, faint, senseless, exanimate, lifeless; S. Շնչարգել; *-կեաց a.* having the breath of life, breathing; *-կիր* S. Շնչաւոր; *-կից a.* breathing together; *fig.* of the same mind or feeling, unanimous; *-հան, աց, -մուտ s.* air-hole, vent-hole, draft-hole; *-հեղձոյց a.* suffocating, stifling; *-նամ, ացայ vn.* to be animated, to live, to breathe, to respire.

Շնչառ *s. chem.* sucking-tube; *-ու a.* breathing; *-ութիւն s.* respiration.

Շնչասպառ *a.* mortal; *a. ad.* quite out of breath, panting for breath; *- առնել,* to put out of breath; *- լինել,* to put oneself or to be out of breath, to be panting or gasping; *- ընթանալ,* to run oneself out of breath; *-ութի s.* being out of breath, breathlessness.

Շնչարգել *a.* asthmatic; *-ութիւն s.* asthma, shortness of breath.

Շնչացուցանեմ *va.* to animate, to give a soul to, to cause to breathe, to vivify.

Շնչաւոր *a.* respiring, breathing, living, animal; *fig.* carnal, sensual, gross: spiritual; *- գործիք,* wind instruments; *-եմ* S. Շնչացուցանեմ; *-ութիւն s.* act of breathing, respiration, animation, vitality; sensuality.

Շնչափող *s.* wind-pipe, trachea, throttle; lung.

Շնչբորակ *s.* saltpetre.

Շնչելի *a.* respirable.

Շնչելոյզ, ուզի *s.* pneumatic; *- մեքենայ, -* machine, air-pump.

Շնչեմ, եցի *va.* to breathe, to respire, to puff; to blow; to inspire; *vn.* to exhale, to emit; – *զօդ.* to breathe, to take breath, to respire; *զհուր* –, to send forth or emit fire, to break into a volcanic eruption; – *չարախօսութն.* to whisper in the ears, to accuse in secret; *շնչեսցեն հողմք*, let the winds blow; let the storm rage; *շնչէ հողմն ուժգին*, the wind blows hard; *շնչեաց հողմ աջողակ*, a fair or favourable wind arose.

Շնչերակ, աց *s.* artery; – *թոքային*, pulmonary –; *-ական, -ային a.* arterial.

Շնչեցուցանեմ *va.* to cause to blow.

Շնչիւն *s.* blowing, whistling; hissing, hiss. [*թիւն s.* respiration.

Շնչող *a.* aspirating, sucking up; *-ու-*

Շնչորսական *a.* cavillous, captious, sophistical.

Շնչուկ *s.* the necessary livelihood.

Շնչումն *s.* breath, puff, wind; whistling; respiration, breathing; inspiration.

Շնջրի *s. zool.* otter; – *ծովային*, sea-otter, kind of seal; S. *Վիշապաձուկն.*

Շնւի or **Շնուի** *s. pl.* dogs.

Շնփին *s.* dog's-dung.

Շնքաղց *s. med.* cynorexy, bulimy, canine hunger or appetite.

Շնքիթ *s.* dog-muzzle.

***Շշակ** *s.* yearling sheep.

Շշի *s.* storax; S. *Շեր.*

Շշնջեմ, եցի *vn.* to whisper, to speak low, to murmur; to hum, to mutter, to grumble; *-են ականջք իմ*, my ears ring or tingle.

Շշնջիւն, -ջումն *s.* whispering, whisper, murmur; noise, rumour; *աղօտ* –, a hollow or rumbling noise; *fig.* a secret rumour.

Շշնջող *s.* whisperer.

Շշուկ *s.* noise, racket, uproar, clatter, hubbub, tumult.

Շշունջ S. *Շշնջիւն.*

Շոգ, ոյ *s.* solar heat, hot vapour.

Շոգանամ, ացայ *vn.* to evaporate, to vaporize.

Շոգեակ *s.* light vapour, a mist.

Շոգեգործի *s.* locomotive engine; *-լից a.* vapourous; *-կառք s.* railway-carriage, --truck; S. *Երթամ, Երկաթուղի*; *-նաւ s.* steam vessel, steamboat, steamer; – *թղթաբեր*, steam-packet; – *պտուտակաւոր*, screw-ship; *պատերազմիկ* –, war-steamer, man-of-war steamer; S. *Նաւ.*

Շոգի, գւոյ *s.* vapour, exhalation; breath; S. *Ընդունարան.*

Շոգիալից *a.* vapourous; *-մէգ a.* vapoury, misty, foggy, hazy; *-ցումն s.* vaporization, evaporation; *-ցուցանեմ va.* to vaporize.

Շոգմոգ, աց *s.* tale-bearer, tell-tale, backbiter, informer, slanderer; *a.* tale-bearing, slanderous; *-եմ vn.* to tell tales, to spread malicious or false reports, to slander, to speak ill of; to flatter; *-ութն s.* evil or malicious reports, delation, story, tale, report, backbiting, slander, scandal; flattery.

Շոգոլի *s.* vapour, exhalation.

Շոհ *s.* starch; *-եմ, եցի va.* to starch, to stiffen with starch.

Շող, ոց or *ից s.* ray, flash of light, beam; *-ս արձակել*, to emit or throw out rays, to beam.

Շողազարդ S. *Նշուլազարդ.*

Շողակաթ, ի *s.* stream of light, effusion of light; splendour, brightness, glory; cathedral of Etchmiadzin, & the feast of its dedication.

Շողամ, ացայ or *ացի vn.* to shoot or throw out rays, to beam, to glitter, to shine, to twinkle, to scintillate, to blaze, to flame, to flash, to glitter, to gleam, to sparkle.

Շողանամ *vn.* to get warm, to become heated, to burn.

Շողապէս *ad.* like a flash of light, beamingly, radiantly, brilliantly.

Շողացումն *s.* irradiation.

Շողացուցանեմ *va.* to cause to shine or to glitter, to give brightness to, to brighten; to warm, to inflame, to render incandescent; to brandish, to rotate.

Շողաւոր *a.* beamy, radiant, shining, effulgent, luminous, brilliant, sparkling, splendid.

Շողգամ S. *Շաղգամ.*

Շողէջ *s.* radiance, effulgence.

Շողիմ S. *Շողամ.*

Շողիւն *s.* splendour, brightness, blaze, flash; heat, red heat.

Շողիք S. *Լորձն, -ձունք.*

Շողշողենի, Շողշողուն S. *Շողաւոր.*

Շողշողիմ, եցայ S. *Շողամ.*

Շողշողումն *s. ast.* scintillation.

Շողոմ, աց *s.* adulator; *s.* flattery; *-ս առնել*, to flatter, to toady, to blandish.

Շողոմաբարոյ, -սէր, -բար *a.* flattering, adulating, cajoling, wheedling; *s.* adulator, flatterer, cajoler.

Շողոմել, եցի *va.* to flatter, to palaver, to cajole, to wheedle, to coax; to caress, to fondle.

Շողոմութիւն *s.* adulation, flattery, palaver, cajoling, coaxing, caresses, fondling, wheedling.

Շողոքորթ, &c. S. *Շողոմարար*, &c.

Շոճ, ի, Շոճի, ճւոյ *s.* pine, pine-tree, fir-tree; *պիստակ շոճւոյ*, pine-cone; *-ք, -իք* *s.* pine-grove.

Շոմին *s.* spinage; S. *Ծմել*.

Շոյտ *a.* quick, light, prompt, active, swift, nimble, agile, brisk, alert; *ad.* quickly, promptly, speedily, quick, fast.

Շոշականք *s.* show, ostentation, pompous display, parade; *-նս առնել* or *-կել, եցի* *vn.* to be given up to ostentation.

Շոշիմ *vn.* to putrefy, to rot.

Շոպ *s.* parching by the sun.

**Շոպագ* *s.* string of comfits.

Շոպել, Շոպշոպել, եցի *va.* to snatch away, to pluck off, to take away, to ravish, to carry off.

Շոր, ից *s.* cloth; vest, dress.

Շորեթափիմ *vn.* to be undressed.

Շորթել, եցի *va.* to assume wrongfully, to usurp, to appropriate, to take forcible possession of, to ravish, to ascribe or impute to oneself.

Շորիկ *a.* giddy-pated, wandering.

**Շորտել* S. *Շրջշրջել զթուղթս*.

**Շուագ* *s.* fore-court.

Շուայտ, -աբարոյ *a.* intemperate, gluttonous, drunken, crapulous; debauched, dissolute; *-անամ* S. *Շուայտիմ*; *-անք* S. *Շուայտութիւն*; *-ասէր լինիմ* *vn.* to take pleasure in crapulence or debauchery; *-իմ, եցայ* *vn.* to give oneself up to debauchery, to eat & drink to excess, to guzzle, to gormandize, to live in gross debauchery; *-ոտ* S. *Շուայտ*; *-ութիւն* *s.* low debauchery, guttling, intemperance, surfeit, excess, orgies, drunken revelry.

Շուառն, առունք S. *Նիզակ*.

Շուար, -ումն *s.* consternation, dismay, surprise, amazement, giddiness; *-եցուցանեմ* *va.* to stun, to astonish, to surprize; to baffle, to puzzle, to bewilder, to make giddy or dizzy; *-իմ, եցայ* *vn.* to be stunned, astonished, surprized, baffled or puzzled, embarrassed, bewildered, not to know what do or what way to turn.

Շութափ *a.* nimble, light-footed, swift, quick, agile, lithe; *-եմ* *vn.* to be hurried, to hasten, to make haste; *-ութի* *s.* agility, nimbleness, quickness, celerity; hurry, haste.

Շուկամէջ *s.* the middle of a market-place.

Շուկայ, ից *s.* market, bazaar, market-place.

Շուկատ *a.* fraudful, low, base, ignoble.

**Շուղայ* *s.* skein of silk, &c.

Շումրայ, ից *s.* wild fennel.

Շուն, շանց *s.* dog; *fig.* adulterer or adulteress; *ast.* Canis Major; S. *Շնիկ*; *մատակ* –, bitch; – *անպիտան*, cur; – *որսորդ*, hound, terrier, ranger; *որսական* – *ոտնակառոյց*, setter, pointer, setting-dog; – *մալեղ*, *գանգրամազ* or *լողակ*, water-dog; – *մեծականջ*, long-eared dog; – *տնպահ*, house-dog; – *պահապան*, watch-dog; *պահապան* – *հովուաց*, mastiff dog; *ցլամարտ* –, bull-dog; *շան լակոտիկ*, fisting cur; – *մատնիչ*, *խեռ*, *խածանող*, *կատաղի*, a treacherous, snarling, biting, mad dog; *խշտի* or *խղիկ շան*, dog-hole, dog-kennel; *կերակուր շան*, dog's-meat, dog-porridge; *ոջիլ շան*, dog-louse; *վազք շան*, dog-trot; *ցնկնիլ շան*, to whelp, to litter, to bring forth; *տալ կամ արկանել շանց*, to give or to send to the dogs; *կերակուր լինել շանց*, to go to the dogs; – *հաչէ*, *ոռնայ*, *կաղկանձէ*, *ղօղանջէ*, *կռնչէ* or *մրմռայ*, the dog barks, howls, whines, yelps, growls; *խոնջեալ իբրեւ զ*–, dog-weary, tired as a dog; * – *հաչան՝ չէ խածան*, a barking dog seldom bites; S. *Լակոտ*, *Շանա*... &c. *Շնա*..., &c.

Շունչ, շնչոյ *s.* breath, puff; wind, breeze; respiration; spirit, soul, life; *միով շնչով* *ad.* unanimously, with one accord; – *կլանել*, *առնուլ*, to breathe, to take breath, to recover one's breath, to respire; to repose, to rest, to take a little breath or respite; – *առնուլ լիաբերան*, to breathe freely; to draw a long breath; *հատանիլ շնչոյ*, to lose breath; *ի* – *վախճանին հասանել*, to be near to one's last breath; *ի մի* – *կլանել*, to swallow in one gulp, at a draught; *ամ* – *կենդանի*, all that has life; every living soul; *ց*– *վախճանին*, to one's last gasp; *մինչեւ ի վերջին* –*ն*, to the last moment; *ի յետին* –*ն հասեալ է*, he is at his last breath, in the pangs of death; *ցյետին* – *կենաց իմոց*, to the last moment of my life; – *վախճանին չեւ էր հասեալ*, he had not yet yielded his last breath; ը̄ վախճանել շնչոյն, while expiring; ի — հողմոց գեղածփեալ, at the mercy of the winds; S. Ընդ աղօտ, ծահահոտ.

Շուշան, այ *s.* lily; *pn.* Susan.

Շուշանաբեր *a.* bearing or producing lilies; -բոյծ *a.* feeding among lilies; -գոյն *a.* lily-coloured; -գործ, -զարդ *a.* worked or adorned with lilies; -հոտ *a.* lily-scented; -ձեւ *a.* lily-shaped; -նամ, ացայ *vn.* to become as a lily; -ցեալ *a.* lilied; -փայլ *a.* bright, fair or candid as a lily; adorned with lilies.

Շուշեմ, եցի *vn.* to be neglectful, to lose or waste one's time, to loiter.

Շուշմայ, ից *s.* sesame.

Շուշմիր *s.* cardamom.

Շուշտ *a.* doubtful, mistrustful.

Շուշտակ, այ *s.* handkerchief; hair-band; * — արեղայ or վարդապետ, a widowed priest.

Շուշփայ, ից *s.* fine linen; altar napkin, corporal.

*Շուռտ S. Ճիւաղ.

*Շուու *s. mus.* pipe, reed, willow-reed.

Շուտ *a. ad.* S. Շոյտ; *s. med.* pimple, pustule.

Շուտաբան, -խօս *a.* glib, fluent of speech; -ժիր *a.* nimble, diligent, active, ready; -հաս *a.* early, premature; -նամ S. Երագեմ *vn.*; -սաղաք S. Դիւրագայթ; -փոյթ *a.* quick, swift, hurried, precipituous; -փութութիւն S. Շութափուն.

Շուտով S. Փութով.

Շուտութիւն S. Արագութիւն.

Շուրթն, շրթան. շրթունք. թանց *s.* lip; edge, orifice; *fig.* tongue, word, mouth; *med.* lip; վերին —, upper-lip; ստորին —, under-lip; նուրբ, ուռոյց, թաւ, կարմրերփեան —, small or thin, swelled or blubber, thick, rosy lips; ունել լայնշի, շրջեալ, բոլորածիր շըրթունս, to have flat, turned up, well-formed lips; — գետոյ, river-side.

Շուրջ *ad. pr.* about, round, around, all round; roundabout, in the neighbourhood; from all sides, on every side; *s.* turn, round; ի —ն, around; — տեսանելիք, amphitheatre, — boxes; — զեկեղեցեաւ, round the church; — or ի — ածել, to lead to, to conduct around, to walk; — or ի — գալ. — անցանել, to take a walk, to make a tour, to walk, to promenade; — հայել, to look around; — առնուլ, to turn; — արկանել or պատել, պաշարել, to surround, to encompass, to encircle, to invest, to hem in, to beset; — բնակել, to dwell near, to be neighbouring; — տալ, to overturn, to upset, to overthrow; — տալ անձինն, to turn from side to side.

Շուրջանակաւ *a.* round, circular; *ad.* in a circle, circularly, round about; ելանելի —, winding-stairs, spiral-staircase; -կի *ad.* S. Շուրջ; round about; in a circle, circularly; *a.* circumjacent; *gr.* circumflex.

Շուրջառ, այ *s.* chasuble.

Շուրջգալի *a.* turning, winding; -գունեմ *va.* to colour, dye or stain all round.

Շուրջընթացք *s.* turn, round.

Շուփ *s.* suspicion; S. Շփումն.

Շուփայ, ից collyrium; eye-salve.

Շուք, շքոյ *s.* shadow, shade; veil, head-cover; honour, respect, consideration; splendour, brilliancy, lustre, glory, magnificence; pomp, parade; *fig.* protection; — եւ ձեւք, ceremonial, etiquette; — դնել, to honour, to pay honour, to respect, to consider, to compliment, to pay court to, to court; զամ — եւ զպատիւ դնել ումեք, to give all the respect & honour due; ի շքի եւ ի պատուի ունել, to hold in respect; զանձն ծանր եւ ի շքի ունել, to be grave or serious; — առնուլ, to be honoured or glorified; շքով *ad.* with honour, gloriously, magnificently, pompously.

Շչեմ, եցի *vn.* to hiss, to whistle; *fig.* to hoot.

Շչիւն, Շչումն *s.* hiss, hissing, whistling.

Շչող *a.* hissing; *s.* hisser.

Շպար, աց *s.* paint, rouge; plaster; -անկար *a.* painted, rouged; pretty; -անք S. Շպար; -ար *s.* painter; plasterer; -իմ, եցայ *vn.* to rouge, to paint the face with rouge, to fard.

Շպեմ *va.* to alum, to steep in alum-water.

Շպետ, աց *s.* shepherd; S. Հովիւ.

Շպլեղ or Շապլեղ *s.* alum.

Շռայլ, ից *s.* spendthrift; *a.* prodigal, lavish, wasteful, extravagant, profuse; licentious, lewd, dissolute; -ք *s.* licentiousness, lewdness, debauch; -ական *a.* intemperate, impudic; -ամիտ *a.* lewd-minded, lustful, inclined to debauchery; -իմ, եցայ *vn.* to be prodigal, to live lavishly, to squander, to waste, to dissipate, to lavish, to abandon oneself to debauchery, to lead a dissolute life; -ութի *s.* prodigality, profusion, luxe, waste, dissipation; debauchery, disorder, extravagance, luxury, excess.

Շռատ S. Միզադրաւ.

Շռէղ s. *bot.* asphodel, king's-spear.

Շռինդ s. noise, tumult, rumour, clamour, uproar, row; public rumour, report; ի – համբաւոյն, at the news or report of; -ն աղաղակի նց, their cries, shouts; ի – ահեղ պատերազմի, at the terrible news of war; at the dreadful preparations for war.

Շռինչ s. sound, flourish.

Շռնիճ or իտ s. basin, wash-hand basin.

Շռնչան, ան, ունք s. humming-top, whipping-top, peg-top.

Շռնչապահ s. head-stall; frontlet.

Շտամբաձայնութիւն s. *mus.* andantino.

Շռնօթ, աց s. wooden-pipe, water-conduit, gutter.

Շտապ, ի, աւ or իւ s. diligence, haste, hurry, promptitude, urgency; *a.* urgent, pressing; – տագնապի, too great haste, hurry, great urgency, hasty eagerness, precipitation; constraint, imperious or urgent obligation; pain, anguish, affliction, trouble; –, – –, առ –, -ով, -աւ *ad.* hastily, in haste, expeditiously, speedily, diligently; – տագնապաւ, with all possible speed or despatch, in a hurry, precipitately, post-haste; առանց -ոյ, without hurry; – տագնապի հասուցանել, ի վերայ դնել or ի վերայ հասուցանել, to urge, to press, to force, to compel, to oblige, to constrain; to grieve, to pain, to agonize, to harass; – քան զասելն, no sooner said than done; -անամ S. Շտապիմ; -եմ, եցի, -եցուցանեմ *va.* to hasten, to press, to urge, to hurry, to precipitate; -իմ, եցայ *vn.* to be quick, to hasten, to hurry, to precipitate; -ութի, -ումն S. Շտապ s.

Շտեմարան s. magazine, storehouse; butler's pantry; larder, buttery, pantry, store-room, cellar; secret chamber; treasury; bottom; *fig.* heart, the secrets of the heart, the affections, &c.; – ցորենոյ, granary, loft; – գինւոյ, wine-cellar, wine-vault; – փայտից, wood-house.

Շտեմարանալից *a.* filling granaries & magazines; stored in a granary; -պահ, -պետ s. warehouse-keeper, store-keeper; butler; cellarman; *fig.* the Supreme Master; -պետութիւն s. office of a store-keeper.

Շտեմարանեմ, եցի *va.* to warehouse, to store up, to house, to cellar; to treasure up; to lay or put by, to preserve.

*Շտիկ s. swelling, tumour.

Շտոգանեմ S. Շփոթեմ.

*Շրատ or Շռատ s. whey, serum.

Շրէղ, -ժ or -շ s. S. Շռէղ; glue, gluten.

Շրթնական *a.* labial.

Շրթնաշղթայ առասան s. running halter.

Շրթնատ s. lipless.

Շրթնաւոր *a.* lipped.

Շրշիւն s. murmur, rustling of leaves; ի – տերեւոց զարհուրի, he trembles at the fall of a leaf.

Շրուանդ s. grape-stalk.

Շրուշակ or Շրօշակ, աց s. nose-band; twitch; bridle; – or -շանակ s. nape.

Շրջաբան *a.* speaking periphrastically; -ակ *a.* encamped all round; -եմ, եցի *va.* to periphrase, to speak periphrastically; -ութի s. periphrase, circumlocution, roundabout way of expressing oneself; -բեկութի s. circumflexion of voice, uttering or pronouncing with circumflex accent; -բեր *a.* orbicular, spherical, round; -ք s. whirling or turning round; -բերական *a. s.* encyclical, circular; *a.* periodical; *fig.* vagabond; -բերիմ, եցայ *vn.* to turn round, to rotate, to move circularly; to revolve, to walk over, to take a round; -բերութի s. turn, circumvolution, periphery; *ast.* revolution; – աստեղական, զարտուղական, զուգընթացական, sideral, anomalistical, synodical revolution; -բեւեռային *a.* circumpolar; -բնակ, աց *a.* living in the neighbourhood, neighbouring, adjacent, circumjacent; -ք s. *geog.* periœcii, periœcians; -բնակութի s. circuit, territory; neighbouring towns or districts; -գայ, ից *a.* wandering, strolling, itinerant, prowling, vagabond; *s.* turn, circumvolution; circumference, periphery; հազար ամաց -ս անցուցանել զինքեամբ, to live for a thousand years; -գայական *a.* periodical, circular; -գայիմ, եցայ *vn.* to take a turn, a walk, to roam; to wander over, to stroll, to prowl, to turn round, to revolve; to go round, to circulate; -գայութի s. turn, walk, circulation; turn, rotation, revolution; -գայուն, -գնայ *a.* roaming, wandering; -գնայութիւն

s. going here & there, wandering; -գրական a. circumscriptive; -գրեմ va. to circumscribe; -դարձ a. circumvolving, moving around; -դրութիւն s. surrounding, enclosure; -զգեստ s. gown, dress; կէս -, petticoat; ներքին - -, under-petticoat; -խոյզ առնեմ va. to investigate; -կայ, ից a. in the neighbourhood, neighbouring, adjacent; -ք s. the environs, the country roundabout, neighbourhood; -կան a. turning, changing, shifting; s. change; -կտուր առնեմ va. to cut or trench all round; to prune or lop round; -հայեաց a. circumspect, cautious, discreet, considerate, prudent; - լինել, to look around, to observe, to explore, to spy out; -հայեցութիւն s. observation, attention, exploring, spying out; circumspection, caution, prudence, consideration, discretion; -հմայ s. gyromancian; -հմայութիւն s. gyromancy; -հնչեմ va. to spread every where.

Շրջան, այ s. turn, gyre, turning, circuit, revolution, circumvolution, circulation, conversion; course, cycle, period, circle, round; turning, wheeling, winding; sinuosity; change, vicissitude; - մեծ, period or cycle of five hundred & thirty-two years; -ք ջրուց, whirlpool, vortex; - զօրաց, evolution; - առնուլ, to turn, to make or take a turn; to turn or whirl round & round; to circulate, to revolve, to move; to spin round upon one leg. [or gyration.

Շրջանաժամ s. periodic revolution

Շրջանակ, այ s. circle, hoop; border, contour, outline, circumference; frame, frame-work, sash; enchasing; turn, circuit, ring; *ast.* cycle; -ք երկնից, the spheres; - կենդանականն, the zodiac; բեւեռային -, polar circle; -ք ապարանից, gallery, terrace, promenade; սիւնք -օք or -աւ, peristyle; -աւ *ad.* in a circle, in a ring, circularly; -ագործ, աց s. framer, borderer; -աւոր a. *ast.* armillary; -եալ a. furnished with a circle or frame; round, circular; -եմ, եցի va. to turn round, to revolve, to move in a circle; to frame, to border; -իմ vn. to revolve, to rotate; -ութիւն, -ումն s. roundness; rotation, circulation; -ումն s. framing.

Շրջանամակ s. a. encyclic, circular; -նաւոր a. periodic; -նաւորութիւն s. circumnavigation; -նիւ s. circular balance; -շամփուր s. turn-jack, turnspit; -չափութիւն, -չափումն s. circuit, ambit, circumference; -պահ, ից s. lifeguardsman; -պատ a. surrounding, ambient; s. turn, round, circumference, compass, outline, circuit, fence, wall, enclosure; *geom.* periphery, circumference; -պատեմ va. to surround, to compass, to encircle; to envelop; - or իմ vn. to take a turn; to turn round, to whirl; to be surrounded, enclosed; -պատութիւն s. circuit; -պատումն s. rotation; *fig.* circumlocution, ambages; -պարիսպ s. fortification, enclosure; -ռական a. circulating; - գլուխ, - capital; -ռիկ քանոն s. *geom.* alidade; -ռութիւն s. turn, gyre; -ստուերք s. *pl.* periscii; -սփիւռ a. extended roundabout, spread around; s. *phys.* medium; -տեսարան s. amphitheatre; -փակ a. enclosed all round; surrounded, invested; s. enclosure, fence, close; -փակեմ va. to shut up all round, to hem round or in, to enclose, to encircle, to surround, to beset; -փայլեմ va. to shine on all round, to cover or surround with light.

Շրջեմ, եցի va. to overturn, to upset, to turn over, to capsize, to throw down; to change, to transmute, to convert; *fig.* to turn aside, to pervert, to subvert; ի բաց -, to avert, to turn away, to divert; - զմիտս, ի մտաց, ի խորհրդոց, to deter, to dissuade, to dehort, to discouncil; ի փախուստ - զզօրս, to rout, to put to flight, to chase, to pursue hotly; - զգոյն, to discolour; - զբանն, to retract, to recant; S. Միտք.

Շրջեցուցանեմ va. to walk, to take or lead about; to turn, to twirl, to wind.

Շրջիմ, եցայ vn. to take a walk, to walk, to march, to go; to turn, to be changed, converted, transmuted; to fall back, to be upset; - ժամանակաց, changes, mutations or vicissitudes of time; - ի մտաց, ի խորհրդոց, to alter or change one's mind, to change sides; շրջեցաւ գոյն երեսաց նր, his countenance altered; S. Օր. [vagrant; S. Հուր.

Շրջմոլիկ a. straying, wandering,

Շրջշրջեմ, եցի va. to turn or whirl round & round; to change; to walk; S. Թուղթ; -իմ vn. to turn round, to turn, to move about; to walk; - աչաց, to roll one's eyes wildly; - *յանկողնի*, to be uneasy, to tumble & toss in one's bed, to move oneself restlessly from side to side.

Շրջշրջումն *s.* turning, wheeling; turn, change, vicissitude.

Շրջշրջուն *a.* turning in every direction or way, versatile.

Շրջող *s.* walker; vagabond.

Շրջուած, ոց *s.* change, mutation; turn, circuit.

Շրջումն *s.* act of walking, walk, going & coming; turn; change; overturning, upsetting.

Շրջուն *a.* overturned, upset.

Շրտնում, տեայ, տուցեալ *vn.* to take fright, to be startled, to start with fear; to take umbrage at, to be scared: to be dazzled.

Շրտումն *s.* umbrage, start; digression, alienation: dazzling.

Շրտուցանեմ, ցի *va.* to scare, to startle, to start: to dazzle, to hallucinate.

Շփանամ S. *Խենեշանամ.*

Շփաչափ *s. phys.* tribometer.

Շփացութիւն *s.* S. *Խենեշութիւն*; taking away, ravishing.

Շփեմ, եցի *va.* to rub, to scour: *fig.* to impute, to ascribe, to attribute, to accuse of, to charge with; - *ը̄ ափ*, to rub out in the hand.

Շփշփեմ, եցի *va.* to rub hard or often, to bruise, to clash.

Շփոթ, ից *s.* confusion, broil, embarrassment, trouble, disorder, tumult, uproar; *a.* confused, mixed, confounded, troubled, disordered, out of order; deranged, complicated; indistinct; *-ս յուզել, յարուցանել,* to excite confusion, trouble, sedition; *աղմուկ -ի յարուցանել,* to make a clatter, racket or uproar, to kick up a row; *յայն աղմուկ -ի*, in that disorder; S. *Աղմուկ.*

Շփոթաբանութիւն *s.* confused discourse; *-բար* *ad.* confusedly, indistinctly, topsy turvy.

Շփոթական S. *Շփոթ* *a.*

Շփոթանք S. *Շփոթումն.*

Շփոթեմ, եցի *va.* to confound, to mix, to jumble, to embroil, to complicate; to trouble, to put in disorder, to disorder, to derange, to harass, to embarrass, to bewilder; *-իմ* *vn.* to be confounded, in disorder, to become intricate, complicated; to become confused, troubled, to be overthrown, upset; *-եալ ես*, you look troubled.

Շփոթութիւն, -ումն S. *Շփոթ* *s.*

Շփող *s.* rubber.

Շփումն *s.* friction, rubbing.

Շքադիր, դրաց *a.* honouring, paying honour; *-ք* *s.* courtiers, attendants.

Շքալից *a.* honourable, glorious.

Շքամ, ացայ *vn.* to lord, to act the great man, to pique or plume oneself, to glory, to vaunt in.

Շքայլեմ, եցի *va.* to hinder, to stop, to prevent.

Շքաշոր *a.* dried in the shade.

Շքեղ, աց *a.* glorious, magnificent, rich, sumptuous, pompous, splendid, superb, majestic; honourable, august, illustrious, respectful, sublime; elegant, fair, handsome, genteel, agreeable.

Շքեղաբար *ad.* honourably, magnificently, splendidly, pompously, superbly, richly, nobly, majestically; *-գեղ* *a.* of great beauty; *-գոյն* *ad.* pompously, with great parade; *-զարդ* *a.* highly ornamented, richly adorned, magnificently dressed, splendid, magnificent, superb; *-զարդեմ, եցի* *va.* to adorn richly, to decorate, to embellish; *-նամ, ացայ* *vn.* to become pretty, beautiful, glorious, to be adorned; *-շուք* *a.* very beautiful, august, most superb; S. *Շքեղազարդ*; *-պանծ* *a.* majestic, illustrious, dignified; *-ցուցանեմ* *va.* to decorate, to adorn, to beautify, to embellish; to honour, to glorify; *-ւոր* S. *Շքեղ.*

Շքեղութիւն *s.* splendour, magnificence, pomp, sumptuousness, majesty; glory, honour, celebrity; beauty, elegance, comeliness: solemnity.

Շքթակ S. *Նարկա.*

Շքթանք *s.* impudence, barefacedness.

Շքթեմ, եցի, -եցուցանեմ *va.* to agitate, to stir, to dabble, to paddle.

Շքթիմ, եցայ *vn.* to be brazen-faced, to lose every sense of shame, to behave shamelessly, impudently.

Շքողիմ *vn.* to starve, to die with hunger.

Շօթ, ից *s.* light cake, « brioche ».

Շօճ S. *Շոճի, Սոճի.*

Շօշանք S. *Շաղփաղփութիւն.*

Շօշափական S. *Շօշափողական*; *-ն* *s.* sense of feeling.

Շօշափելի *a.* tangible, palpable, tactile; *-ութի* *s.* tangibility, palpability, tactility.

Ճօշափելիք, լեաց *s.* touch, feeling, hand. [to handle; to graze.

Ճօշափեմ, եցի *va.* to feel, to touch,

Ճօշափիւն S. Սօսափիւն.

Ճօշափող *s. geom.* tangent; -ական *a.* tangential; - զօրութիւն, tangential force; - կողմնացոյց, tangential compass.

Ճօշափութիւն, -ման *s.* touch, feeling, taction, handling, contact, grazing; կէտ շօշափման, point of contact.

Ճօշիմ *vn.* to be harassed, vexed, tormented.

Ո

Ո (*wo*) ոյ or ուօ *s.* the twenty fourth letter of the alphabet & the sixth of the vowels; ո, ո̅, six hundred; six hundredth.

— It is changed sometimes into օ & ա, for example: սիրող-սիրօղ, մորուք-մօրուք, քող-քօղ; մոլոր-մոլար, խոհարար-խահարար, փողփողեալ-փաղփաղեալ, ընդոծին-ընդածին.

Ո, ոյր, ում. ոյք, ոյց *pron.* who, which; ո՞, ո՞ ոք, who? ո՞ ի ձէնջ իշխեսցէ առնել զայդ, who among you dare do that? ո՞ ոք ի մարդկանէ, who is he that ...? գիտեմ ո՛ է դա, I know who he is; ո՛ ոք եւ իցէ, whoever he may be; ո՞յր է մատեանս, whose book is this? զո՞ խնդրէք, whom do you seek? ո՞յր ես, who are you for? ո՞ւմ ասացեր, to whom have you spoken? ո՞ գիտէ, who knows? ո՞յք ոմանք իցեն, who are they who ...? ո՞ւմ ի կապելոց, to which of the prisoners? յո՞ւմ անձին, on which person? ո՞յք եմք, who are we? յո՞ երթաս, where? where are you going?

Ո՛, ո՛ ո՛ *int.* o! oh! ah! ո՛ ո՛ փախերուք, hollo there! run away! save yourselves! out of the way! ո՜ մեծի մարդասիրութեան Այ, oh the great mercy of God! ո՜ զարմանալի իրս, what wandrous thing is this! ո՛. այրն այն յիմարեալ է, look, that man has gone mad; ո՜ ստութեդ, ah! what a surprising falsehood, imposture is yours!

Ոբոլոս, ի *s. Gr. w.* obole, obolus.

Ոգեբերիմ *vn.* to recover one's breath or strength; -թախանձ *a.* anxious, eager; -թափ լինիմ *vn.* to be emaciated, exhausted; to wear oneself out; -լից *a.* spirituous; -խառնիմ, նեցայ *vn.* to be of one heart & one mind; -խառնութի *s.* union of soul, great attachment; -ծնութիւն *s.* creation or animation; -կան *a.* spiritual; -կիր S. Հոգեկիր; -կործան *a.* soul-destroying; broken in spirit, disheartened, disconsolate, despairing; -կորոյս S. Հոգեկորոյս; -հաշմ *a.* infatuated, foolish, stupid. [to say; to sing.

Ոգեմ, եցի *vn.* to utter, to pronounce,

Ոգեշահ, -շնորհ, -շունչ S. Հոգեշահ, &c.; -չափ *s.* spirit-gauge; -պահ *a.* life sustaining; *s.* necessary food, scarce food; -պահանջ *a.* requiring back life; depriving of life; mortal; -պարտ լինիմ *vn.* to be guilty of blood; -սէր S. Հոգեսէր; -սիրութի *s.* love of life; self-love; -սպան *a.* soul-depraving; -սպառ *a.* out of breath; exanimate, half-dead; *fig.* knocking down, killing; -վար, -վարիմ S. Հոգեվար, լինել ի -ս; -ւոր, &c. S. Հոգեւոր, &c.

Ոգի, ոգւոյ *s.* spirit; spirit, soul, ghost; breath, respiration; spirit, meaning, sense; genius; manes, shades, ghost, hobgoblin; life; heart; soul, energy, courage; puff, air, wind: die, dice; *chem.* spirits; - գինւոյ, spirit of wine, alcohol; S. Հոգի; - բանական, intelligence, reason; -ք խաւարի, the spirits of darkness; - կենդանութե, spirit of life; կենդանական -ք, animal spirits; -նախանձու, the spirit of jealousy; ոգւով չափ, with all one's soul, heartily, willingly; - առնուլ, կլանել, to breathe, to take breath, to breathe freely, to respire; to rest, to take repose, to revive, to acquire new strength or vigor; յ-ս ապաստան լինել, to be extremely downcast, depressed, prostrated, to be tormented; S. Ապաստան; յ-ս ապաստան առնել, to reduce to the last extremity; to exhaust, to harass, to vex; յոգւոցն պարզել ապաստան լինել, to be at the last extremity, near the last breath, to be dying; թափել զ- ուրուք, to keep in suspense; հարկանել զոք յ-, to sting, to gall to the quick; to deprive of life, to kill; դնել զ- ի ձեռին or ի բռին, զ- ի բռին ունել, to endanger oneself, to risk, brave or face death, to risk, expose or hazard one's life, to lavish or to be prodigal of life; յոգւոց ելանել, հանել, to sigh, to heave sighs; to groan; ոգւով չափ սիրել, to love to distraction; խռովիլ յ- իւր, to be disconcerted, perturbed or disturbed; գիտել յ- իւր, to know within oneself; արձակել, հանել, փչել զ-, to yield or give up the ghost, to breathe one's last, to expire; յոգւոցն ցամաքել, to die; տալ - կամ շունչ ի վէմս կճեայս, to give spirit or life to marble; ոգւով երգել, to sing with great expression; յ- խաղալ, to play at dice; եւ դարձաւ - իւր առ ինքն, his spirits returned, his strength revived; հաստատեցաւ -նր, he regained strength or vigor; քաղէին -ք նր, he fainted or swooned; դուն գործեալ ոգւովք չափ, risking his life; -ն էր դաւոյն, he was the soul of the conspiracy.

Ոգիակողմն s. seat of the soul.

Ոգորիմ, եցայ vn. to brandish the horns, to butt with the horns; to butt, to run against, to contend, to fight, to come to blows, to make war; ը̄ անձին -, to contend with oneself.

Ոդէոն, ի s. odeum (theatre).

Ոդիսական a. of Ulysses; s. Odyssey.

Ո՛ եւ պէս a. whoever it may be.

Ոզնի, նւոյ s. hedge-hog; - մեծ, porcupine; - ծովու, echinus marinus, sea-urchin, sea-egg; ձագ ոզնւոյ, hedge-pig. [walnut-husk.

*Ոզոխ s. green outer shell of walnut,

Ոզոր s. wicker, osier; osier-band, straw-band; -աձեծ առնեմ va. to strike with rods or osiers, to whip, to flog; -ահիւս a. woven of osiers.

Ոզորի s. water-willow, osier.

*Ոզրեմ, եցի va. to pinch.

Ոլեռն S. Ոլոռն.

Ոլիմպիադ, &c. S. Ողոմպիադ.

Ոլոռն, ռան. ռունք s. pea; chick peas; grain; globule: wood-worm, beetle; - -, drop by drop; պատիճ կամ կեղեւ ոլեռան, peascod, pea-shell; նմանք են միմեանց իբր հատք ոլոռանց, they are as like as two peas.

Ոլոռնաձեւ a. pea-shaped, round, spherical. [to grow round.

Ոլոռնանամ, ացայ vn. to conglobe,

Ոլոր, ից s. twisting, contortion, tension; intensity, force, stress; tresses; -ք բարեկամութեան, ties of friendship.

Ոլորաբոյս s. bot. spiræa or diosma; - կնձնային, ulmaria, dropwort.

Ոլորածոյ a. entangled, twisted; -գիծ geom. spire.

Ոլորակ, աց s. S. Ոլոր; flexion of voice, accent; gr. the acute ՛ grave ՝ circumflex ՞ accents; mus. tone; a note (՞); - աւագ, mode major; -կրտսեր, minor tune.

Ոլորան, աց s. S. Մամուլ; mech. peritrochium, lathe, axle-tree, wheel & axle, winch, windlass, crab, capstan; - ատամնաւոր, gear, wheel-gear, catching; - տարբերական, differential capstan.

Ոլորեմ, եցի va. to entwine, to twist, to twine, to wreathe, to braid, to plait; fig. to plot, to hatch, to frame.

Ոլորումն s. S. Ոլոր; mech. torsion.

Ոլորտ s. spire; -ագիծ s. spiral line; -աձեւ a. spiral, winding; -անամ, ացայ vn. to be circumscribed, bounded, limited; -անիւ s. mech. turbine, tube-wheel, horizontal water-wheel; -ապտոյտ a. winding, sinuous, meandering; -ացուցանեմ va. to circumscribe, to bound, to limit.

Ոլորտք, տից s. bounds, limits, extremities; ring, circuit, circumvolution; - երկրի, the universe; - երկնից, airy space, the vault of heaven; - բանից, ambages, circumlocution, tricks; ը̄ -ս մտանել (թռչնոց), to fly about or round; to flap, to flutter in the wind, to wheel about; * to turn on one's hands & feet like a wheel, to tumble, to fall head over heels, to turn a somerset. [bone.

Ոլոք, աց s. fibula, perone, shin-

Ոխ, ի. -ք, ից s. rancour, inveterate hatred, resentment, concealed hate; -ս ունել ը̄ ումեք, -ս պահել ումեք, -ս ի մտի ունել, to harbour resentment, to hate, to owe or bear a grudge, to have a grudge or spite against, to bear malice or ill-will; S. Մթերեմ.

Ոխաթափ լինիմ vn. to give vent to one's wrath, to discharge or vent one's rancour, to revenge oneself.

Ոխակալ, *աց* *a.* spiteful, rancorous, malevolent, outrageous, malicious, harbouring hate, revengeful; – *լինել*, to nourish hate; *–ութիւն* *s.* harbouring revenge, hatred, rancour.

Ոխալ, **Ոխանալ**, *ացայ* *vn.* to devise, to foment hatred; to resent an injury, to be resentful, bitter, hating.

Ոխապահ S. **Ոխակալ**.

Ոխացուցանել *va.* to create, to excite rancour, to exasperate, to provoke to enmity.

Ոխերիմ, **Ոխորիմ** *a.* nursing rancour, wrathful, rabid, furious, cruel, relentless; ill-natured, malevolent; – *թշնամի*, a sworn enemy, a mortal, declared, implacable or inexorable enemy; *fig.* arch-enemy, the devil; – *պատերազմ*, an obstinate, bloody battle; *ոխորիմք* *s.* antagonists or adversaries in a game. [anger, indignation.

Ոխութիւն *s.* S. **Ոխ**; revenge; wrath,

Ո՛հ *int.* alas! oh! ah! o! *վայեաց եւ ասէ, ո՛հ տէր*, he cried out & said, oh! my Lord! *ո՛հ ինձ տէր*, ah! oh! alas, oh dear! woe is me! *ո՛հ անմտութեան, ո՛հ կուրութեան*, oh what folly! oh what blindness! *ո՛հ եւ աւաղ աւուրն այնորիկ*, oh dreadful day! *ո՛հ հովիւք*, woe to the shepherds! *ո՛հ մոլորութիւն, ո՛հ յիմարութիւն*, oh what a mistake! what nonsense! *ո՛հ թէ*, would to God! *ո՛հ ո՛հ*, ha! ha! *ո՛հ ո՛հ օր*, woe, woe to the day!

Ողբ, *ոց* *s.* lamentation, complaint, groaning, wailing, moans, tears; *-ք*, elegy; *-ս առնուլ, յօրինել, զ-ս հարկանել* S. **Ողբամ**.

Ողբագին, *-լի* or *լից* *a.* lamentable, deplorable, plaintive; tragical; *ad.* lamentably, plaintively; *-կան* *a.* plaintive, sad, mournful; *-կից* *a.* condoling, deploring with another; *-կցիմ, եցայ* *vn.* to weep, to deplore or lament together; *-ձայն* *a.* plaintive; *ad.* with a lamentable tone; *s.* lamentation.

Ողբամ, *ացի* or *ցայ* *vna.* to lament, to bewail, to groan, to complain, to weep, to deplore; to wear mourning; *ողբա՛մ զքեզ Հայոց Տ՟, ողբամ զքեզ հանուրց հիւսիսականաց վեհագոյն*, I mourn for you, Armenia! I mourn for you, oh chief among the nations of the North!

Ողբերգակ, *աց* *a.* singing plaintively; *s.* singer of laments; tragedian, tragic author; *-ան* *a.* tragical.

Ողբերգել *va.* to sing in a plaintive voice, in a lamentable tone, to deplore, to lament; to compose a dirge, an elegy or a tragedy. [tragedy; elegy.

Ողբերգութիւն *s.* plaintive song, dirge;

Ողբերգէն *ad.* lamentably, plaintively.

Ողբէլալիք *s.* cries & tears.

Ողբումն *s.* cry, weeping, lamentation, complaint.

***Ողիկ ողիկ գամ** S. **Ողողանամ**.

Ողիմպիադ S. **Ողոմպիադ**.

Ողիմպոս, **Ողիւմբոս**, **Ոլիմպոս**, *ի* *s.* Olympus; heaven. [grapes.

Ողկոյզ, *ուզից* or *զաց* *s.* bunch of

Ողկուզաբեր, *-բոյծ* *a.* bearing or producing bunches of grapes; *-զարդ* *a.* furnished, adorned with bunches; *-լից* *a.* full of bunches; *-կան թթուուտ* *s.* *chem.* racemic acid; *-ւոր* *a.* loaded with clusters.

• **Ողկուզուկ** *s.* small bunch of grapes; *bot.* artemisia, mug- or moth-wort; goose-foot, botrys. [bunches.

Ողկուզօրէն *ad.* in clusters, in

Ողն, *ողին. ողունք, ողանց* *s.* spine, back-bone; chine, back; spinal marrow; – *նաւին*, deck of a ship; – *երկնի*, the highest heaven; *ողունք երկրի*, precipice, declivity; mountains; *բեկանել զ–*, to break the spine, to chine; – *անկանել*, to lie down, to lay oneself down, to stretch one's limbs; *fig.* to neglect, not to care for; *յ– երթալ*, to stretch oneself; to stretch out one's arms (in yawning or awaking); *յ– կալ*. to stand erect, to draw oneself up; *fig.* to grow proud; to become rebellious; *խստացուցանել զ–*, to stiffen one's neck, to be proud, stubborn, contumacious; – *առնուլ*, to lean against; *fig.* to find support; – *առնուլ ի վշտաց*, to breathe from one's troubles, to repose from care or affliction; – *բեկանիլ*, to sprain or break one's back or neck; *fig.* to end in smoke; to become discouraged, disheartened, desponding, to droop.

Ողնաբեկ *a.* brokenbacked, hipshot; *-յար*, *-ղար*, *ի* *s.* vertebra; spinal marrow; *-յար տանց*, beams; roof; *-ւոր* *a.* vertebrated; *-փայտ* *s.* keel, ship's bottom; *fig.* ship; Holy Cross.

Ողնդժնեայ *a.* headstrong, doggedly tenacious, pertinacious, obstinate.

Ողնիմ, եցայ *vn.* to be curved backwards.

Ողնոյց *s.* roof, top of a house.

Ողնուլար *s.* crupper.

Ողնուց *s.* skeleton or carcass of a ship.

Ողնատեռ *s.* galling on a horse's back, scratch on the withers, excoriation; *a.* wither-wrung, galled.

Ողոգոմեան, ենի *s. Gr. w.* Palm-Sunday.

Ողող *s.* inundation; alluvion.

Ողողակ *a.* immersed or submerged; *s.* diver; -ան *a.* alluvial, alluvious; -անն *s.* alluvion.

Ողողանամ, ացայ *vn.* to weep bitterly, to shed a shower of tears; to scream, to screech, to shriek.

Ողողանեմ, **Ողողեմ**, եցի *va.* to inundate, to cover with water; to immerse, to plunge, to dive; to rinse, to wash; -իմ *vn.* to be inundated; plunged in, immersed; - յանձրեւոյ, to be soaked through by the rain.

Ողողանիմ S. **Ողողանամ**.

Ողողանք *s.* effusion: shriek, loud scream, tears.

Ողողիչ *a.* inundating; bathing, immersing.

Ողողումն *s.* inundation, submersion; rinsing.

Ողոմպիադ, աց *s.* olympiad; -պիական *a.* olympic.

Ողորդ *a.* right; S. **Ուղղորդ**.

Ողորկ, ոց *a.* sleek, glossy, smooth, terse, polished; level, plane; *fig.* refined, sweet, affable, agreeable; artful, cunning, crafty; elegant, polite.

Ողորկաբանութիւն *s.* smoothness of speech, elegance of expression, eloquent language; -բար *ad.* smoothly; -կեղեւ *a.* smooth-barked; -յօն *a.* smooth-browed.

Ողորկանք *s.* polishing, smoothing, furbishing, burnishing.

Ողորկապատեան *a.* provided with a smooth or even shell; *s.* mollusk.

Ողորկարան *s.* sleeking-place.

Ողորկատարր *a.* smooth trunked; -տեսակ, սիկ or սիլ *a.* smooth, glossy, bright; -քար *a.* of cut stone.

Ողորկեմ, եցի *va.* to smooth, to level, to plane; to curry, to polish, to set a gloss upon, to make smooth or polished; to smoothen; to iron, to hot-press, to satin; S. **Ճողոմեմ**.

Ողորկիչ *s.* polisher.

Ողորկութիւն *s.* smoothness, polish, sleekness, glossiness; softness; delicacy.

Ողորմ, ոյ, ով *s.* pity, compassion; *a.* pity-stirring, piteous, pitiable, moving, touching, miserable, unhappy, unfortunate, sad, deplorable, dismal; -, -ս, - - *ad.* touchingly, humbly, in a suppliant manner; miserably, piteously, pitiably, deplorably, lamentably; compassionately; - խօսել, to speak pitifully or deplorably; յաղերս եւ յ- խոնարհեցուցանել, to touch, to excite or move to compassion, to inspire pity; անկցի - իմ առաջի քո, have compassion on me! have mercy on me!

Ողորմաբար S. **Ողորմ** *ad.*

Ողորմագին S. **Ողորմ** *a. ad.*

Ողորմած, աց *a.* merciful, charitable, compassionate; -ութի *s.* mercy, charity, clemency, pity, compassion; charity, alms, almsgiving, goodness; գործք -թէ, good deed.

Ողորմանք S. **Ողորմութիւն**.

Ողորմեաց, եցի *s.* The Miserere & its hymn (Armenian divine service).

Ողորմելի *a.* miserable, unhappy, poor, piteous, pitiable.

Ողորմիմ, եցայ *vn.* to take pity or compassion on, to commiserate, to be affected, moved to pity, to feel for, to sympathize with; to do good to, to benefit; ողորմիմ քեզ, I pity you.

Ողորմութիւն *s.* pity, mercy; alms, charity; - առնել, տալ, to give alms.

Ողորմուկս արկանեմ *va.* to excite to commiseration by loud laments, to touch with pity, to move.

Ողոց *s.* end of a fishing net.

***Ողուն** *s.* mill-funnel; spout of a mill-hopper.

Ողոք, ոյ, ով *s.* supplication, petition, entreaty, instance; insinuation, persuasion; *a.* suppliant, beseeching, mild, humble, insinuating, persuasive, attractive, fawning; -ով *ad.* softly, humbly, kindly; յ- ածել, to persuade, to soften, to affect; յ- անկանել, գեգերել, to supplicate, to beg humbly, to entreat, to pray earnestly.

Ողոքական S. **Ողոք** *a.*

Ողոքանք *s.* supplication, humble prayer, instance; softness, kind things, soft words, blarney; attraction, insinuation, persuasion; fondling, caress, cajoling, coaxing, fulsome flattery, adulation.

Ողոքաւոր *a.* suppliant; flattering.

Ողոքեմ, եցի *va.* to supplicate, to persuade mildly; to soften, to calm, to appease; to touch, to move to pity;

to fawn upon, to toady, to flatter.

Ողոքիչ S. Ողոքաւոր.

Ողոքումն S. Ողոքանք.

Ողջ, ոյ or այ *a.* alive, living; sound, safe; complete, entire, integral; wholesome; uninterrupted; – – *ad.* alive, all alive; altogether; – բովանդակ. wholly, entirely; – եկիր! welcome! you are welcome; – լեր or եր, keep yourself hearty; God speed you, good bye! – լեր Վարդապետ, hail Master! – լեր Թագուհի, Salve Regina! hail Mary! – երթ, go in peace, adieu, farewell; – մնասցեն, let them go to the devil; – մնա՛, adieu, take care of yourself, my kind wishes.

Ողջաբանութիւն *s.* the whole of a discourse; * sound doctrine; –բար *ad.* entirely, perfectly, wholly; –գուրանք *s.* embrace, embracing, clasping; –գուրեմ, եցի *va.* to receive lovingly, to embrace, to kiss; –խոհ, այ or ից *a.* thinking soundly, wise, sensible, judicious; chaste, modest, coy, maidenly, pure, honest; – միտք, good sense, honesty, plain-dealing; –խոհաբար *ad.* soundly; honestly, modestly, chastely; –խոհանամ, ացայ *vn.* to be in one's right senses; to be chaste, to observe chastity; –խոհացուցանեմ *va.* to render chaste, modest, sober, prudent, wise; –խոհութիւն *s.* sound judgment, wisdom, sagacity, good sense; chastity, pudicity, temperance, continence, modesty, sobriety, honesty; –խորհուրդ *a.* right-minded, sincere, frank, upright; –կէզ, կիզաց *s.* burnt offering, holocaust, sacrifice; –կիզեմ *va.* to offer a burnt offering, to sacrifice; –կիզութիւն or ումն *s.* offering a holocaust; –հաւատ *a.* orthodox.

Ողջամբ *ad.* safe & sound, soundly, safely, safe; quite, totally, entirely, completely; – դառնալ, հասանել, to return, to arrive safe; – եկիր, – տեսի զքեզ, you are welcome; երթ –, God keep you, God be with you, adieu!

Ողջամիտ *a.* right-minded, of sound judgment, in one's right senses, sensible, rational, reasonable, judicious; orthodox; – վարդապետութիւն, sound doctrine; – լինել, to be in one's right mind.

Ողջանամ, ացայ *vn.* to rocover one's health, to heal, to get cured of, to get well again.

Ողջանդամ *a.* perfect in body, sound in wind & limb; *ad.* safe & sound; entirely, wholly; –ութիւն *s.* perfection in all the members.

Ողջացուցանեմ *va.* to cure, to heal, to restore to health, to free from sickness or any harm; to complete, to render perfect; –ուցիչ *a.* healing, curative, balsamic. [salutation.

Ողջեգամ *vn.* to salute; *s.* salute,

Ողջընծայ S. Ողջակէզ.

Ողջիկ *ad.* entirely, wholly.

Ողջմտութիւն *s.* rightmindedness, good judgment, reasoning; rectitude, justice, sincerity, loyalty, probity; –թբ *ad.* soundly, sensibly.

*Ողջնութիւն *s.* health, toast.

Ողջոյն, ունի *s.* salute, salutation, greeting, compliments, kind regards; health, state of salubrity; – հրաժարական, leave-taking, adieu, farewell; – տալ, to salute; to compliment; հարցանել զողջունէ, տեսանել զ– ուրուք, to salute affectionately, with kind expressions; հարցանել զողջունէ ուրուք, to ask news of; տալ – հրաժարական, to take leave; to say good bye, farewell; –, – քեզ, – ը քեզ! good morning! good day! – իցէ քեզ? how do you do? how are you? – է, very well; – է քեզ? is all well with you? – է? do you bring good news? – է, health, peace, prosperity; – քեզ տունդ իմ սիրելի, – քեզ երկիր ծննդեան, – ! fare well sweet home! adieu my native land! adieu! [tirely, wholly, completely.

Ողջոյն *a.* all, entire, whole; *ad.* en-

Ողջութիւն *s.* health, good health, soundness of body; –թբ *ad.* safe & sound; peacefully.

Ողջունաբեր *a.* bearing a salutation or good news; – թուղթ, letter, epistle; –գիր *s.* letter of compliments; –լի, –կան *a.* of salutation, of compliments; –պատում *a.* narrating, telling good news; –տուութիւն *s.* salutation; –րան *s.* drawing-room, saloon; –ցոյց թուղթ S. Ողջունագիր.

Ողջունեմ, եցի *va.* to salute, to compliment; – ի հանգիստ ս̄բց առաքելոցն, to visit the sepulchres of the holy Apostles.

Ոճ, ոյ, ով *s.* style; phrase; method, system, formula; rank, order, manner, fashion, form; behaviour, conduct; dogma, doctrine: culm or stalk of gramineous plants: pannier, basket; *bot.* S. Բաղչասակ ; acre (measure of lands); ոճով *ad.* methodically; distinctly, precisely; continuously, in detail; suitably, properly, to the purpose; նովին ոճով, in the same style; – լեզուաց, the character or genius of a language; – ս̃բ Գրոց, language of the Scriptures; ճեմական, բանաստեղծական, ճարտասանական, արձանական, գոթայի, լակոնական, մարոտեան, մեղրածորան ոճ, academical, poetical, oratorical, lapidary, gothic, laconic, marotic, mellifluent or honied style; բարձր, վսեմ, վայելուչ, յարդարուն, պարզ, կորովի, քաղցր, հեշտ, բարեխառն ոճ, elevated or high, sublime, elegant, florid, simple, nervous, mellifluous, fluent or easy, temperate or moderate manner or style; ընտանի, կատակաբան, երկայնաբան, անհարթ, խիստ, թոյլ or տկար ոճ, familiar, burlesque, prolix or diffuse, harsh or rough, hard, languishing style; մաքրել զոճ, to purify, to refine the style; յոճ եւ ի կարգ մուծանել, to reduce to method, to put in order; ոճով մանր հայել, to fix, to rivet the attention; մանգաղ արկանել յոճ ընկերին, to put a sickle unto one's neighbour's standing corn; գարին յոճ կայր, the barley was green.

Ոճիր, ք, ս *s.* crime, guilt, criminal attempt, misdeed, villany, felony, ribaldry, vile wickedness; *a.* wicked, guilty, criminal; – եղեռան, crime; –ք ապիրատութե, excess; ածել յ–ս, to
[carry to excess.

***Ոճորք** S. Ձեղուն.

Ոճրագործ, աց *s.* scelerate, felon, villain, wretch; *a.* facinorous, ribald, flagitious, nefarious, profligate, felonious; –ութիւն *s.* villany, abomination, misdeed, impiety, profligacy, flagitiousness, execrable conduct, horrible crime.
[cave.

Ոմբոլոն *s. Gr.w.* subterranean, vault,

Ոմն, ուրումն, ումեմն· ոմանք, ոմանց *pron.* some, certain, some one, one; այր –, a man; կին – անուն Մարգարիտ, a woman named Margaret; ոմն քաղցեալ եւ ոմն արբեալ, one is dying of hunger while another is drunk; ոմանք մեծատունք եւ ոմանք աղքատք, some are rich & others poor; ցրուեցան ոմն յայս եւ ոմն յայն կոյս, they are scattered here & there; ոմանս տեսի անցանել ը̅ գետն, ոմանք ի լող, եւ ոմանք ի նաւակի, I saw several crossing the river, some swimming, others in a boat.

Ոմփորոն S. Եմփորոն.

Ո՛յ *int.* oh! what pain!

Ոյժ, ուժոյ or ժի *s.* force, strength, power, vigour, energy, virtue, valour; effort; weight; յուժոյ *ad.* strongly, vigorously; – տալ, to force, to make efforts; to give power, to authorize, to favour; – առնուլ, to gather strength; նոր – առնուլ, to gain new strength, to recover one's strength; յուժի լինել, to be in full vigour, in the prime of strength; անկանել յուժոյ, to feel one's strength failing, to lose strength, to become weakened or enervated; S. Թափեմ.

Ոյծ *a.* cold; *ad.* apart, aside; –ք *s.* hiatus, gap, chasm; *fig.* coldness.

Ոյն, ք *s.* habit, disposition; valour, strength.

Ոչոգի *a. ad.* apart, separately.

